



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3026

ԽՆԴԻՐՔ

ՅԱՂԱԳՍ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

«Քան թե սազոնիկէի մէջ եղողներն ազնուագոյն
էին ասոնք, . . . եւ ամէն օր կը քննէին
զԳիրս թէ այս բաներն այսպէ՞ս են :»
Գործ . ԺԷ . 11 :

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Ա. Մ. Իգնատիոսեանի՝ քարոզ—Էրիցու,
Մարգ—Աւանի

معارف عمومیہ نظارت جلیله سنک ہ جادی الاول ۳۰۳ و ۲۸
کانون ثانی ۳۰۱ تاریخیتی و ۱۰۲۴ نمرونی رخصتنامہ سیلہ طبع اولنشد

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒՐ ՊՕՅԱՆԵԱՆ

1886

265

Ի - 19

2010

B 2001

MA

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

huf

10054

Արմ.
12-66642

265

h-19

ԽՆԴԻՐՔ

ՅԱՂԱԳՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

«Բան թեսաղոնիկէի մէջ եղողներն աղնուազոյն
էին ասոնք, . . . եւ ամէն օր կը քննէին
զԳիւրս թէ այս բաններն այսպէ՞ս են :»
Գործ . Ժէ . 11 :

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Ա. Մ. Իգնատիոսեանի՝ քարոզ—Էրիցոս
Մարգ—Աւանի

معارف عمومیہ نظارت جلیہ سنک ہ جاذی الاول ۳۰۳ و ۲۸
کانون ثانی ۳۰۱ تاریخلی و ۱۰۲۴ نمولی رخصتنامه سیلہ طبع اولنشد

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈՒԲ ՊՅԱՆՃԵԱՆ

1886

Պ. Պ. 21465



21465

Գործ 11

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԻՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ


44892 - ա. հ.



29643-63

ԽՆԴԻՐՔ

ՅԱՂԱԳՍ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ



Ա. Նշանակութեան բառի հարստութեան

1. Բառից դործածութիւնը յառաջ են քան զբառարանս, որք դործածութեան նայելով կ'որոշեն բառից նշանակութիւններն: Շատ բառեր տարբեր դարուց մէջ և ի տարբեր դասու հեղինակաց այլիմաստ կը դործածուին: Այսպիսի են մանաւանդ - Յունարէն շատ մը բառեր ի նոր կտակարանի, ուր հեթանոս լեզու մը և բառք դործածուեցան ի բացատրել գաղափարս Հրէից, նուիրական ժողովրդեան, որ հրահանգեալ էր վարդապետութեամբ և օրինօք Աստուածային յայտնութեան: Ուստի փոխան դիմելու բառարանաց և Յոյն մատենագրութեան, լաւ ևս է ուսումնասիրել նոյն ինքն Ս. Գիրքը առ ի որոշել նշանակութեան բառի մկրտութեան:

2. Արդ՝ Յունարէն բառը Լ-իօ, որ երբեմն կը թարգմանուի հրէէ, բայց ուրիշ նշանակութիւններ ևս ունի, նոր կտակարանին մէջ յիշուած է չորս անգ. (Ս) Մարկ. Է. 4, ուր գրա-

բար թարգմանուած է *Գրք. Ե. Եթէ ոչ նախ մկրտիցին ոչ ուտեն :*” Բայց աշխարհաբար թարգմանուած է *Լուսն. Եթէ չլուացուին, չեն ուտեր :*” Եւ յայանի է թէ հոս այն Յու նարէն բառը ջուրին մէջ ընկղմիլ նշանակու թեամբ չգործածուիր, այլ միայն լուացուիլ նշանակութեամբ : Տես նաև Ղուկ. ԺԱ. 38 :

(Բ) Ղուկ. ԺԶ. 24, ուր նոյն բառը գրաբար թարգմանուած է *Լուսն. Առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր :*” Եւ աշխարհաբար՝ *Լուսն. Եթէ զՂազարոս, որ թաթխէ իւր մատին ծայրն ի ջուր :*”

(Գ) Յովհ. ԺԳ. 26, ուր գրաբար թարգմանուած է *Լուսն. Ես թացից զպատառն և տաց. և թացեալ զպատառն տայ Յուդայի :*” Եւ աշխարհաբար՝ *Լուսն. Պատառը թրջելով կու տամ, և թրջելով պատառը տուաւ . . . Յուդայի :*”

(Դ) Յայտ. ԺԹ. 13, ուր գրաբար թարգմանուած է *Լուսն. Զանդերձ ներկեալ արեամբ :*” Եւ աշխարհաբար՝ *Նոյնպէս. Զանդերձ արեամբ ներկուած :*” Եւ այս առնուած է Ես. ԿԳ. 1—3 համարներէն :

Այս նոյն Յունարէն *Լուսն. Ես նշանակութիւն տալով կ'ըսուի գրաբարին մէջ (Դան. Գ. 33) «ի ցողոյ երկնից մարմին նորա (Նաբուգոդոնոսորայ) ներկաւ,*” որ է բառա-

կան նշանակութիւն Եսթանանից թարգմանութեան : Եւ աշխարհաբար՝ *«Անոր մարմինը երկնից ցողով կը թրջուէր :*”

3. *Վարդ. Ե. 3* Յունարէն բառն ևս որ *Լուսն. Ես նշանակուած է, չորս անգամ գործածուած է ի նոր կտակարանի : Եբր. Զ. 2, ուր թէ՛ գրաբար և թէ՛ աշխարհաբար թարգմանուած է *Գրք. Ե. Եթէ չլուացուին, չեն ուտեր :*” *Մկրտութեանցն վարդապետութեան.*” *Մկրտութիւններուն վարդապետութեան :*”*

Մարկ. Ե. 8, ուր գրաբար թարգմանուած է *Գրք. Ե. Եթէ չլուացուին, չեն ուտեր :*” *Մկրտութիւնս ստոմանաց և բաժակաց.*” և աշխարհաբար՝ *Լուսն. «Ստոմաններու և բաժակներու լուացմունք :*”

Եբր. Թ. 10, ուր նոյնպէս գրաբար թարգմանուած է *Գրք. Ե. Եթէ չլուացուին, չեն ուտեր :*” *Պէսպէս մկրտութիւնը.*” և աշխարհաբար՝ *Լուսն. «Պէսպէս լուացմամբ ք :*”

Այս *«պէսպէս մկրտութիւնը»* կամ լուացմունք են պէսպէս արարողութիւնը մաքրութեան ըստ Ղևտական օրինաց : Այս Հրէական մկրտութեանց ոմանց կերպերն բացատրեալ կան Թու. ԺԹ. 7—21 համարներուն մէջ, ուր կ'ըսուի, թէ *«Բահանան իր հանդերձները ու իր մարմինը ջրով (կամ ի ջուր) պիտի լուայ . . . երկնից մարմինը . . . պիտի պահուի, . . . մաքրութեան ջուր ըլլալու, . . . անոր վրայ մաք-*

բութեան շուր չարսկուելուն համար՝ անիկա անմաքուր է : . . . մաքուր մարդ մը զոպայ (աւել) պիտի առնէ և այն շուրը խոթէ, և վրանին վրայ ու բոլոր ամաններուն վրայ և հոն եղած մարդոց վրայ . . . պիտի սրսկէ : . . . անոր վրայ մաքրութեան շուր չարսկուեցաւ, անիկա անմաքուր է :” Դարձեալ Թու. Ը. 7 : “Մաքրութեան շուր սրսկես անոնց վրայ :” Նաև Թու. ԼՍ. 23. “Սկէն կրակը մանելու բան՝ կրակէ անցընէք և մաքուր պիտի ըլլայ, . . . սակայն կրակ չմանող ամէն բան շուրէ անցընէք :” Ըստ այսմ Հրէից ոմանք “իրենց զաւակներն կրակէ անցուցին,” մկրտեցին, երբ դարձան կռոց, որոց կը նուիրէին զորդիս : Սպա Ս. Գրոց այս բացատրութիւններն մանաւանդ ունենալով, կրնայ որոշուիլ, թէ Յունարէն բնագրին մէջ գտնուող վերոյիշեալ լատին և լատինից բառերը կը նշանակեն տեղ տեղ մկրտել, թանալ, թաթխել, ներկել կամ գունաւորել որ և իցէ եղանակաւ ընկղման սրսկման և հեղման :

4. Եւ ապաքէն մկրտել բայի «*μύω*» ներէ շինուած բառեր, որ ի Նոր Կտակարանի 120 մը կ'ըլլան, ոմանք ընկղմել կրնան հասկցուիլ, այլ ոմանք ոչ երբէք. ինչպէս և ոմանք մին կամ միւսը : (Ս.) Ընկղմել կրնան հասկցուիլ. Մատթ. Գ. 16 : Գործ. Ը. 38, 39 : Երբ «*βί-*

տուս մկրտեցաւ իսկայն դուրս ելաւ շուրէն :” «*Երկուքեան իջան շուրը . . . և մկրտեց զնա :*” Սակայն և այնպէս վճռական չեն այս տեղիք, թէ մկրտեալք շրոյ մէջ ընկղմեցան կամ թաղուեցան. զի հին պատկերներու մէջ Յիսուս նկարուած է իբրև մտած «*ի շուր*» Յորդանանու, զոր կը մկրտէ Յովհաննէս ձեռքով նորա վերայ շուր թափելով, որ է կերպ մը վայելուչ և հաւանական : Նաև յանապատի անդ, ուր ներքինին և ֆիլիպպոս «*իջին ի շուր*,” չկար, կարծուի թէ, այնպիսի շուր գէթ մէջը թաւալելը կամ թաղուելը չափ բաւական խոր. և թէ է (Յուն. է») նախդիրը, ըստ որում ջ նախդիրի գործածութիւնն ունի, հոս ալ կրնայ թարգմանուիլ «*ցձուր*» Ուսկից կրնայ հասկըցուիլ, թէ ներքինին «*հրամայեաց կացուցանել զկառան*» և ի կառաց կամ վեր տեղէ մը «*իջին ցձուր*» մինչև շուրը, ուր մկրտեց զնա. ապա «*ի շրոյ անտի ելին*» գէպ ի վեր կամ ի կառու : Ս. Եւ այս երկուքին դիպաց մէջ եթէ պէտք է հասկցուիլ, թէ մկրտեալք շուրի մէջ ընկղմեցան, կան սակայն, (Բ) կարգ մը տեղեր, որ երբէք չեն յարմարիր ընկղման կամ թաղման կերպի : Ինչպիսի է Ս. Կոր. Ս. 2, «*Մեր հայրերը ամէնքը ամպին տակն էին, ամէնքը անցան ծովէն և ամէնքը Մովսիսիւ մկրտուեցան ամպին ու ծովին մէջ*,” կամ ըստ

բնագրի, յամպն և ծովն, ամպով ու ծովով։ Այս անցքի ատեն ամպը խորայեղացւոց վրայ էր, որոյ մէջ երբէք չընկղմեցան, շուրերն ալ էին «ընդ աջմէ և ընդ ահեկէ իբրև զպարիսպ», որոյ մէջէն անցան որպէս թէ ցամաքով, և որոյ մէջ ընկղմելու երևոյթ չկայ. ընկղմեալք՝ թաղեալք «ի շուրս», եղիպտացիք էին, որք ոչ թէ մկրտուեցան հապա խեղդուեցան։ Նոյնպէս Գործ. Բ. 41, կը յիշուի մկրտութիւնն երից հազարաց յաւուր Պէնտէկոստէի, որոց պարագայք երբէք չեն յարմարիր թաղման կամ ընկղմելոյ։ Քանզի կանոն էր թէ, «Մաքրութեան» կամ մկրտութեան «շուրին դպչողը մինչև իրիկուն անմաքուր պիտի ըլլայ» (Թու. ԺԹ. 21), և մի քանի աննշան Գալիլեացիք, փարիսեցւոց և իշխանաց ասելի կուսակցութիւն մը իրենց հետևող բազմութեամբ իսկ, Պէնտէկոստէի պէս մեծ տօնի մը օրն, երուսաղիմայ նման անշուր քաղքի մը հասարակաց շուրերն պիտի չհամարձակէին դորձածութեան անյարմար ընել՝ ընկղմելով ի նոսա, մաքրութեան պէս արարողութեամբ մը։ (Գ.) Շատ մը տեղեր յիշուած «մկրտութիւն ի Հոգին սուրբ», «ի հուր», ասացուածն ալ կրնայ յաւէտ (Բ) կարգին վերաբերիլ քան (Ա) ոյն։

Յ. Աբրահամէ հետէ Հրէից մէն մի արունն էր Բարդուէր, ի նշան որդեգրութեան կամ ուխտադրութեան, որ էր մտանել Աստուծոյ ժողովրդեան, տեսանելի եկեղեցւոյ, մէջ, զոր Աստուած մասնաւոր խնամով կը պահպանէր և կը կրթէր։ Եթէ Հրեայ արու մը չընդունէր թլիատութիւն, «իւր ժողովուրդէն պիտի կորսուէր», այսպէս սակաւ միւս ևս Մովսէս իսկ պիտի կորսուէր վասն զանցառութեան թլիատութեան։ Ելից. Գ. 24։ Յետև ևս, նոյն իսկ ամենավտանգաւոր պարագայից մէջ, պարտաւորեցաւ թլիատել զանթլիատ խորայեղացիս՝ ծնեալս յանապատի անդ։ Յետ. Ե։ Անթըլփասն, ո՛վ ալ որ լինէր, իր «ժողովուրդէն կը կտրուէր» կը համարուէր «հեթանոսի պէս» ուստի և հեթանոսութենէ դարձողներն ի Հըրէութիւն, պարտէին թլիատուիլ հանդերձ ամենայն արու անդամօք տան, որոյ նախկին օրինակներն ունիմք։ Ծննդ. ԺԿ. և ԼԳ։ Եւ նախ քան զԲրիստոս Հրէից մէջ սովորական եղած էր, ըստ այսմ, ոչ միայն թլիատել նորեկն ի Հրէութիւն, այլ և Կրիստոս մաքրել և նուիրել։ Բաբելոնեան անու անեալ թալմուսան, որ գրուած է Բ. դարու վերջերն, «նորահասակասները չեն կրնար ընդունուիլ» (ի Հրէու-

թիւն) կ'ըսէ, «եթէ ոչ թրխատութեամբ, մկրտութեամբ, և արիւն ցանկերով: . . . Հրէութիւնն ընդունած չէ զոք մինչև որ չթրխատուի և չմկրտուի . . . քանզի մինչև որ չմկրտուի դեռ հեթանոս է նա:» Այսպէս կը հաստատէ և երուսաղիմայ թաւմուարը, որոյ գէթ օրինական մասը Գ. դարու մէջ գրեալ էր: Կիպրիանոս ևս, որ ծաղկեցաւ Գ. դարու մէջ, «Հրեայք», կ'ըսէ, նախ քան դժբիստոս «ունէին Մովսիսական և օրինական մկրտութիւն:»

6. Այսօր ևս Հրէայք եւ թրխատութեամբ, և մկրտութեամբ, հանդերձ տամբ, հեթանոսներն ընդունել ի Հրէութիւն: Այլ այս սովորութիւն, մկրտութիւն, առած չեն կրնար լինել ֆրիստոնեաներէ, զորս կ'ատէին, և ի ֆրիստոսէ՝ զոր բոլորովին մերժած էին. և պատմութիւնն աներկեան կը հաւատտէ թէ զայս սովորոյթ ունէին Հրեայք ի վաղուց: Ծաղկեալ ականաւոր Հրեայ մատենագիր մը, Մայմոնիտէս, որ և թաւմուտները սրբագրեց, «Սմէն դարու մէջ», կ'ըսէ, երբ հեթանոս մը կ'ուզէր լինել իսրայէլացի, «պէտք էր թրխատուի, մկրտուի, և ընծայ մը բերել. եթէ կին էր (միայն) մկրտուի և ընծայ մը բերել:» Ապաքէն Հրէից բնական իմն էր, ընդունել այս պիտի արարողութիւն մը հեռեկողութեամբ Մովսիսի օրինաց, ուր ամէն անմաքուր բան, որ

պիտիք էին և հեթանոսք, աննուէրք, լուայմամբ կամ մկրտութեամբ կը մաքրուէին: (Տես 3): Նա' թէ մաքրարար շնորհք Հոգւոյն Սրբոյ՝ ցուցուած էր օրինակաւ մաքուր ջուր սրսկելոյ: «Չեղ աղգերէն պիտի առնեմ (մինչև իսկ հեթանոսներն) . . . ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ, և պիտի մաքրուիք ձեր բոլոր պղծութիւններէն. ձեր բոլոր կուռքերէն ձեզ պիտի մաքրեմ. . . դուք ինծի ժողովուրդ պիտի ըլլաք, ես ալ ձեզի Աստուած պիտի ըլլամ:» Եզեկ. 1, 9: Այս «մաքրութեան» կամ մկրտութեան ի Հրեայս սովորական լինելն կ'երևի և Յովհ. Ա. 25 է, ուր վարիսեցիք չեն հարցուներ թէ ի՞նչ է այս մկրտութիւն, այլ թէ ինչո՞ւ կը մկրտես, քանի որ մարգարէն չես, կամ հեղինակութիւն մը չունիս: Գարձեալ, Յովհ. Գ. 25, Գ. 1, 2 համարներուն մէջ, Հրեայք «մկրտութեան» կամ «մաքրութեան» վրայ կը խօսին իբրև ի վաղուց իրենց ծանօթ արարողութիւն մը:

Գ. Միւրոսիւն Գովհաննէս Միրալէ

7. Թուի թէ Յովհաննէս Մկրտիչ հեռեկեցաւ սովորութեան Հրէից՝ ի մաքրելն՝ այսինքն ի մկրտելն անդ զանմաքուրս, Ս. Գրոց մէջ սորուած հրահանգութեանց համեմատ, ուր ապաշխարութեան համար կ'երևին աւարտութիւնս և միւրոսիւնս կամ լուայման: Որպիտի է Ես. Ա.

16, « Լուսացուեցէք մաքրուեցէք, իմ աչքերուս առջևէն ձեր չար գործերը մէկդի ըլլէք, չարութիւն գործելէ դադարեցէք. բարութիւն ընել սորվեցէք:» Ըստ այսմ սկսաւ ուսուցանել Յովհաննէս (Մատթ. Գ. 7—10: Ղուկ. Գ. 7—14) և «քարոզել ապաշխարութեան մկրտատութիւն ի թողութիւն մեղաց:» Մարկ. Ս. 4: Նորա այս մկրտութիւն, թերևս դերազանց էր քան զՀրէիցն կամ նորահաւատից, զի սոցայն արտաքին արարողութիւն ինչ էր, իսկ նորայն՝ և ներքին, պէտք էր բերել «պտուղ արժանի ապաշխարութեան:» Սակայն, կ'ըսէր, ստորնագոյն էր քան զՔրիստոսինն, որ պիտի մկրտէր «Հոգւով սրբով և հրով:»

8. Ի մկրտութեան Յովհաննու՝ ջրոյ քրքումն ինչ կէրպէս կամ եղանակը անորոյ է: Իւր մը կըրտութիւն կը բաղդատէր Քրիստոսինն հետ, որ պիտի կատարէր «Հոգւով սրբով և հրով,» որով Հրեայք պիտի իմանային խոստումներն, թէ «Իմ Հոգիս ամէն մարմնոյ վրայ պիտի թափեմ:» Յովհ. Բ. 28: Եւ «մինչև որ վերէն մեր վրայ Հոգի թափուի» (Ես. 1Բ. 15), որք պիտի կատարուէին ի ձեռն Մեսիայի, զոր ընդունել պատրաստ լինելու էին, և որոյ կրակէն պիտի անցնէին ու մաքրուէին, նուիրուէին և անորը լինէին: (Տես և 3): Սպա այս իմացողութենէ կը հետևի, հանգիստօրէն, թէ

ինչպէս Քրիստոսով Հոգին անոնց վրայ պիտի թափուէր, կամ կրակէ պիտի անցնէին, այսպէս և հաճախ ձեռն Յովհաննու, նորա դեսպանին, իրենց մատակարարուեցաւ մաքրութեան նշանը: Ըստ այսմ կը գտնենք թէ աշակերտք Յովհաննու՝ նորա մկրտութիւն կը համարէին «մաքրութիւն» ինչ (Յովհ. Գ. 25, 26), որ կրնար ըլլալ պէս պէս լուսացմամբ, սրսկմամբ և ընկղմամբ, ըստ թուոց ԺԹ ի:

9. Եւ ապաքէն «Գրքս ինչ ընդունել, թէ «Երուսաղէմ և բոլոր Հրէաստան և Յորդանանու բոլոր կողմերը (որ) կ'ելլէին անոր,» մի միայն ընկղմամբ «կը մկրտուէին անկէ Յորդանանու մէջ:» «Գրաբար՝ «ի Յորդանան.»» է նախդիրը որ բնագրին մէջ ևս կայ Յորդանան բառին վրայ, Յորդանանու ջրին մէջ կրնայ չնշանակել, այլ տեղը, Յորդանանու հովիտը, եզերքը, ամունքը, ուր (ոչ թէ ջրին մէջ)՝ «կը խոստովանէին իրենց մեղքերը:» Ինչպէս է և 13 համարը, որ կ'ըսէ թէ «Յիսուս Գալիլեայէ Յորդանան եկաւ,» ուր, ոչ թէ Յորդանանու ջրոյ մէջ, այլ ի հովտին կամ յամունս նորա երկար խօսակցութիւն մը տեղի ունեցաւ ընդ Յիսուս և ընդ Յովհաննէս: Կ'ըսուի թէ (Յովհ. Գ. 23) «Յովհաննէս ևս կը մկրտէր յԱյստոն՝ Սաղիմի մօտ, քանզի շատ ջուր կար հոն,» ասկէ չհետևել, սակայն, թէ այս շատ ջուրը պէտք էր

վասն ընկղման կամ թաղման մկրտելոյն : Յիսուս, ինչպէս կ'ըսուի անդ, «կը մկրտէր», այլ «չրէաստանի երկիրը կը կենար», ուր շատ առատ ջուրեր չկային : Նա՛ թէ լոկ ընկղմելու համար ի Յորդանան կամ յԱյնտն, շատ ջուրերու քով երթալ պէտք չէր, միակ աւազան մը շինել բաւ կրնար լինել : Այլ շատ ջուր եղած տեղ մը ընտրելոյն բանաւոր պատճառն կ'երևի լինել, թէ մեծ բաղնիք լին կու գային առ նա, և օրերով կը մնային առ ոտս Մկրտչին լսել ի նմանէ վասն Մեսիայի և զպատրաստութենէ իւրեանց . ուստի իրենց, և իրենց առնանոց խմելու, ու այլևայլ լուսացմանց համար շատ ջուր պէտք էր : Մանաւանդ թէ «մեռեալ» լճացեալ ջուր՝ անմտքուր էր, «կենդանի» վազուն ջուր պէտք էր : Ուստի օրինապահն Յովհաննէս այս ամէն պարագայից պատկան տեղեր կ'ընտրէր, և այն ի պատճառս ծիսասէր փարիսեցոց, որ քացախի մթղուկն իսկ կը քամէին զի մի պղծիցին :

10. Մակայն Յովհաննու մկրտութեան եղանակն ինչ ալ որ ըլլար, և ինք արտաքին արարողութեան որքան ալ որ կարևորութիւն տար, չէր կրնար լինել օրինակ և տիպար ֆրիստոնէական մկրտութեան, որ հարբէր էր հետաքրքիր : Որպէս յայտ է անտի զի, (Ս) ֆրիստոնէական մկրտութիւնն պիտի ըլլար յանուն Հօր և Որ-

դւոյ և Հոգւոյն Սրբոյ, այլ Յովհաննու մկրտութեան մէջ չերևիր երբէք անուն Ս. Երրորդութեան : Մկրտեալք ոմանք, ըստ խոստովանութեան իւրեանց, Ս. Հոգի կենալն ալ չէին գիտեր : Գործ. ԺԹ. 23 : (Բ) Յովհաննու մկրտութիւնն էր ի ցոյց ապաշխարութեան, իսկ ֆրիստոսականն ի ցոյց նորոգութեան . նա՛ թէ կնիք ուխտի և նշան սրբարար շնորհաց Հոգւոյն, և արարողութիւն մտանելոյ ի տեսանելի եկեղեցին, մինչ ի Յովհաննէ մկրտեալք արդէն կը համարուէին անդամք Աստուծոյ Ժողովրդեան, և ունէին զնշանն թրիստութեան : (Գ) Մկրտութիւնն Յովհաննու լոկ ծէս ինչ էր առ մկրտութեամբ, որ պիտի կատարուէր ի ձեռն ֆրիստոսի : «Ես կը մկրտեմ զձեզ ջրով», կ'ըսէր ինքն Յովհաննէս, այլ «նա պիտի մկրտէ զձեզ Հոգւով Սրբով և հրով» : «Յովհաննէս ջրով մկրտեց», կ'ըսէր Յիսուս իր աշակերտաց, «բայց դուք պիտի մկրտուիք Հոգւով Սրբով» : (Դ) Յովհաննէս մկրտեց . . . ըսելով Ժողովրդեան հաւատալ Անոր որ իրմէ ետքը պիտի դարայսինքն Յիսուս ֆրիստոսի (Գործ. ԺԹ. 4), այլ ֆրիստոնեայ մկրտեալք պիտի հաւատան թէ իրենց համար ֆրիստոս եկեալ է, մեռեալ, յարուցեալ և համբարձեալ առ Հայր, որում կը բարեխօսէ : Ուստի և Յովհաննէսէ մկրտեալք ոմանք վերստին մկրտե-

ցան ֆրիստոնէական մկրտութեամբ ի ձեռն Պօղոսի, և թերևս այլք ուրիշ անդամ, որոց պատմութիւնը չունիմք: Գործ. ԺԹ. 5: (Տես և Յայտարար ճշմարտ. Եր. 84—87:)

Գ. Մկրտութիւն ֆրիստոնէ

11. Յիսուս ևս եկաւ Վրաստան՝ Յովհաննէսէ, այլ այս մկրտութիւն չէր Հրէական կամ նորահաւատից մկրտութիւն, զի հեթանոսութենէ չէր դառնար յԱստուածպաշտութիւն: Չէր և «ապաշխարութեան մկրտութիւն», զի չունէր մեղք ապաշխարելի. ուստի մինչ այլք «իրենց մեղքերը կը խոստովանէին», ֆրիստոս չխոստովանեցաւ ինչ երբէք. նա՛ յերկնից վկայեցաւ թէ «Գա է Որդի իմ սիրելի»: Ս.յն մկրտութեամբ մկրտուողք կը պատրաստուէին ընդունել Մեսիան, գֆրիստոս, զի ինքն էր որ դալոց էր: Չէր կրնար համարիլ և նախանկար կամ տիպար ֆրիստոնէական մկրտութեան. այնու զի ինքն էր մի անձն երրորդութեան, որով մկրտուելի են հաւատացեալք: Ոչ ալ կայ պարագայ մը որ նմանութիւն կամ հանգիստութիւն ունենայ մկրտութեան կատարելի «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»:՝

12. Իսկ աննշան և աւերորդ բան մը չէր մկրտութիւն Յիսուսի, ունէր մասնաոր կարեւորու-

նէնէ՛ր՝ առ ի ընուլ զամենայն արդարութիւն: (Ա) Յիսուս եկաւ առ Յովհաննէս, որ ընդհանրէր ցոյնէ նորս մարգարէութիւն, առաքելութիւնն յերկնից: Սնկէ մկրտեցաւ ալ, ի հաստատել թէ իբրև դեսպան և կարապետ Մեսիայի, հեղինակութիւն և իրաւունք ունէր մկրտելոյ, զորմէ ՚ի տարակուսի էին փարիսեցիք և պաշտօնապէս կը հարցունէին թէ ինչո՞ւ կը մկրտես, եթէ մարգարէն չես: Այսպէս Յիսուս գործով վկայեց Յովհաննու անձին, պաշտաման և արարողութեան վրայ, զոր ՚ի վերջոյ բանիւ ալ հաստատեց, «Յովհաննու համար. . . թէ (է) աւելի եւս քան զմարգարէ:» «Քանզի սա է», կ'ըսէր, «որոյ համար գրուած է, Ահա ես իմ դեսպանս կը զրկեմ քու երեսիդ առջեւ. . . : ճշմարիտ կ'ըսեմ ձեզ կանանց ծնունդներուն մէջ քան զՅովհաննէս մկրտիչ մեծ ելած չէ. . . : Եւ եթէ կ'ուզէք ընդունել նա է Եղիա որ պիտի գար: Ով որ լսելու ազանջ ունի թող լսէ:» Մատ. ԺԱ. 7—15:

13. (Բ) Այլ ևս հասեր էր ժամանակն, որ Յիսուս Նազովրեցին յայտնէր իսրայելի իբրև Մեսիա, օծեալ, որոյ համար «կու գայ» ըսեր էր կարապետն, և որոյ վրայ որ տեսնէր թէ «կ'իջնէ Հոգին» օծութեան, պիտի վկայէր զնմանէ, թէ նա է որ «պիտի մկրտէ (օծէ և զայլ) Հոգւով Սրբով»: Յովհ. Ա. 32—34:


Ուստի և Յիսուս , թելադրութեամբ ի վերուստ , կուգայ առ Մկրտիչն որպէս զի ունենայ առիթ և նշանն ճանաչելոյ զնա և ժողովրդեան յուցնելոյ զ“Գառն Աստուծոյ , որ բառնայ զմեզս աշխարհի” և վկայէ թէ “Սա է Որդին Աստուծոյ :” Այսու յուցմամբ և վկայութեամբ կարապետն և դեսպանն ֆրիստոսի , կատարած պիտի լինէր իր պաշտաման վախճանական մասը : Եւ այս առթիւ պիտի ճանչնային զնա՝ Մեսիան ընդունելու պատրաստեալ մեծ բաղմութիւնք ժողովրդեան և հետեւէին նմա , որպէս գիտեմք թէ ըրին Անդրէաս և Յովհաննէս , և այլոց ևս աւետարանեցին : Յովհ. Ա. 33—42 : Ապաքէն պէտք էր Յիսուսի յոգուս դործածել Յովհաննու այս ամենայն պատրաստութիւն . և այսպիսի հանդիսիւ վկայութիւն ընդունել երբ կը սկսէր իր մեծ գործն պաշտաման :

14. (Գ.) Հետեւապէս իբրև “Մարդարէ բարձրելոյ” թագաւոր “երկնից արքայութեան” և Քահանայապետ “ի վերայ տանն Աստուծոյ .” պէտք էր Յիսուսի , փրկչին , լինել և յայտնուիլ իբրև Մեսիա , Քրիստոս , Օծեալ իբրև մարդարէ , քահանայ և թագաւոր : Ուստի և յետէ եր օծուել , ոչ իւղով՝ այլ Հոգւով . կարգել ի Հօրէ , որոյ ի դիմաց քարոզուիլ և հրատարակիլ ի բերանոյ մարդարէին , որ յատկա-

պէս այս պաշտաման համար զրկուած էր : Այս ամենեքին էին պահանջք օրինաց , զոր , ինչպէս և “Ղամենայն արդարութիւն ,” եկաւ Քրիստոս ընդ , ոչ թէ “քակել” և անտես առնել : Այսոքիկ անօրինութիւնք էին Աստուածպետական խորհրդոց , զորս երբ կը ընդմկրտուելով “ի ջուր ,” իսկոյն երկինք կը բացուի , ուսկից Հայրը կը վկայէ , “Գա է Որդի իմ սիրելի .” և Հոգին աղանակերպ կ’իջնէ Որդւոյ վերայ , զոր կը տեսնէ և մարդարէն ու կը վկայէ : Եւ ահա այս երեքին պատճառք հանդիսական մասնաւորութիւնք են պաշտաման ֆրիստոսի . և չիք ինչ ի նմա լինել հետեւելի օրինակ ֆրիստոնէից : Որպէս և Նորա վարին յանապատ ի Հոգւոյն , ուր մեծ գործոյն իբր պատրաստութիւն պէտք էր պահել զքառասուն տիւ և զքառասուն գիշեր , զոր ոչ ոք ի Քրիստոնէից կատարելի պարտք պիտի համարի :

29643-63

15. Յետ պահեցողութեան և Յիսուս սկսելով իր պաշտաման , ապաշխարութիւն կը բերէ և կը զրոյրէ : Այլ չէ հաւանական թէ Յիսուս երբէք անձամբ զոր մկրտեց , զի չիւշատակութիւն . մանաւանդ թէ այն որ (Յովհ. Գ. 22, 26) Յիսուս “կը մկրտէր” կ’ըսուի , յետոյ (Գ. 2) կը բացատրուի , թէ “ոչ թէ Յիսուս ինք (անձամբ) կը մկրտէր , այլ աշակերտները :”



Այս աշակերտաց մկրտութիւնն ալ, թէ և ընդ-
 իշխանութեամբ ֆրիստոսի, կամ նոյն ինքն
 ֆրիստոսէ կատարուածները, եթէ եղան,
 չէբեիք ինչ էին քրիստոնէական զրոյնքն = Զի (Ս)
 չէր Հոգւով Սրբով, որ պիտի ըլլար, ըստ խոստ-
 ման ֆրիստոսի, յետ համբարձման = Գործ. Ա.
 5 = (Բ) չերևիր թէ կը կատարուէր յանուն ա-
 մենասուրբ Երրորդութեան և էր կնիք նոր
 ուխտի, նշան նորոգութեան սրտի և արարու-
 զութիւն անդամակցութեան քրիստոնէական
 Եկեղեցւոյ, ինչպիսի է մկրտութիւն բացատ-
 րեալ ի թիւս 19—22 = (Գ) Այս մկրտեալք չե-
 րևիր թէ ճշմարիտ հաւատացեալք էին. զի
 ասոնք աւելի շատոր էին քան որք կու գային
 առ Յովնաննէս «Երուսաղէմէս բոլոր Հրէաստան
 և Յորդանանու բոլոր կողմերը» Մատթ. Գ. 5 =
 Հապա յետ յարութեան ո՞ւր էին այս մեծ
 բաղնիքի մկրտելոց եթէ էին ճշմարիտ հե-
 տեոցք ֆրիստոսի, մինչ զի երբ կարևորագոյն
 խնդրոյ, առաքեալ մը ընտրելոյ համար յերու-
 սաղէմ գումարեալ Ժողովոյ մէջ 120 անձինք
 միայն կը դանուին = Այս մկրտեալք, թերևս
 նման ի Յովնաննէ մկրտելոց, միայն պատրաստ
 եղին ընդունել գֆրիստոս, զոր ընկալան և
 խառնեցան ի թիւ 5,000 աց = Գործ. Գ. 4 =
 Ապա ուրեմն ֆրիստոնէական մկրտութիւն
 չսկսաւ մինչև ցհամբարձումն, երբ ֆրիստոս

ըսաւ «Գացէք ամէն աղգերը աշակերտեցէք
 և մկրտեցէք զանոնք յանուն Հոր, և Որդւոյ
 և Հոգւոյն Սրբոյ»

16. Եւ եթէ մինչև այն օր չկար ֆրիստո-
 նէական մկրտութիւն, առաւել ևս չֆրիստո-
 նէութեաննէ մկրտեցան ոմանք, չեմք զի-
 տեր սակայն թէ ամենեքին մկրտեցան. ֆրիս-
 տոսէ մկրտուելու երբէք խօսք չկայ = Մանա-
 ւանդ թէ «Յովնաննէս ջրով մկրտեց, բայց
 դուք պիտի մկրտուիք Հոգւով Սրբով» ըսաւ
 ֆրիստոս. Յովնաննու և Հոգւոյն մկրտութեան
 միջև տեղի ունեցած ուրիշ մկրտութեան մը
 վրայ չխօսիր, որ եթէ ըլլար պէտք էր անոր
 բազդատուիլ, դէթ յիշուիլ = Առաքեալներէն
 միայն Պողոսի մկրտութեան վրայ տեղեկու-
 թիւն ունիմք (Գործ. Թ), և այն մասնաւոր
 ազդարարութեամբ ֆրիստոսի, որ ինքզինք
 հրաշալի կերպիւ յայտնեց նմա, և որ՝ մինչև
 չմկրտուէր, երբէք պիտի չլինէր վստահելի ոք =
 Այնպէս որ ասոր մկրտութեան մասնաւոր
 պատճառներ զիտենք թէ կային. այլ միւս-
 ներուն վրայ պատճառ ունիմք խորհելոյ թէ
 չմկրտուեցան երբէք = «Եթէ իրենք չմկր-
 տուեցան, ի՞նչպէս կրնային ըսել «Ապաշխա-
 րեցէք և մկրտուեցէք»,» գուցէ հարցուի = Բայց
 նկատելի է թէ առաքեալք կարևորութիւն
 կու տային «ապաշխարութեան առ Աստուած,

և հաւատոյ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս :”
Գործ. Ի. 21 : Թերևս, նման Պօղոսի, կը խոր-
հէին թէ քրիստոս զիրենք “չդրկեց մղը-
տել, այլ աւետարանել.” և մտքերնին չգրին
մկրտութիւն կամ թրխատութիւն քարոզել,
բայց “միայն զՅիսուս Քրիստոս, և զնա խաչ-
ուած :” Մանաւանդ ըստ օրինակին Յիսու-
սի կը քարոզէին “Աստուծոյ թագաւորու-
թեան Աւետարանը,” և կ’ըսէին “Ապաշխա-
րեցէք ու Աւետարանին հաւատացէք :” Տես
Ս. Կոր. Ա : Մարկ. Ա. 15 : Եւ եթէ իրենք ջրով
մկրտեալ չըլլային ալ, մկրտեալ էին Հոգւով
Սրբով, որով պաշտօն ունեցան քարոզութեան,
և կրնային այլոց ըսել որ մկրտուին : Ինչպէս
որ գիտենք թէ Յովհաննէս չէր մկրտեալ, այլ
եկաւ ի մկրտել, Պօղոս ամուսնացեալ չէր, այլ
ոչ միայն ամուսնութիւն կը քարոզէր, այլ նորա
մանրամասն պարագայից վրայ հրահանգներ
ալ կուտար : Ս. Կոր. Է :

Ե. Քրիստոնէական Վերորոշում

17. Քրիստոնէական Վերորոշումն է լուացումն
ջրով, յանուն Երրորդութեան և ի ձեռն պաշ-
տօնէից եկեղեցւոյ իբրև կնիք նոր ուխտի,
նշան սրբարար շնորհաց Հոգւոյն Սրբոյ և ա-
րարողութիւն անդամակցութեան ընդ տեսա-

նելի եկեղեցւոյն : Այս սահման՝ ստորոգութիւն
մի է յաւէտ կարևոր մասանց մկրտութեան,
քան թէ որոշողութիւն էական մասանց նորա-
թէ ի մկրտութեան պէտք է յիշուին Հօր,
Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ անունս, այնու յայտ
է, զի քրիստոս այսպէս պատուիրեց : Մատթ.
ԻԲ. 19 : Եւ ուրուք անուամբ մկրտիլ կը նշանակէ
նուիրիլ կամ ուխտել նորա հպատակութեան
և հնազանդութեան : “Միթէ Պօղոսն ի խաչ
ելաւ ձեզի համար” կը հարցունէ առաքեալն
Կորնթացւոց, “կամ թէ Պօղոսն անուամբ մը
կըրտուեցաք . . . ձենէ ոչ զոր մկրտեցի . . .
որպէս զի չըսէ ոք թէ իմ անուամբս մկրտեցի :”
Ս. Կոր. Ա : “Չէք գիտեք, թէ մենք որ Յիսուս
Քրիստոսով մկրտուեցանք, անոր մահուանը
մկրտուեցանք.” “մեռանք մեղաց.” որ “քա-
լենք կենաց նորոգութեան մէջ . . . որ այսու-
հետև չծառայենք մեղաց : . . . ձեր անձերն
համարեցէք մեռած մեղաց, բայց կենդանի
Աստուծոյ Տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի
ձեռք . . . ձեր անձերն ընծայեցէք Աստու-
ծոյ . . . և ձեր անդամներն արդարութեան
դործիք՝ Աստուծոյ :” Հովմ. Զ : Այսպէս և
“Մովսիսի մկրտուիլ,” թերևս կը նշանակէ
Մովսիսի կամ ի ձեռն նորա Եհովայի հնա-
զանդութիւն ուխտել : Ս. Կոր. Ժ. 1 : Արդ՝
ըստ որում մկրտեալը կը նուիրի ի հնազան-

դուժիւնն չօր՝ որ կը վառաւորէ, Որդւոյ՝ որ կ'արդարացունէ և Հոգւոյն՝ որ կը սրբէ, ուստի ի մկրտութեան պէտք է յիշել Ս. Երրորդութեան երրեակ անձնաւորութիւնը: «Ըստ կանխադիտութեանն Աստուծոյ չօր, Հոգւոյն սրբացունելոցն ի հնազանդութիւնն, և ի սրսկումն արեան Յիսուսի ֆրիստոսի:» Ա. Պետ. Ա. 2: Ի նոր կտակարանի յիշուած է «մկրտել յանուն Տեառն» (Գործ. Ժ. 48) այլ այս կը գործածուի իբր անուն ֆրիստոնէական մկրտութեան առ ի զանազանել ի մկրտութեանն Յովհաննու և նորահաւատից, որպէս և այլ «պէսպէս մկրտութիւններէ:» Տես Գործ. ԺԹ: Եբբ. Թ: Եւ չցուցներ ձև բանին գործածելի ի մկրտութեան, փոխան անուան Ս. Երրորդութեան:

18. Մէկը չկրնար մկրտել ինքզինք, ինչպէս կրնայ աղօթել, ծոմ պահել, ուխտեր ընել և Սուրբ Գիրք կարգալ, զի ֆրիստոս «Մկրտեցէք» ըստ, ոչ թէ թող մկրտուին կամ մկրտեն ինքզինքնին: Այսպէս հասկցան առաքեալք և գործադրեցին, այնպէս որ չիք երբէք օրինակ և ոչ ակնարկ ու պատճառ մկրտել զինքն: Եւ անձինք որք մկրտեցին զայլս, որքան որ յիշուած են ի նոր կտակարանի, էին առաքեալք, ֆիլիպպոս՝ սարկաւազաց մին: Գործ. 2. 5: Եւ մասնաւոր հրամանան ֆրիստոսի Անանիա՝

որ «Երկուդած ըստ օրինաց», «բոլոր չրեաներէն վկայուած», «աչակերտ» եղած Յիսուսի և որ «տեսլեան մէջ» հրաման առնելով, մկրտեց զՊօղոս: Գործ. Թ. 10: ԻԲ. 12: Եւ սահամարի լինել պաշտօնեայ եկեղեցւոյն Դամասկոսի, ուր կար բազմութիւն հաւատացեցող, զորս կ'երթար Պօղոս ի ցրուել: Եւ ըստ որում մկրտելին պէտք է դաւանի Աւետարանն, կամ նորա փրկութեան կարևոր վարդապետութեանց բովանդակութիւնը, զոր ընդունելով կազմեալ եկեղեցի մը կայ, և որոյ անդամ պիտի լինի և մկրտելին, պէտք է և պատշաճ որ ի դիմաց եկեղեցւոյն մէկը, յարմարագոյն ոք, որ «սուրբնայն», կոորսի զայս պարծն: Կան հեղինակք և եկեղեցիք որ թոյլ կուտան ամէն մկրտեալ կամ աչակերտեալ անձի, ի ժամու հարկաւորութեան, նոյն իսկ և կանանց, մկրտել զայլս: Այլ այս աճապարանք և ընդարձակութիւնք՝ արդիւնք են թիւր իմացման ինչ, իբր այն թէ ան որ «չճաննի ի ջրոյ . . . չկրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը:» Իսկ, ինչպէս պիտի տեսնուիք (30-42), չիք ի Գիրս այդպիսի օրինակ ստիպողական հարկի և վարդապետութեան, թէ մէկը որ չէ մկրտեալ պիտի զրկուի ի վառաց, մանաւանդ եթէ ինք մկրտիլ վաժառեք է, այլ պարտապայք արդեւ են եղեր:

19. Մկրտութիւն է Գիրքի Ս. Երրորդութեան

թեան և հաւատացելոյն միջեւ : Պօղոս կ'ըսէ (Ա. Կոր. Ա. 16) « Տալ ետու կնիք և տանն Ստեփաննայ , » ըստ գրաբարի և բնագրի : Եւ (Բ. Կոր. Ա. 21, 22) , « Այն որ հաստատեց զմեզ . . . ձեզի հետևե օժեց զմեզ , Աստուած է . որ և կրն ՝ քեց զմեզ և տուաւ Հոգւոյն գրաւը մեր սիրտե ՝ ըուն մէջ : » Այս ներքին օժութեան և կնքոյ արտաքին նշանն , զմկրտութիւն , կնիք կոչել , ճարտասանական խելամտութիւն մի է : Տես և Եփես . Ա . 13 = Այսպէս և « ուխտի նշանն , » թրխատութիւնն , ուխտ կը կոչուի , « իմ ուխտս ձեր մարմինին մէջ՝ յաւիտեանական ուխտ մը ըլլայ : » Ծննդ . Ժ . 13 : Եւ ըստ այսմ (Հռով . Գ .) կ'ըսուի թէ Աբրահամ « թրխատութեան նշանն առաւ (իբր) կնիք արդարութեան հաւատոյն : » Այնպէս զի ինչպէս թրխատութիւնն էր կնիք ուխտի Եհովայի և Աբրահամու միջեւ՝ հանդերձ սերնդեամբ , նոյնպէս և մկրտութիւնն է կնիք ուխտի ընդ երրորդութիւն և ընդ հաւատացեալն հանդերձ տամբ :

20. Եհովան խոստացաւ լինել Աստուած Աբրահամու և սերնդեան նորա , Աբրահամ ալ խոստացաւ որ ինք և իր սերունդ հնազանդին Աստուծոյ և պահեն նորա պատուիրանները : Իբրև կնիք այս սրբազան ուխտին պիտի թըլփատուէին ամէն արուք , իբրև ներկայացուցիչ և իդական սեռին , որոց ամենեցուն և

սիրտը պիտի թրխատէր Աստուած եթէ ուզէին կամ չմերժէին : Բ. Օր . Լ . 6 : Չայս ուխտ մի քանի անգամ հաստատեցին կամ նորոգեցին անգամք տեսանելի եկեղեցւոյն Աստուծոյ , Նահապետը , Իսրայէլացիք և Հրեայք : Այս պիտի ուխտիւ և հաւատացեալք ի ֆրիստոս , հանդիսապէս կ'առաջադրեն լինել անձնուէր երբեակ Անձնաւորութեան : Քրիստոս ևս , իբրև երաշխաւոր և միջնորդ « նոր ուխտի , » շնորհաց ուխտի , կը խոստանայ տալ հաւատացելոց զամենայն օրհնութիւն իր քաւութեան : Այն է քաւութիւն կամ արդարացումն առաջի արդարութեան Հօր , նորոգութիւն կամ սրբութիւն ի ձեռն Հոգւոյն , և լինել փառակից կամ Ժառանգորդ արքայութեան շնորհիւ Որդւոյն : Եւ այս փոխաբայն ուխտի կնիքն է Կրտսնիւն յանուն Ամենասուրբ երրորդութեան , կատարեալ արտաքուստ ի ցոյց կամ ի նշան ներքին շնորհաց :

21. Հետևապէս մկրտութիւնն է և նշան « բարեբերութեան » շնորհաց Հոգւոյն Սրբոյ , որ կը մաքրէ ներքին մարդը և կը փոխէ քարեղէն , անզգայ սիրան ի մարմնեղէն , գիւրազգայ հոգևոր իրաց : Ինչպէս մարմնոյ թրխատութիւնն էր նշան սրտի , ներքին թրխատութեան , նոյնպէս է և ջրով մկրտիլն նշան մկրտութեան սրտի « Հոգւով Սրբով : » Սրտաքին կամ ջրով մկրտութիւնն է « մէկդի նետել մարմնոյ աղաւ , »

և նշան «մաքրութեան սրտի ի չար խղճէ»,
մէկդի նետել խղճի դատապարտութեան բեռն
և ունենալ «բարի խղճի վկայութիւնն առ Աստ-
ուած»: Ս. Պետ. Գ. 21: Եբր. Ժ. 22: «վերստին
ծնանել աւազանին միջոցաւ», որով կ'ըլլայ
անդամ տեսանելի եկեղեցւոյն, է նշան հո-
դեոր ծննդեան «նորդամամբ Հոգւոյն Սըր-
բոյ, զոր առատութեամբ թափեց մեր վրայ»,
կ'ըսէ Պօղոս, «Յիսուսի ֆրիստոսի մեր ֆրկչին
ձեռօք» (Տիա. Գ. 5, 6), որով հաւատացեալն
կ'ըլլայ անդամ անտեսանելի եկեղեցւոյն,
անդրանկաց զրեւոյ ի յերկինս: Եբր. ԺԲ. 23:

22. Մկրտութիւնն է դարձեալ արարողութիւն
նշ կրօնական, որով մարտն է նոր-իք է ծառայողութիւն
Աստուծոյ. ուստի կ'անուանի մկրտեալն «սըր-
բեալ», «սուրբ», «նուիրեալ»: Ըստ այսմ
ամէն ինչ որ նուիրուէր Աստուծոյ Մովսիսա-
կան անտեսութեան մէջ, «կը մաքրուէր»,
«կը լուացուէր», կը մկրտուէր ջրով կամ ար-
եամբ: Այսպէս էին ամենայն անօթք խորա-
նին և տաճարի, երկիրն ու Ղևտացիք, յաս-
կապէս և քահանայք, նոյն իսկ ամբողջ Հրէից
ազգն, որ կը կոչուէր «սուրբ ազգ»: Այսպէս
է և ֆրիստոնէական եկեղեցին, որոյ անդա-
մակցութեան փափաքողն մկրտութեամբ կը
նուիրէ զանձն և զոր իրը կրնայ համարիլ ի ծա-
ռայութիւն Ս. Երրորդութեան: Այս հանդի-

սական ուխտիւ ֆրիստոնեան կը խառնուի հա-
ւատացեւոյ խմբին, որ Ս. Աւետարանի վար-
դապետութիւն կը դաւանի, և ըստ այնմ ապ-
րիլ կ'առաջագրէ: Թէ ամէն հաւատացեալք
պարտին ոչ միայն սրտի մէջ հաւատալ, այլ և
բերնով խոստովանել զՏէր Յիսուս. քաջայայտ
է առաքելոյն (Հռովմ. Ժ) փաստաբանութենէն
և ֆրիստոսի ազդարարութենէն, թէ «Ով որ
մարդոց առջև զիս կը դաւանի, և ես պիտի
դաւանիմ զնա իմ Հօրս առջև»: Եւ թէ կայ
և պարտի լինել յերկրի այսպիսի խոստովա-
նողաց խումբ մը, տեսանելի եկեղեցի, որ
ֆրիստոնէական կրօնն իր մէջ պահէ և առ-
դուրս տարածէ, Նոր կտակարան բացայայտ
կը հաւաստէ: Եւ զոր Պօղոս պատշաճ հան-
գիտութեամբ կը ստորագրէ, թէ «ինչպէս որ
մարմինը մի է և շատ անդամներ ունի, և այն
մարմնոյն բոլոր անդամները որ շատ են՝ մի
մարմին են, նոյնպէս և ֆրիստոս (կամ անոր
եկեղեցին) է ֆանդի մեք ամէնքս մկրտուեցանք
մի հոգւով՝ մի մարմին (մի եկեղեցի) ըլլալու,
թէ՛ Հրեայք և թէ՛ հեթանոսք, թէ՛ ծառայք,
թէ՛ ազատք»: Ս. կոր. ԺԲ. 12, 13: Ուրեմն հաւա-
տացեալք «մի մարմին», մի եկեղեցի լինելոյ
կը մկրտուին: Այսպէս մկրտութիւնն, իբր կնիք
և նշան ներքին օծութեան, է հաղորդութիւն
ընդ անտեսանելի եկեղեցւոյն, ընդ որդիս Աս-

փոխան նշանակեալ երէ, որպէս կ'ըսէ Պօղոս, «Օրհնու-
 թեան բաժակը զոր կ'օրհնենք՝ ո՞չ ապա-
 քէն հաղորդութիւն է (կը ցուցնէ) ֆրիստոսի
 արեան. հացը զոր կը բեկանենք՝ ո՞չ ապաքէն
 հաղորդութիւն (նշան) է ֆրիստոսի մարմնոյն =
 ֆանդի մեք բազումքս մի հաց՝ մի մարմին ենք:»
 Ա. կոր. Ժ. 16, 17 = Ա. յսպիսիք են «Ես եմ
 դուռն.» «Այն վէմը ֆրիստոս էր» (կը նշա-
 նակէր), «ձեր սիրտերը թլփատեցէք.» «Եր-
 կուքը մէկ մարմին պիտի ըլլան.» «մկրտուե-
 ցանք մի մարմին ըլլալու.» «դուք ամէնքդ
 որ ֆրիստոսով մկրտուեցաք, զֆրիստոս հա-
 դած էք.» «նա զձեզ պիտի մկրտէ Հոգւով
 Սրբով և հրով:» Մատթ. Գ. 11 = Ա. կոր. ԺԲ.
 13 = Գաղ. Գ. 27 = Ա. յս բանք, և շատ ուրիշ-
 ներ հանդիտաբար կը ցուցնեն, թէ ինչ որ
 կ'ըսուի նշանակող մկրտութեան համար, պէտք
 է իմացուի նշանակեալ, ներքին և Հոգւով, մը-
 կըրտութեան վրայ, եթէ կ'ուզենք բան հաս-
 կընալ առանց մտորելու = Որպիսիք են բանք,
 «մենք որ Յիսուս ֆրիստոսով մկրտուեցանք,
 անոր մահուանը մկրտուեցանք = Անոր հետ
 թաղուեցանք մկրտութեամբ մահուան հա-
 մար:» Հռովմ. Զ. 3 = «Ել մկրտուէ և լուս
 մեզքերդ, կոչելով Անոր անունը:» Գործ. Իբ.
 16 = «Ապաշխարեցէք և ձենէ իւրաքանչիւր ոք
 թող մկրտուի ի թողութիւն մեզաց:» Անդ.
 Բ. 38:

Զ. Արդեցութիւն Մկրտութեան

25. Եւ աստ դիտելի է, թէ նշանի և նշա-
 նակեալ այսպիսի իրերու մէջ՝ չիք բնական կա-
 պակցութիւն իբր պատճառի և արդեանց, այլ
 կրնայ ֆի լինել առանց լինելոյ ֆուլ = Շատեր կ'ա-
 մուսնանան առանց մէկ մարմին՝ մէկ սիրտ և
 մէկ հոգի լինելոյ, թէ և ամուսնութիւն զայս
 կը ցուցնէ և այս է վախճանն = Խորայել խմեց
 կենդանի վէմէն յանապատի, առանց մաս-
 նակցութեան շնորհաց ֆրիստոսի, որ այն վէ-
 մով օրինակեցաւ = Ա. կոր. Ժ. 1, 2 = Բազումք
 թլփատեցան մարմնով, առանց թլփատութեան
 սրտի, թէ և խոստացեր էր Աստուած իր ժո-
 ղովրդեան, թլփատելոյ, «Բու Տէր Աստուածդ
 քու սիրտդ և քու որդւոցդ սիրտը պիտի թըլ-
 փատէ, որպէս զի քու Տէր Աստուածդ բո-
 լոր սրտովդ և բոլոր հոգւովդ սիրես որ ապ-
 րիս:» Բ. Օր. Լ. 6 = Տես և Հռովմ. Բ. 25—29 =
 Ա. յսպէս և ոմանք յանդամոց եկեղեցւոյ ար-
 տաքնապէս կը մասնակցին շնորհաց միջոցե-
 լու և արտօնութեանց Որդւոյն Աստուծոյ,
 առանց մասնակցութեան շնորհաց և իսկական
 վայելից:

26. Մասնաւորապէս նկատելի է, թէ լեւե-
 բէ ոչ բնական և ոչ դրական պարեցութիւն ներքին և
 արտաքին Մկրտութեան Վեջ, ընդ ջուր և ընդ հուր,

ընդ լուսացումն մարմնոյ և ընդ մաքրութիւն
 Հոգւոյ : Կրնայ ոք առանց թլիսատութեան
 մարմնոյ, ունենալ սրտինը, (Հռով. Բ. 29) և ա-
 ռանց հաղորդութեան մարմնոյ, հաղորդակցիլ
 ընդ Գրիստոսի. սոյնպէս և առանց մկրտութեան
 ջրոյ, ունենալ Հոգիինն, որպէս եղև Կոռնել-
 եանց : Գործ. Ժ. ԺԱ : Եւ նոյն իսկ առաքե-
 լոց և որք էինն ընդ նոսա ի տան, ոյք չէին
 մկրտեալք, այլ յաւուր Պէնտէկոստէի լցան
 Հոգւով Սրբով, որով և մկրտեցան ի ներքուստ
 (տես թիւ 16) : Ընդ հակառակն Սիմոն մոգ-
 մկրտեցաւ ջրով, բայց «մաղձի դառնութեան
 և անիրաւութեան կապանաց մէջ» էր նորա
 սիրտ : Գործ. Ը. 26 : Եւ կ'ըսէ Յովհաննէս,
 «Մենէ ելան ոմանք, բայց չէին մենէ.» մկրտեալ
 էին թերևս այլ օծութիւն չունէին, «բայց դուք
 օծութիւն ունիք Սուրբէն :» Ա. Յովհ. Բ. 19, 20 :
 Ուստի մինչ ճշմարիտ է, թէ «կ'ապրեցունէ (իս-
 կական) մկրտութիւնը», ըստ Պետրոսի (Բ. Պետ.
 Բ. 21), սակայն ոչ թէ արտաքինը, «մէկ դի նե-
 տելը մարմնոյն աղաը», այլ ներքինը, «բարի
 խղճին վկայութիւնն առ Աստուած :» Զուրը չէ որ
 մեղքերը կը լուայ, այլ «Յիսուսի Գրիստոսի ա-
 ըրինը կը սրբէ զմեզ ամէն մեղքէ :» «Մեր Փրկչին
 Աստուծոյ քաղցրութիւնը և մարդասիրութիւ-
 նը, ոչ թէ արդարութեան (կամ հնազանդու-
 թեան) գործերէն զորս ըրինք մենք, փրկեց

զմեզ վերստին ծնանել աւաղանին միջոցովը,»
 արտաքին մկրտութեամբ, հապա «Նորոգմամբ
 Հոգւոյն Սրբոյ, զոր առատութեամբ թափեց
 մեր վրայ Յիսուսի Գրիստոսի մեր Փրկչին ձե-
 ոօք :» Տիտ. Գ. 5, 6 :

27. Հեռեապէս Վրաստանի մարտիրոսները, ինչ
 ալ որ հաւատամբ լինել, չէ կ'սէսու ու է արդարեւ
 պարտաւերէ : Կրնայ լինել որ ամենայն արտաքին
 հանդամանք, ձև և կերպ, լինին ճիշդ ըստ
 պահանջման Ս. Գրոց կամ ըստ մեր համոզ-
 ման, այլ չլինի ներքինը, սրտի յարմարութիւն
 ընդունելոյ զսրբարար շնորհս Հոգւոյն Սրբոյ =
 Եթէ արտաքին արարողութեամբ կարելի լինէր
 յառաջ բերել ներքին օրհնութիւն ինչ, Գրիստո-
 նութիւնը կ'ըլլար մեքենայութիւն, Հոգւոյն ազ-
 դեցութիւնը կ'ըլլար, բնական հարկաւորութիւն.
 այլ քա՛ն, ոչ միայն Գրիստոսնութեան, այլ
 մինչև իսկ մտաւոր ու է գործոց համար այս չէ
 կարելի : Ապաքէն արտաքին արարողութիւնք՝
 կերպիւ իւր կ'աղբեն ներքնոյն, սրտի, հո-
 գւոյ կամ մտաց, այլ մարդ անբռնաբարելի
 ազատութիւն մը ունի, որով կրնայ ապազդե-
 ցիկ պահել զողին : Այսու ազատութեամբ երբ
 մկրտելին լինի տրամադիր, Գրիստոս ևս կը
 հաճի պարգևել նմա զմաքրարար ձիրս շնոր-
 հաց Հոգւոյն : Այնպիսին կը կնքուի խոստա-
 ցեալ Սուրբ Հոգւով. . . որ Ժառանգութեան

գրան է (Եփես. Ս.), կ'ընդունի և նշան «մի մարմին» լինելոյ ընդ Քրիստոսի. բայց եթէ մկրտելոյն սիրտ չէ արամադիր, կ'ընդունի նշանն անդամակցութեան ընդ Քրիստոնեայս, նշանն Քրիստոնէութեան, այլ ո՛չ զկնիք Հոգւոյն և որդեգրութեան :

28. Հապա մկրտութիւն կ'ազդէ միայն Եբֆեյ շրջան, որպիսիք են քարոզութիւն և ընթերցումն Ս. Գրոց, աղօթք և պաշտամունք, խրատ և հաղորդութիւն, և այլ նմանիք : Սյս ամենայն միջոցք, որպէս և մկրտութիւն, կրնան պատրաստել զմիտս կերպիւ իւր և աստիճանաւ ինչ, ընդունել զօրհնութիւնս Աստուծոյ, որպիսիք են հաւատք, ապաշխարութիւն, մարտութիւն, արդարութիւն, փրկութիւն և որդիական վստահութիւն. կրնան լինել միջոցք զարգացունելոյ սէր, յոյս և ինչ որ կան արդէն ի սրտի : Նաև զխտելի է թէ շատ անգամ անհնարին է ստուգել, թէ ո՞ր օրհնութիւն ի՛նչ միջոցի ազդեցութեամբ յառաջ եկաւ : Զոր օրինակ, ըստ Ս. Գրոց ապաշխարութիւնն, զոր Աստուած կու տայ, Քրիստոս եկաւ մատուցանել մարդոց, և զոր Հոգին ընդունելի կ'ընէ : Գործ. ԺԱ. 18 : Բ Տիմ. Բ. 25 : Գործ. Ե. 31 : Զաք. ԺԲ. 10 : Եւ միջոցք են ապաշխարութեան՝ յանդիմանիլ կամ պատժուիլ ի մարդկանէ կամ յԱստուծոյ, խրատ

կամ ազդարարութիւն ի ձեռն հրեշտակի, մարդարէի, մարդոյ, իշոյ և հաւու : Բ Կոր. Է. 10 : Գործ. Բ. 37 : Յայտ. Թ. 20, 21 : Ղուկ. ԺԶ. 30, 31 : Մեղաց թողութիւն և փրկութիւն կ'ըլլայ ճրի շնորհիւ, յանուն Յիսուսի Քրիստոսի, հաւատով՝ որ սիրով ի գործ կը գրուի և քարոզութեամբ Ս. Աւետարանին : Հռովմ. Գ. 28 : Գաղ. Ե. 4 : Հռովմ. Ա. 16 : Ս. Կոր. Ա. 18 : Ս. Թես. Ա. 5 : Հոգին կ'ընդունուի աղօթքով և հաւատով : Ղուկ. ԺԱ. 13 : Եփես. Ա. 16, 17 : Գաղ. Գ. 14 : Եւ վերջաին ծնունդ կ'ըլլայ Աստուծմէ, վասն Որդւոյն, ի ձեռն Հոգւոյն և Աւետարանի քարոզութեամբ : Նաև հաւատալով կ'ըլլայ թողութիւն մեղաց, արդարութիւն, փրկութիւն, սրբութիւն, ըյս և կեանք : Քրիստոսի հետ միութիւն, խաղաղութիւն և ուրախութիւն կ'ըլլայ հաւատալով, հնազանդելով, հաղորդութեամբ, մկրտութեամբ և սիրտը անոր բանալով ու աղօթելով :

29. Ուստի հաւատացեալք զամենայն միջոցս կը գործածեն անխտիր, զխտելով թէ մարդիկ երբ լինին պատրաստ՝ աֆրիս ալ կ'ըլլան արդէն : Եբֆեյ շրջանն Ս. Գրոց : Իսկ եթէ անպատրաստ մտօք գործածուին, նա՛ յակամայս, ոչ ինչ օգուտ կ'արտադրի և ո՛չ մի միջոցք. մանաւանդ եթէ շարաչար ի կիր արկանին կամ

սրբապղծութեամբ, այս միջոցը կրնան և վաստակ հոգւոյ, խարել զխիղճ և լինել ենթակայ պատժոյն Աստուծոյ : Այսպէս եղաւ առիթ պատուհասի հաղորդութիւն կորնթացւոց ոմանց : Ա կոր. ԺԱ : Այսպէս եղաւ և մկրտութիւն Սիմոն մոզի (Գործ. Ը), և կան որք «կը թիւրեն զիրքերն ի կորուստ անձանց իւրեանց» (Բ Պետ. Գ), որպէս և քարոզութիւն Ս. Աւետարանի պիտի ըլլայ « ոմանց հոտ մահուան ի մահ, » և « ոմանց կենդանութեան հոտ ի կեանս : » Բ կոր. Բ. 16 :

30. Արդ թէ մկրտութիւնն է միակ միջոց, որով Աստուած կը հաճի տալ շնորհս Հոգւոյն Սրբոյ, կամ թէ ասանց մարտիրոսն Ս. Հովն շառնիք, հակառակ է այս (25-29) ամենայն հաստատութեանց : Հակառակ է նաև Ս. Գրոց իրողութեանց. զի ոչ միայն ի Հին կտակարանի կան բազումք լցեալ Հոգւով Սրբով, Նորա զանազան պարգևօք, այլ և առաքեալք, և նոցին ընկերք յաւուր Պէնտէկոստէի առին զՀոգին Սուրբ (16) : Պետրոսի երկրորդ քարոզութեամբ 2,000 ի չափ անձինք հաւատացին (և առանց ստուերի ինչ թէ մկրտուեցան), և երբ « աղօթք ըրին շարժեցաւ տեղն ուր ժողոված էին, և ամէնքը Հոգւով Սրբով լցան : » Գործ. Գ : Եւ կոռնելիոս, հանդերձ այլովք, դեռ չմկրտուած առին Հոգին այնպիսի իմն

եղանակաւ, որ ոչ թէ « մասնաւոր պարագայից » բերմամբ « բացառութիւն » մի էր, այլ ըստ Պետրոսի օրինակ մը, թէ Աստուած Հրէից և Հեթանոսաց մէջ խտրութիւն չըներ, և կուտայ Հոգին անոնց և մեզ : Գործ. ԺԷ. 7-9 : Դարձեալ եղեն որք ճշմարտապէս հաւատացեալ էին և մկրտեալ, այլ չէին առած զՀոգին Սուրբ, որպէս էին Սամարացիք, որ թէև « մկրտուած էին Տէր Յիսուսի անուամբ, » այլ Ս. Հոգին « դեռ անոնց և ոչ միոյն վրայ իջած էր : » Գործ. Ը. 14-17 : Յեփեսոս ոմանք « մկրտուեցան Տէր Յիսուսի անուամբ, » այլ չէին առած զՀոգին Սուրբ, մինչև որ « Պօղոս անոնց վրայ ձեռք դրաւ, (և ապա) Սուրբ Հոգին եկաւ անոնց վրայ : » Գործ. ԺԹ. 6 :

31. Պարգևեալ Հոգւով, եթէ պիտի իմացուին նորա հրաշք պարբերներ, լեզուներ խօսել, մարգարէանալ, սքանչելիս գործել, այս կարգի պարգևք, ասանց մարտիրոսն մանաւանդ ի Հին կտակարանի իրողութեանց մէջ, առանց մկրտութեան և թլիատութեան՝ նոյն իսկ Բաղամի : Նոր կտակարանի մէջ ալ, նախ քան զմկրտութիւն, կամ, ըստ ասից ոմանց, « Նախ քան զսկզբնաւորութիւն Նոր անտեսութեան, » աշակերտք ստացան այսօրինակ սքանչելեաց զօրութիւն : Եւ չիք պատճառ որ առանց մկրտութեան չորուի և ի նոր անտեսու-

Թեան . և ապաքէն ո՛չ թէ անոնք որ կը մկրտու-
ուին , այլ «անոնք որ կը հաւատան ,» կ'ըսէ
Քրիստոս , «սա նշաններն անոնց հետ պիտի
երթան՝ իմ անուամբս դեւեր պիտի հանեն ,
նոր լեզուներ պիտի խօսին , . . . հիւանդներու
վրայ ձեռք պիտի դնեն և անոնք պիտի ա-
ռողջանան :» Մարկ . ԺԶ . 17, 18 : Եւ յերաւի
մկրտելոց առած Հոգին այս տեսակէն կ'երևի
լինել . զի ամենեքին որ յաւուր Պէնտէկոստէի
լցան Հոգւով , «սկսան ուրիշ լեզուներ խօսել .»
Սամարացւոց ընդունած Հոգին ալ կ'երևի լի-
նել այս հրաշալի պարզէն , որոյ կարողու-
թիւնը կ'ուզէր և Սիմոն մոգ ունենալ : Երբ Պո-
ղոս Եփեսացի մկրտելոց համար աղօթեց Սուրբ
Հոգին եկաւ անոնց վրայ , կը խօսէին լեզու-
ներ ու կը մարգարէանային : Գործ . Բ . Ը . ԺԹ :
Եւ եթէ այս է Հոգին որ այսօր մկրտեալք
պիտի առնուն , յայտնի կը տեսնեմք թէ չեն
առնուր : Նա՛ առնողներէն շատերը վերջին օ-
րը պիտի ըսեն , «Տէր , Տէր , ո՞չ ապաքէն քու
անուամբդ մարգարէութիւն ըրինք , և քու
անուամբդ դեւեր հանեցինք և քու անուամբդ
շատ հրաշք ըրինք : Եւ անատեն ես անոնց
յայտնապէս պիտի ըսեմ , թէ Ես բնաւ չէի
ճանչնար զձեզ , ի բաց դացէք ինէ դուք , որ
անօրէնութիւն կը գործէիք :» Մատթ . Է . 22 :
32. Այլ եթէ ընդունելի պարզէն Հոգւոյն

են քրիստոս պարբևտ , աղբեցութիւնք Հոգւոյն ,
նախ քան զմկրտութիւն պէտ է , զի առանց Հոգւոյն
ներգործութեան ոչ ոք կրնայ ըստ արժանւոյն
մկրտութեան պատրաստ լինել : Քանզի , (Ա)
պէտք է հեթանոսին քարոզիչներ զրկուին , և
այն առաւել ո՛չ է մարդիանէ , այլ Աստուծոյ , ինչ-
պիսի էր Պողոս , զոր Հոգին ընտրեց , զրկեց
Սելևկիա , և ամենայն ուրեք որոց որ պէտք
էր (Գործ . ԺԳ . 2, 4 : ԺԶ . 7) , և նա կը գոր-
ծածէր «Հոգիին Սուրբ ,» «Աստուծոյ խօսքը ,»
ոչ թէ «մարդկային իմաստութեան համոզիչ
խօսքերով , այլ ապացուցութեամբ Հոգւոյն և
զօրութեան :» Եւ այս իսկ էր յաջողութեան
գաղտնիք առաքելոյն , որ «Աւետարանը ոչ թէ
խօսքով (քարոզութեամբ) միայն եղաւ , այլ և
զօրութեամբ և Հոգւով Սրբով :» Ուստի և սա ,
նման յերուսաղէմ գումարելոց ոչ միայն կ'ա-
ղօթէր , այլ և Եփեսացիներուն կ'աղաչէր Հոգ-
ւով աղօթել . . . «որպէս զի խօսք արուի ինձ
որ բանամ բերանս համարձակութեամբ յայտ-
նել Աւետարանի խորհուրդը :» Եփես . Զ . 16
— 19 : Ա կոր . Բ . 4 : Ա թես . Ա . 5 : (Բ) Խօսքը
լսողները կամ Աւետարան կարդացողները պէտք
է գործադրել սկսին ինչ որ կը պարտաւորին
անդ , ուստի պէտք է աշակերտեալն սկսի ա-
ղօթել ըստ օրինակին Յիսուսի , և աղօթէ ըստ
հրահանգի նորա , զոր օրինակ Ղուկ . ԺԱ . 13 ,

ուր կը վստահացնէ աղօթարարն ըսելով, «Գուք որ չար էք՝ ձեր զաւակներուն բարի պարգևներ տալ գիտէք, որչափ առաւել ձեր Հայրը պիտի տայ յերկնից Սուրբ Հոգին անոնց որ անկէ կը խնդրեն»։ Եւ ուր կը ցուցուի թէ այս Հոգին կամ պարգևը կարևոր է քան հացն մարմնոյ, զոր Աստուած պատրաստ է տալ ամէն ուր կը խնդրէ։ Եւ աշակերտելոյ մը քան զայս պարզ, վստահելի և գործադրելի բան կ'այ, և եթէ զայս չհասկնար ալ ի՞նչ կրնայ հասկնալ միաք, որոյ հոգևոր բաներն յիմարութիւն են. և եթէ զայս չգործադրէ, ալ ի՞նչ դիւրագոյն և լաւագոյն գործ կրնայ ընել, ըստ օրինակին Պօղոսի (Գործ. Թ. 11), և եթէ աղօթէ Սուրբ Հոգին չխնդրէ՞ պիտի մանաւանդ եթէ չկարդար կամ չլսեր մարդոցմէ զրկուած ուսուցիչներու, որք «մինչև որ ջուրին մէջ չթաղուիս, Հոգին չես կրնար ընդունիլ», կ'ըսեն, «պարապ տեղ մի խնդրեր, և զԱստուած մի արհամարհեր»։ Եւ եթէ մարդ, որ մանաւանդ Աստուծոյ մտիկ կ'ընէ քան թէ մարդոց, պիտի դադարէ՞ Ս. Հոգին խնդրելէ, կամ Աստուած պիտի մերժէ՞ նորա խնդիրն մանաւանդ գիտելով, թէ առանց Հոգւոյն ազդեցութեան մեղաւորն երբէք չպիտի յարմարի և լինի արժանի մկրտութեան։ Քանզի

33. (Գ) Աստուծոյ Հոգին է որ պիտի պատ-

րաստէ մեղաւորին սիրտը ընդունել իրենց և Ա. երարանք, զոր կրեւոյ տեղ չունի ի սրտի, և չկրնար գիտնալ, քանզի հոգևորապէս կը քրննուի։ Այլ Հոգին ինչպէս բացաւ լիգիայի «սիրտը ուշադրութիւն ընել Պօղոսի խօսքերուն», կը բանայ և ամէն ունկնդրացն, որք յօժարութեամբ կ'ուզեն գիտել։ Յովհ. Բ. 37, 43։ Ա. Կոր. Բ. Գործ. Ժ. 9. 14։ Այսպէս, (Գ) մեղաւորն իր մեղքերն շնորհիւ Ս. Հոգւոյն կը սկսի ճանաչել և ապշախոյստել։ Այլ Հոգին է որ երբ կու գայ՝ աշխարհը (անապաշխարը) կը յանդիմանէ մեղաց համար (Յովհ. Ժ. 9. 8), որպէս թէ դեղ կը դնէ անոր աչքերուն, որ տեսնէ, նախանձաւոր ըլլայ և ապաշխարէ։ Յայտ. Գ. 18։ Որպէս Յիսուս երևեցաւ Սօղոսի, յանդիմանեց զնա և ուսոյց թէ ինչ պարտ էր ընել նա։ Գործ. Թ. 1։ Որով, (Ե) կը տեսնէ զՔրիստոս, նոյն ինքն զճշմարտութիւն, որոյ Հոգին կ'ապաշխարէ և վերկուիլ։ Հոգին ոչ միայն վերկարար ճշմարտութեանց կ'առաջնորդէ, այլ և կու տայ մասնաւորապէս հաւատալ, զի աս ալ չէ թէ մարդոց ջանքէն է և գործքէն, այլ «Աստուծոյ պարգևն է»։ Եփես. Բ. 8։ Յովհ. Ժ. 9. 12-16։ Ապա, (Զ) ան որ այսպէս սրտով հաւատայ յարդարութիւն, կը սկսի զՔրիստոս բերանով խոստովանել ի վերկուիլուն, որ է վախճան քարո-

զուժեան Աւետարանին, ըստ բացատրութեան ի Հռովմ. ԺԱ. : Այլ այս չէ շրթամբք դաւանել և սրտիւ հեռանալ, որ մարդու գործ է, այլ սրտի թելադրութիւն ըստ ազգեցութեան Հոգւոյն Սրբոյ, ըստ այնմ թէ «Ոչ ոք կրնայ Տէր կոչել զՅիսուս, եթէ ոչ Հոգւոյն Սրբոյն» Ա. կոր. ԺԲ. 3 : Ահա այս օժանդակութեամբ կամ ներգործութեամբ Հոգւոյն է, որ մեղաւորն կը յարմարի ֆրիստոնէական մկրտութեան :

34. Այլ ոչ թէ, մկրտութիւնն ինչպէս որ մէկ անգամ կ'ըլլայ, մէկ անգամ կ'առնու և մը կըրտեալն զՀոգին Սուրբ կամ զՆորհա Նորա = Հապա, ինչպէս Վերո-Յիսուս աւելի Նորհոյն, զոր խնդրելու էր, յեռ Վերո-Յիսուս աւելի և խնդրելու է : Գանդի (Ս.) Գրիստոնեայն միշտ պարտի աղօթել, և ըստ արժանւոյն աղօթելոյ համար կարօտութիւն ունի Հոգւոյն բարեխօսութեան օժանդակութեան : «Հոգին կը հասնի յօգնութիւն մեր տկարութիւններուն . քանզի ինչ բանի համար ըստ արժանւոյն աղօթելու ենք, չենք գիտեր, բայց ինքն Հոգին բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հեծութեամբք» Հռովմ. Բ. 26, 27 = (Բ) Բստ արժանւոյն և ըստ կամաց Տեառն գործելոյ համար հաւատացեալք միշտ պէտս ունին ներգործութեան Հոգւոյն : «Վասն որոյ» կ'ըսէ առաքեալը, (Եփես. Ե. 17) «անմիտ մի ըլլաք, այլ

խմացէք թէ ինչ է Տէրոյը կամբք : Եւ մի արբենաք դինսով, . . . այլ Հոգւով լցուեցէք» Եւ ինքն Պողոս կ'աղօթէ որ «Հոգւոյն Սրբոյ հաղորդութիւնը» ամէն հաւատացելոց հետ ըլլայ : Բ. կոր. ԺԳ. 13 : Կը թողումք յիշել այն բազմատեսակ բնաբաններն, որք կը ցուցնեն թէ հաւատացեալք միշտ դիմելու են Աստուծոյ օգնականութեան, որ սկսած գործերնին կարենան յառաջ տանել, ահով ու դողով իրենց և այլոց փրկութիւնը գործեն, և չըլլայ թէ Հոգին տրտմեցունեն և մարեն : Բաւ է յիշել, թէ առաքեալք իսկ քանի քանի անգամ Հոգին ընդունեցին, Անով լեցուեցան, որով տուաւ Աստուած յարացոյց մը, թէ ինչպէս Աստուծոյ ու է պարզեներն, որոց պէտս ունիմք, խնդրել պարտիմք և պիտի առնումք, նոյնպէս և զպարզես կամ զներգործութիւն Հոգւոյն Սրբոյ : Աստուծոյ վրայ ըստ պիտոյին փաստաբանութիւն մը կայ ի տետրակին մակագրեալ, թէ «Առանց մկրտութեան պայմանի Ս. Հոգին կը տրուի» Տե'ս անդ :

35. Նախընթաց (32, 33) խորհրդածութիւնը կը ցուցնեն, թէ նախ քան զմկրտութիւն Աստուծոյ Հոգին մեծ գործն արդէն սկսած ըլլալու է, զոր պիտի կատարէ ալ (Փիլ. Ա. 6), որոյ համար հաւատացեալն ևս պարտի «ահիւ և դողութեամբ» իր փրկութեան համար գոր-

ծել մինչև ցվերջ կենաց, երբ կատարեալ կ'ըլլայ սրբութեամբ և կ'անցնի ի փառս: Անդ, Բ. 13: Այլ թուի թէ վերստին ծննդեան վրայ ոմանք տարբեր գաղափար կրելով կարծեն, թէ մկրտուիլ կամ ջրէն քնանիլ, է և Հոգիէն քնանիլ, զոր ծանոյց Յիսուս Նիկողեմոսի: Այլ եթէ մկրտութիւնն էր ջուրէն ծնանիլ, որ նոր սնտեսութեան խորհուրդն է, քրիստոս պատճառ պիտի չունենար մեղադրել Նիկողեմոսի, թէ «Դուն վարդապետ ես իսրայելի, և չե՞ս դիտեր զայդ»: Հապա կ'ակնարկէր Յիսուս ըսելով, Հոգիէն ծնանիլ, վերստին ծնանիլ և ջուրէն ծնանիլ, կարևոր և քաջածանօթ ճշմարտութիւն մը ի Հին Կտակարանի, դէթ ի Հրեայս: Եւ ապաքէն շատ տեղեր կան, զոր օրինակ Եզեկ. 1, 2, 25—28, ուր կը խոստանայ Աստուած ըսելով, «Ձեր վրայ մաքուր ջուր պիտի սրսկեմ և պիտի մաքրուիք... ձեզի նոր սիրտ պիտի տամ, և ձեր ներսի դին նոր հոգի պիտի դնեմ... իմ Հոգիս ձեր ներսի դին պիտի դնեմ»: Որով կը ցուցուի արտաքին ինչ ջրոյ մաքրութեան, ի նշան և ի ցոյց ներքին հոգւոյ մաքրութեան ի ձեռն Հոգւոյն: Եւ ապաքէն ամբողջ Հին Կտակարանի մէջ կարևոր տեղ մը կը բռնէր այս ներքին մաքրութիւն և սրբութիւն, «առանց որոյ ոչ ոք պիտի տեսնէ զՏէր»: Այլ թէ մկրտութեամբ կ'ըլլայ

այս փոփոխութիւն, թէ Աստուծոյ խօսքովը, բացատրեալ է ի տետրակին «Ճառ Ս. Հոգւոյն գործոյն վրայ» Գլ. Գ. և Ե, և «Ճառ մկրտութեան և վերստին ծննդեան»:»

36. Կան որ կարծեն թէ ի ժամու մկրտութեան կամ Գրիգորիոսի Բարսիլոսի կ'ըլլայ, ըստ այնմ թէ «Իւրաքանչիւր ոք թող մկրտուի... ի թողութիւն մեղաց»: «Ել, մկրտուէ և լուս մեղքերդ»:» Գործ. Բ. 38. ԻԲ. 16: Ասով թերևս ըսել կ'ուզուի, թէ մկրտոյն, ըստ որում չէ սրտագէտ, երբ աշակերտեալին հնազանդութիւնը, նորա երախայրին, մէկ գործը, մկրտութիւնը, կը տեսնէ, գործերէն կը հետևցունէ թէ ունի կենդանի հաւատք, և անոր մեղաց թողութիւնը կը հրատարակէ, կամ անոր կ'իմացունէ թէ մեղաց թողութիւն առած է: Այս եթէ լոկ մարդոց ծանուցանել է՝ քրիստոնէական եկեղեցւոյ ծոցը ընդունելոյ համար, կրնայ Ս. Գրոց համաձայն համարուիլ: Այլ կարի զգուշանալու է որ մկրտելոց յոյսը մարդոց դատողութեան վրայ չհաստատուի, և զիրենք փրկեալ չհամարին, այնու զի հաւատացեր, ապաշխարեր և մկրտուեր են, և այսպէս իրենց փրկութիւնը կատարեալ եղեր է: Մանաւանդ թէ երբ մկրտելոյ մը ապագայ կեանքն ամբարշտական լինի, և հատանի անդամակցութենէ եկեղեցւոյ, և ապա ապաշխարէ ու դառնայ

ի ծոց եկեղեցւոյ, վերստին մկրտել պէտք չէ՛, ի ծանուցանել թէ այդ մեղքերն ալ ներուած են : Եւ ևս երբ մկրտեալ մը հոգևոր արթնութիւն ունենայ, տեսնայ թէ ի մկրտութեան անդ ինք Սիմոն մոգ մը էր, մեղքի դառնութեան մէջ և անիրաւութեամբ կապեալ . և ի՛նչ որ ըրաւ առաջ «անհաւատութեամբ» կամ «չգիտնալով», անխորհրդաբար ըրաւ, հետևապէս նորէն մկրտելու է ի ծանուցումն թէ մեղքերն ներուած են : Իսկ եթէ մկրտել պէտք չէ, արարողութիւն մը կատարուած է, անգիտութեամբ կամ սխալմամբ, ա՛լ գործը Աստուծոյ կը մնայ, ինչո՞ւ առանց մկրտութեան ալ՝ Աստուծոյ չմնայ : Քանզի,

37. Կան ալ որ կը պնդեն, թէ մինչև որ չմկրտուի այնպիսին, «հաւատք և ապաշխարութիւն քահանայն չէ», մկրտութիւն պէտք է որ հաւատք և ապաշխարութիւն կատարեալ ըլլայ, և մեղաց թողութիւնն ընդունի : Մկրտութիւնը, սակայն, մարդու մը, ան ալ հաւատացողէն ուրիշ անձի մը գործ է, ըստ որում ինքզինք մկրտել չըլլար (18), այնպէս որ ապաշխարողն պիտի կարօտի ի ներքուստ Հոգւոյն գործողութեան և արտաքուստ մարդու մը, որք եթէ չհամաձայնին իր թողութիւնը կատարեալ չըլլար : Եւ միթէ աստի չը՞ հետևելու եկեղեցակա՛նաց, մկրտողաց, գերիշխանութիւնն, այնպէս որ

որու որ մեղքերը թողուն, թողուած ըլլայ, և որու որ բռնեն, բռնուած ըլլայ : Եւ աստի անոնց առջև չպիտի՞ ելլեն ամենայն դժուարութիւնք, որ կան ի դրութեան քահանայական իշխանութեան : Եւ միթէ Աստուած սխալական մարդոց կապեալ պիտի մնայ, և կապեալ պիտի պահէ՞ զմեղաւորն ի լուծ մեղաց, մինչև որ մարդի՛կ քակեն : Այլ եթէ ի մկրտութեան ներողն Աստուած է, մկրտողն երբէք բան չունի . միթէ Սրտագէտն, առանց գործոց, չը՞ կրնար որոշել մեռեալ հաւատն ի կենդանի հաւատոյ, «որ սիրով ի գործ կը դրուի» նոյն իսկ ի սրտի : Ուստի ալ ինչո՞ւ չներէ հաւատացելոյն մինչև ցժամ մկրտութեան, զոր մարդ մը ի գործ պիտի դնէ, և կրնայ ըլլալ որ սա չուզէ իր պարտքը կատարել, կամ մերժէ զմկրտելին համարելով թէ դեռ մանուկ է, երախայ է, անչափահաս է, ճշմարիտ հաւատացեալ և ապաշխարած չէ : Աստուած ալ աս մարդուն հետ պիտի սխալի՞, կամ անոր ջուրին սպասէ՞, թէ կողմնելիօսի և իրեններուն ինչպէս տուաւ Ս. Հոգին՝ առանց նայելու նախապաշարեալ Պետրոսի և ընկերաց վարանման, պիտի տայ և ասոր փրկութեան անպատմելի խնդութիւնը :

38. Եթէ մէկը գտնուի տեղ մը և ի վիճակի, ուր դարձի գայ, հաւատայ ի Քրիստոս և սակայն չգտնէ մկրտող մը, կամ վասն տկարու

Թեան (մանաւանդ ընկղմամբ) չկարենայ մը-
կըրտուել, Աստուած անոր չը՞պիտի ներէ :
Անշուշտ ան որ մարդու սրտին կը նայի, կը
տեսնէ անոր մտաց խորհուրդը, անկեղծ վա-
փաքը մկրտութեան, և կը ներէ : Եւ եթէ ու-
րիշներուն ալ անկեղծութիւնը տեսնէ չը՞պիտի
ներէ, չը՞պիտի ուրախացունէ մինչև որ նա
քանի մը ամիս կամ տարի ետքը մկրտուի :
Եւ եթէ Աստուած ալ հնազանդութեան գործ
մը կ'ուզէ, ինչո՞ւ ապաշխարութեան գործերն,
ամբարշտութենէ դառնալ ու բարեպաշտական
ծառայութիւնք, աղօթք և պաշտամունք բա-
ւական չըլլան, և մի միայն մկրտութեան նայի :
Աբրահամ հաւատաց, և առանց բան մը ընե-
լու, աս իրեն արդարութիւն համարեցաւ . այլ
երբ ամենամեծ հնազանդութեան գործն ըրաւ,
զորդին զոհել ուզեց, ասով մեղաց թողութիւն
չընդունեց, զի արդէն ընդունել էր առանց
գործոց . և հիմա հաւատոյ և սիրոյ պտուղներն
սկսեր էին երևիլ և այն՝ մարդոց, ոչ թէ Աս-
տուծոյ, որ զիտէ զերիկամունս : Եւ ո՞չ ապա-
քէն այս նոյն կերպով, միայն հաւատքով կ'ար-
դարանայ մարդ ի նոր անտեսութեան ևս, որ
յայտ չէր կրնար տարբեր լինել ի հնոյն : Տես
Հռովմ. Գ. Գաղ. Գ. :

39. Եւ եթէ մկրտութիւնն համարիմք հնա-
զանդութեան գործ, որով կատարեալ կ'ըլլայ

ապաշխարութիւն և հաւատք, ինչո՞ւ նոյնպէս
և ալ աւելի կարևոր չհամարինք ուրիշ գոր-
ծերն հնազանդութեան, որք քան մեղաց թո-
ղութեան վերի բնաբաններն՝ որոշ են և բա-
նաւոր (36) : Զոր օրինակ, «Վարդապետ բարի,
ի՛նչ բարի գործ գործեմ, որ յաւիտենական
կեանքն ընդունիմ : . . . Եթէ կամիս մտանել
ի կեանս, պահէ պատուիրանները : . . . Եթէ
կամիս կատարեալ ըլլալ, գնա վաճառէ ինչ որ
ունիս և տուր աղքատաց և դանձ պիտի ու-
նենաս յերկինս, և (դուն) եկու իմ ետեւէս :”
Մատթ. ԺԹ. 16—21 : Ապաքէն, ի վերին ե-
րեսս, կարի բանաւոր է աղքատաց օգնել և
երթալ “բոլոր աշխարհ” մինչև “երկրի ծայ-
րերը” Աւետարան քարոզել, քան թէ լոկ ա-
րարողութիւն մը կատարել, մկրտուիլ, կա-
տարեալ լինելոյ համար կամ ի թողութիւն
մեղաց : Եւ եթէ այս և նման հնազանդութեան
պարտաւորիչ գործերն պէտք է կարևոր հա-
մարել, նման մկրտութեան ի թողութիւն մե-
ղաց ի փրկութիւն, յայնժամ չը՞հետեւիր թէ
Քրիստոսն ալ կարևոր են ի փրկութիւն, չը՞հետեւիր
յայնժամ, թէ փրկութիւն լոկ շնորհքէ չէ,
այլ մասամբ, և այն՝ կարևոր մասամբ, մեր գոր-
ծերէն, հակառակ վարդապետութեան Պօ-
ղոսի, զոր յամենայն թղթի կը յեղյեղէ, թէ
«մարդ կ'արդարանայ հաւատով առանց գոր-
»

ծոց օրինաց։” Հռովմ. Գ. 28: “Շնորհօք փըրկուած էք դուք հաւատոյ միջոցաւ, և այս ոչ թէ ձեռնէ է, այլ Աստուծոյ պարգևն է. ոչ թէ գործերէն, որպէս զի չպարծի ոք։” Եփես. Բ. 8: 40. Եթէ հաւատք և ապաշխարութիւն բաւական չէ և պէտք է մկրտուիլ ի թողութիւն մեղաց, այս ի՞նչ տարբերութիւն ունի ի պահանջմանէ Հրէից, թէ “Եփէ Մովսէսէ ասանդոսա՞ն աստուծոն հասեմար մկրտուիտ, չէ՞ կրնար իրելէ։” Գործ. ԺԵ. 1: Զի բառերը փոխելով միայն պիտի ըսուի, Այս ինչ հասակի մէջ կամ այս ինչ կերպիւ ի չափահասութեան և այն ընկըղմամբ “եթէ չմկրտուիք, չէք կրնար փրկուիլ” կամ մեղաց թողութիւն ընդունել: Վարդապետութիւն՝ որոյ ընդդէմ կը դառնայ առաքեալն իւր ամենայն թղթովք, և աղդուաբանութեամբ մը կ’ըսէ Գաղատացոց (Գլ. Ե. 2), “Ահա ես Պօղոս կ’ըսեմ ձեզ որ եթէ թրիատուիք, Գրիստոս օգուտ չըներ ձեզ:” “Բանդի Գրիստոս Յիսուսով ոչ թրիատութիւնն է բան մը, և ոչ անթրիատութիւնը, այլ նոր ստեղծուած:” Գլ. 2. 13: Միթէ Հրէից համար գէթ, թրիատութիւնը նուա՞՞ր կարևոր գործ էր հնազանդութեան: Եթէ Գրիստոսեայ մը Նոր Կտակարանէն կրնայ հանել, թէ մկրտութիւն (և այն իր խորհած հանգամանօք) կարևոր է ի թողութիւն մեղաց, քանի՞ հիմնովին Հրէայ

մը պիտի կարենար հաստատել ի Հին Կտակարանէ, թէ “Մինչև որ Մովսէսէ աւանդեալ սովորութեան պէս չթրիատուիք, չէք կրնար փրկուիլ” գրիստոս ընդունելով, հաւատալով և ապաշխարութեամբ հանդերձ: Վարդապետութիւն՝ զոր մերժեց առաքելական ժողովն որ էր գումարեալ յերուսաղէմ միայն այս խնդրոյ համար: Եւ զարմանք չէ՞ որ անոր մկրտութեան վրայ, փրկութեան այսքան կարևոր համարեալ, հնազանդութեան գործոյ մը վրայ որոշում չըլլար, և ոչ իսկ խօսք մը: Այլ կը դրեն հանուր Գրիստոսեից և յատկապէս հեթանոսութենէ դարձողներու, “Բարևօք թուեցաւ Հոգւոյն Սրբոյ և մեզ ևս աւելի բեռ չդնել ձեր վրայ, բաց ի սա կարևորներէն,” ուր մկրտութիւն չյիշուի երբէք ինչպէս և թրիատութիւն: Գործ. ԺԵ. 28: Այս (36—40) ամենայն դժուարութիւնը կը ցուցնեն թէ տարբեր իմաստ ունենալու են խորհրդածեալ բնաբանք: Գործ. Բ. 38: ԻԲ. 16:

41. Արդ ի մասնաւորի նկատենք Գործ. Բ. 38, ուր Պետրոս իր առաջին քարոզը լսող Հրէից կ’ըսէ, “Ապաշխարեցէք, և ձեռնէ իւրաքանչիւր ոք թող մկրտուի յանուն Յիսուսի Գրիստոսի ի թողութիւն մեղաց:” Եւ նոյն առաքեալը նոյնալիսի ունկնդրաց երկրորդ քարոզին մէջ կը կրկնէ, “Ապաշխարեցէք և դար-

ձէք որ ձեր մեղքերը ջնջուին.” Գործ. Գ. 19 :
 Նոյնը քարոզեց և Պօղոս յԱնտիօք Պիսիդեայ
 (Գործ. ԺԳ. 38, 52), թէ “ասոր (Քրիստոսի) մի-
 ջոցաւ կը քարոզուի ձեզ մեղաց թողութիւն . . .
 ասով ամէնը որ հաւատայ՝ կ’արդարանայ.” և
 աշակերտները որ ընդունեցին այս խօսքերը, ու-
 ղոց մէջ բան մը յիշուած չէ մկրտուելու վրայ,
 փրկութեան “ուրախութեամբ և Հոգւով Սրբով
 կը ընուին :” Քրիստոս իսկ երբ կը պատրաստէր
 զաշակերտս երթալ յաւետարանել, պէտք է կը-
 սէր (Ղուկ. ԻԳ. 47) “ապաշխարութիւն և մեղաց
 թողութիւն” քարոզել. ծէսերու և մկրտու-
 թեան իսկ խօսքը չընէր : Զայս կը հաստատէ և
 Յովհաննէս ըսելով “կը գրեմ ձեզ որդեակներ,
 քանզի թողուած են ձեր մեղքերն Անոր ան-
 ուանը համար :” Ա. Յովհ. Բ. 5 : Ասոնք ամենե-
 քին կը ցուցնեն թէ “մեղաց թողութեան” կա-
 ղևոր պայմանն է հաւատալ, և թէ մկրտութիւն
 չէ երբէք դասելի ի շարս կարևորաց ի փրկու-
 թիւն, այլ ընելիք գործ մը այն օր յերուսա-
 դէմ գարծի եկողներու . այսինքն Քրիստոնէու-
 թիւնը հրապարակաւ ընդունել կամ դաւա-
 նել : Այսպէս Յակ. Ե. 13, 14 համարներուն
 մէջ կը պատուիրուի, հիւանդին վրայ աղօթք
 ընել և Տէրօյը անունովը եղով օծել զնա :
 Եւ կը խոստացուի թէ “աղօթքը որ հաւատով
 է պիտի փրկէ հիւանդը, և Տէրը պիտի կանգնէ

զնա . և եթէ մեղք գործած է, պիտի ներուի
 անոր :” Դարձեալ, “աղօթք ըրէք իրարու հա-
 մար՝ որ բժշկուիք :” Հոս ապաքէն Տէրօյ ան-
 ուամբ օծել կայ, զոր ճշդիւ կատարել ոչ
 ոք կը պահանջէ հիմա, այլ այն օծումը չէր որ
 կը բժշկէր հիւանդը, (թէ և կար բնական պատ-
 ճառ ինչ,) և կը ներէր մեղքը, այլ աղօթքը =
 Այսպէս և ի բանի անդ Պետրոսի մկրտութիւնը
 չէ լինելի գործն մեղաց թողութեան համար,
 հապա “ապաշխարել,” և զՔրիստոս սրտանց
 ընդունել, որով նոյն իսկ մկրտութիւնն Յով-
 հաննէս կ’ըլլար “ի թողութիւն մեղաց :” Մարկ.
 Ա. 4 : Այս իմաստը լաւ ևս կը հաստատէ նոյն
 իսկ երկրորդ բնաբանն :

42. Գործ. ԻԲ. 16 : “Ել մկրտուէ և լուս
 մեղքերդ կոչելով Անոր (Տէրօյը) անունը :”
 Նոյն իսկ ըստ Պօղոսի, որում ըսաւ զայս Ա-
 նանիա, հիմնական սկզբունք մը է, թէ “Ով
 որ Տէրօյը անունը կը կոչէ՝ պիտի փրկուի :”
 զոր Պետրոս ալ կը հաստատէ ճիշդ այն քա-
 ղոցին մէջ, ուր կ’ըսէ ի վերջոյ, թէ “Ապաշխա-
 րեցէք և ձենէ իւրաքանչիւր ոք թող մկրտուի
 ի թողութիւն մեղաց :” Հռովմ. Ժ. 13 : Գործ.
 Բ. 21 : Անանիայի խօսքն արդէն ուղղակի Յի-
 սուս ըսեր էր յերկնից Պօղոսի, թէ “Ազատե-
 լով զքեզ այս ժողովուրդէն և հեթանոսնե-
 րէն . . . կը շրկեմ զքեզ անոնց աշուրները

բանալ խաւարէ ի լոյս, և դարձունել Սատանայի իշխանութենէն առ Աստուած, որ առնուն մեղաց թողութիւն և մասնակից ըլլան սուրբերուն հետ հաւատալով յիս:” «Ուստի,” կ’ըսէ ինքն Պօղոս, «քարոզեցի . . . ապաշխարել, և դառնալ առ Աստուած և դործել ապաշխարութեան արժանաւոր դործեր:” Գործ. ԻԶ. 16—20: Այս ամենայն ուրեք, և այն կարևոր պարագայից և բանից մէջ, չյիշուիր մկրտութիւն իբր կարևոր լրացուցիչ հաւատոյ և ապաշխարութեան ի թողութիւն մեղաց, ի լուանալ զմեզ: Մեղքերս լուսացուածը Դաւթի նշանաւոր ապաշխարութեան Սաղմոսի (ԾՍ), և Հրէից սովորական ասացուածը կ’երևի: Ապաշաւեալն Դաւիթ կ’աղօթէ (Սնդ, համար 2, 7), «իմ անօրէնութիւններէս բոլորովին զիս լուս, և իմ մեղքէս զիս սրբէ . . . զոպայի մշտկաւ մաքրէ զիս, և մաքուր ըլլամ. զիս լուս, և ձիւնէն աւելի ճերմակ ըլլամ:” Նոյն փոխանունութեամբ կ’ըսէ և առ Երրայեցիս թուղթն (Գլ. Ժ. 22), «Մօտենանք ճշմարիտ սրտով, լի հաւատով, մեր սիրտերը չար խղճէն մաքրուած և մեր մարմինները մաքուր (կամ մաքրութեան) ջրով լուացուած:” Իսկ այս մաքրութեան ջուրը, կամ անով նշանակեալ բանը չէ՛ ջուր մկրտութեան, զի Գրիստոս իւր արեամբ լուաց զմեզ մեր մեղքերէն:

Յայտ. Ա. 5. Է. 14: Եւ միայն «Մնոր որդւոյն Յիսուսի Գրիստոսի արիւնը կը սրբէ զմեզ աւելն մեղքէ:” Ա. Յովհ. Ա. 7: «Եւ ձենէ ոմանք” վատաբարոյ պիղծեր էիք, կ’ըսէ Պօղոս Կորնթթացոց (Ա. Կոր. Զ. 11), «բայց լուացուեցաք, բայց սրբուեցաք (ըստ Ես. Ա. 16 համարին), բայց արդարացաք յանուն Տեառն Յիսուսի և մեր Աստուծոյ Հոգւով:” Ուրեմն Պօղոս իւր մեղքերը պիտի լուար ոչ թէ մկրտութեամբ, այլ «Տէրոջը անունը կոչելով:” Եւ Պետրոսի ունկընդիւրք (Գործ. Բ) պիտի ապաշխարէին ի թողութիւն մեղաց, և «պիտի ըլլայ որ ամէնը որ Տէրոջը անունը կոչէ, պիտի փրկուի:” Համար 21:

Ներել այլոց կամ անշաւարտներն շատ աւելի որոշ կերպով ցուցուած է ի Ս. Գիրս իբրև մեզ պայման թողութեան մեղաց քան որչափ մկրտութիւնը, «Ներէ մեզ մեր պարտքերը, ինչպէս և մենք կը ներենք մեր պարտապաններուն . . . : Վասն զի եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքը, ձեր երկնաւոր Հայրն ևս կը ներէ ձեզ. իսկ եթէ դուք չներէք մարդոց իրենց յանցանքը, ձեր Հայրն ևս չներեր ձեզ ձեր յանցանքը:” Մատթ. Զ. 12, 14, 15: ԺԸ. 35: «Ուրեմն, եթէ քու ընծադ սեղանին վրայ բերես, և հոն միտքդ դայ թէ քու եղբայրդ քեզի դէմ բան մը ունի, հոն թող քու ըն-

ծաղ սեղանին առջև , և դնա հաշտուէ նախ եղբորդ հետ , և ապա եկու մատուցանել ընծաղ :” Մատթ. Ե. 23 , 24 : “ Ողորմութիւն կ’ուզեմ և ոչ զոհ :” Մատթ. Թ. 13 : ԺԲ. 7 : “ Երբ աղօթքի կը կենաք , ներեցէք եթէ մարդու դէմ բան մը ունիք , սրպէս զի նաև ձեր Հայրը որ յերկինս է՝ ներէ ձեզ ձեր յանցանքը : Իսկ եթէ դուք չէք ներեր , նաև ձեր Հայրը որ յերկինս է՝ պիտի չներէ ձեր յանցանքը :” Մարկ. ԺՍ. 25 , 26 : Տեա և Եփեսո . Գ. 36 : Կող . Գ. 13 :

Եթէ այսպիսի խօսքեր դանուէին Ս . Գրոց մէջ մկրտութեան համար ըսուած , քանի՛ հզօր պիտի լինէր փաստն անոնց որ կը համարին թէ մկրտութեամբ կ’ըլլայ թողութիւն մեղաց : Եւ սակայն մինչ մկրտութեան վերաբերեալ անորոշ խօսքերը խոշոր կը դրեն այսպիսիք , չեն ըսեր բան մը նկատմամբ այլոց յանցանքը ներելու կամ անյիշաչարութեան , առանց որոյ մկրտութիւնն ինչ կերպով և լինի , մկրտեալն չըլլար Աստուծոյ որդի , սրբեալ , քաւեալ :

Է . Հարկատուութիւն մկրտութեան

43. Հարկաւոր է մկրտութիւն ոչ զի առանց անոր չըլլար թողութիւն մեղաց (36—42) , ո՛չ զի առանց անոր չըլլար վերստին ծնունդ (35) , ոչ զի առանց անոր ընդունելութիւն չըլլար զանազան պարզեաց Հոգւոյն (30—34) , ո՛չ զի ա-

ռանց անոր չըլլար փրկութիւն , որոյ պատճառն է Աստուծոյ անհուն սէրը կամ շնորհքը , և պայմանը՝ ճշմարտապէս հաւատալ , և որոյ այս էական թէսութիւնք ի սկզբանէ աշխարհի նոյն են և ցլխախճան անփոփոխելի : Եւ Ս . Գիւրք չուսուցաներ թէ չկրնար փրկուիլ ոք եթէ մկրտեալ չըլլայ , կը ցուցնէ թէ կը փրկուին մանկունք առանց մկրտութեան . մանաւանդ թէ բացէ ի բաց կը մերժէ վարդապետութիւնը , թէ “ Եթէ Մովսիսէ աւանդեալ սովորութեան համեմատ չթրխատուիք , չէք կրնար փրկուիլ ,” (Գործ . ԺԵ. 1) , կամ որ նոյն է՝ Եթէ ոք այս ինչ կերպով չմկրտուի , չկրնար փրկուիլ (40) : Ս . Գիւրք կը հաւաստէ թէ փրկութիւն և մեղաց թողութիւն կ’ըլլայ ողորմութեամբ Հօր , քաւութեամբ Որդւոյն և ներդործութեամբ Հոգւոյն , որ իւր շնորհքները մարդոց հաղորդելու համար կը գործածէ պէսոպէս միջոցներ (28, 29) : Որդին , որ յաշխարհ եկաւ կեցուցանել զմեղաւորս , “ Մն որ ինձի կու գայ ,” ըսաւ , “ բնաւ դուրս չեմ հաներ ,” թէ և մեղքով բեռնաւորեալ ըլլայ և վատապեալ , թէ և պարտքերէն և ոչ մին դեռ կատարած ըլլայ : Եւ առանց մկրտութեան փրկուելու այնքան պարագայք կան և այնքան դէպքեր , որ “ առանց մկրտութեան փրկութիւն չըլլար ” հաւատացողներն իսկ կը պարտաւորին ըսել , “ այդպի-

սիք Աստուծոյ ողորմութեամբ կը փրկուին,”
 “մանուկներ անմեղ են,” կամ “անկնուք մա-
 նուկներ ոչ դժոխոց տանջանք ունին և ոչ ար-
 քայութեան փառք.” մարտիրոսք “արեամբ
 կը մկրտուին,” ոմանք ալ “կրակով մկրտեալ”
 կը համարուին, “աւաղակն հին տնտեսութեան
 տակ փրկուեցաւ,” “կոռնելիոսի դէպքը բա-
 ցառութիւն է:” Ապաքէն անքան բացառու-
 թիւնք, և անքան մեկնութիւնք անհիմն և
 մտացածին, որք ինքնին բաւ են ցուցնելու
 զանտեղութիւն կարծեաց, թէ ոչ ոք կրնայ
 փրկուիլ առանց մկրտութեան:

44. Սակայն Արդարեւ հարկաւոր է զի, (Ա)
 Այսպէս պատուիրեց Տէրն մեր Յիսուս Քրիս-
 տոս, “Աշակերտեցէք բոլոր ազգերը, մկրտե-
 ցէք զնոսա յանուն Հոր և Որդւոյ և Հոգ-
 ւոյն Սրբոյ:” “Եթէ բերանովդ խոստովա-
 նիս զՏէր Յիսուս և սրտիդ մէջ հաւատաս . . .
 պիտի փրկուիս:” “Ով որ մարդոց առջև զիս
 կը դաւանի, և ես պիտի դաւանիմ զնա
 իմ Հօրս առջև:” (Բ) Հարկաւոր է մկրտու-
 թիւն, զի ըստ պատուիրանաց Քրիստոսի ա-
 շակերտեցին և մկրտեցին առաքելաւք, աշա-
 կերաք, հիմնադիրք Եկեղեցւոյ, “Ձեռն իւ-
 րաքանչիւր ոք թող մկրտուի,” ըսին, “յանուն
 Յիսուսի Քրիստոսի:” Եւ սոցա անհնազանդ-
 դանութիւ կը վերաբերի մեր Փրկչին, որ զնոսա

ընտրեց և զրկեց վերակազմել զԵկեղեցին,
 ուր մտնելու դուռն է մկրտութիւն: Ուստի,
 (Գ) Հարկաւոր է մկրտութիւն, առանց որոյ
 ոչ ոք կարէ օրինաւոր անդամ ճանաչիլ տեսա-
 նելի եկեղեցւոյն, որուն հետ կապուիլ կարևոր
 է: Որպէս զի հաւատացեալն կարենայ կատա-
 ընել իւր պարտիս և ջանքերն, ի պահել և
 ի տարածելն աւետարանական ճշմարտութիւնս,
 որ լինի բաղմարդիւն և տեւական: Առանց
 տեսանելի եկեղեցւոյ բարւոք չկրնար կատար-
 ուիլ պատուիրանն, թէ “քարոզեցէք Աւե-
 տարանը բոլոր արարածոց,” և “սորվեցուցէք
 անոնց պահել ամէն ինչ որ պատուիրեցի ձեզ:”
 Նաև անդամակցութիւն եկեղեցւոյ կ'ըլլայ մեզ
 և մեր գերդաստանին օգտակար մինչև իսկ յետ
 մահու մերոյ, երբ մեր զաւակունք կը վարժուին
 քրիստոնէական ճամբուն մէջ: (Դ) Հարկա-
 ւոր է մկրտութիւն զի նա է խորհուրդ հաս-
 տատեալ ի Քրիստոսէ, և շնորհաց միջոց մը,
 որով կը հաճի Քրիստոս տալ մեզ զանազան
 պարգևներ: Այնպէս որ եթէ կը փափաքինք
 ընդունել պարգևս Հոգւոյն, ի կիրարկանել
 պարտիմք զամենայն միջոցս սահմանեալս յԱս-
 տուծոյ, ուստի և զայս: Նա՛ թէ անփոյթ լի-
 նել զմիջոցէս, որպէս և զայլոց, ցոյց է լինել
 անփոյթ զշնորհէ. և անարգել զայս, է ան-
 արգել Քրիստոսի սահմանադրութիւնն: Թէ

մկրտութիւնն ո՛րքան հարկաւոր է, տես և ի տետրակին «Թէ Մկրտութիւնն ի՛նչ դիրք ունի քրիստոնէական եկեղեցւոյ մէջ»

45. Նաև օգտակար է Վերստիւնն, զի (Ս) Մկրտեալն Ս. Աւետարանի հնազանդելոյ հանդիսաւոր ուխտ մը կ'ընէ, որ մեծ ազդեցութիւն կրնայ ընել իր վրայ, ըստ որում նախապէս պիտի խորհի և առաջադրէ: Որով բանականութիւնն փաստերով կը զօրանայ, խիղճն առիթ կ'ունենայ հնազանդութեան թելադիր լինել, բարեկամք, թշնամիք իսկ, կը զգուշացնեն զինք ի պահպանութիւն ուխտին, որ և այլոց կ'ըլլայ նախանձելի օրինակ: (Բ) Մկրտութիւնը կը ներկայէ մեզ և կը յիշեցունէ կարևոր ճշմարտութիւններ. զոր օրինակ, թէ պարտ է վերստին ծնանել. թէ մեք մեր անձին աէրը չեմք, թէ Աստուած մեր Հայրն է, Քրիստոս՝ Փրկիչ, և Հոգին՝ մխիթարիչ, և մեք եմք նորա սեպհական ժողովուրդ արժանացեալ մասնաւոր օրհնութեանց որոյ կնիքն ունան ունիմք ի մեզ: (Տես թիւ 19—22):

Ը. Եղանակ կրտստիւնն ջրոյ ի Վերստիւնն

46. Թէ պէտք է ի մկրտութեան օրծածել ջրը և ոչ այլ ինչ հեղուկ, ըսենք արիւն, գինի, վարդեջուր. և թէ պէտք չէ զանց ընել գոր-

ծածութիւնն ջրոյ, յայտ է անտի. զի (Ս) Մկրտութիւն, զոր Հրեայք և Յովհաննէս սկսեր էին գործածել, կը կատարուէր ջրով, որպէս և բազումք հրէական լուացմանց — մկրտութեանց (7, 8): (Բ) Քրիստոս, լաւ ևս է ըսել ընդ հեղինակութեամբ նորա աշակերտք, կը մկրտէին ջրով ըստ օրինակին Յովհաննու, (15): Եւ (Գ) Երբ Քրիստոս պատուիրեց մկրտել փոփոխութիւն չեցոյց ջրոյ գործածութեան: Հետևապէս և առաքեալք շարունակեցին մկրտեալ ջրով, որպէս և առնեն ցարդ եկեղեցիք:

47. Այլ թէ այս ջրը ի՛նչպէս օրծածել պէտք է, մկրտեալն կամ երախան ի ջրը ընկղմելով, նորա վերայ հեղը՞վ կամ սրսկելով, կամ այլով եղանակաւ, որոշակի բան մը ըսուած չէ ի նոր կտակարանի: Մկրտութիւն բառն, որպէս տեսանք ի խնդիր Ա., կը նշանակէ ընկղմել, հեղուլ, սրսկել և թրջել կերպիւ իւրք: Հրէական մաքրութեանց կամ մկրտութեանց մէջ երեք եղանակն և ուրիշ կերպեր ալ կային (3, 4, 7): Յովհաննու և Քրիստոսի կամ Աշակերտաց մկրտութեան եղանակի վերայ որոշակի բան մը չենք գիտեր (8, 9, 15): Եթէ երբէք լինէին ալ չէին օրինակ մկրտութեան ի Քրիստոնէութեան, որ երբէք նայիր այնքան արտաքին ծխից և ձևոց, որքան էր ի ծխականութեան Հրէից: Առաքելոց մկրտութեանց

մէջ ևս չիք որոշ ինչ ի վերայ եղանակի կիրառութեան շրոյ . և չիք մինչև իսկ երկու դէպք մկրտութեան որոշակի նոյն եղանակաւ կատարուած , այլ կ'երևի թէ ըստ պատշաճութեան պարագայից ընկղմել՝ հեղուկ և սրակել գործածեցին անխտիր և իբր անկարևոր պարագայ :

48. Ահա՛ ինչ է որ ֆրիստոնէութեան պէս կրօնի մը մէջ , որ կը վերաբերի հոգւոյ , սրտի և ներքին զգացմանց , իբրև հարկաւոր պայման ցուցուի շրոյ գործածութեան ֆակ և կարևոր եղանակ ինչ , քանի որ ի ծիսականութեան անդ Մովսիսի իսկ չկար : Ձիք երբէք որոշ եղանակ մը ունէ շնորհաց միջոցի կամ ծիսի կիրառութեան : Մինչև իսկ այնքան հանդիսաւորութեամբ և նկատելի հանգամանօք սահմանեալ Հաղորդութեան համար՝ չիք հրահանգ , թէ հացն ի՛նչպէս բաժնելու և գինին ի՛նչպէս մատակարարելու է , ընդունողներն ի՛նչպէս կենալու են և ի՛նչպէս հաղորդուիլ պարտին : Ի քարոզութեան և յընթերցման Ս. Գրոց , չիք հրահանգ կերպի , թէ ի՛նչպէս կենալու են ընթերցողք , խօսողք կամ ըսողք : Ձիք հրահանգ թէ ե՛րբ , ո՛րքան և ի՛նչպէս ծով պահել պէտք է , նա՛ թէ չիք բան , թէ ե՛րբ , ո՛րքան ատեն և ի՛նչպէս պաշտամունք կատարելու է : Որպէս և չիք որոշակի ինչ ,

թէ մկրտութեան շուրն որքան լինել պէտք է և ի՛նչքան տաք կամ պաղ , մկրտողն ու մկրտուելիք ո՛ւր կենալու են , երկուքն ալ ի ջրի՞ , թէ մերթ մին ի դուրս , և ո՛րքան ատեն կենալու է ի ջրին , երեք օ՞ր , երեք ժա՞մ կամ ըսպէ :

49. Կը պնդենք թէ շրոյ գործածութեան որոշ և ֆակ եղանակ չէ ցուցուած ի նոր կտակարանի : Քանզի (Ս.) Եթէ երբէք մկրտութեան մի քանի որոշ օրէնակներ ունենայինք ալ , ուր պարզապէս տեսնուէր թէ շրոյ գործածութեան եղանակն է յայտնապէս՝ սրակել կամ ընկղմել , աստի չէ հեռուէր , թէ ուրեմն սրակել կամ ընկղմել է միակ եղանակն : Ըստ որում թէպէտ աղօթից , ծումապահութեան և հաղորդութեան որոշ կերպեր ունինք , նոյն իսկ յանձին ֆրիստոսի , այլ ոչ ոք կը խորհի պահանջել որ աղօթից միակ եղանակն ըլլայ ծնկան վրայ դալ , կամ աչքերը յերկինս վերցունել . ծումապահութեան միակ եղանակն ըլլայ գեշեր ցերեկ բան չուտել : Հաղորդութեան ատեն , ոչ ոք կը խորհի թէ ընկղմանել պէտք է , որպէս ըրաւ ֆրիստոս ըստ սովորութեան Հրէից , կամ բազմոցներու վրայ նստիլ , և կամ հաղորդութիւնը միայն երեկոյի կատարել , և ինչ և ինչ :

50. (Բ) Եթէ երբէք ունենայինք մասնաորոշ օրէններ պատուէր յաղագս կիրառութեան

ջրոյ, ըսենք թէ ի Պէնտէկոստէի Պետրոս ընէր
 “Զուրը սրսկեցէք բազմութեան վերայ,” կամ
 ի տան կոռնելեայ խօսք ըլլար թէ “Ղուր բե-
 ըք նոցա վերայ հեղէք,” այս պատուէրներէն
 ալ չի հեռուէր, թէ ուրեմն մկրտութեան միակ
 եղանակն է սրսկել կամ հեղուլ: Բայ սկզբան
 թէ մասնաւորէ ընդհանուր չէ՝ հետեւական.
 որպէս ի հրահանգաց Յիսուսի, թէ “Երբ ա-
 ղօթք կ’ընես, նման չըլլաս կեղծաւորաց, որ
 կը սիրեն ժողովրդանոցներու մէջ և հրապա-
 րակներու անկիւնները կայնելով աղօթք ընել, . . .
 իսկ դու երբ աղօթք կ’ընես, մտիւր քու ներ-
 քին սենեակդ և փակէ դուռդ, և աղօթք ըրէ
 քու Հօրդ որ ի ծածուկ . . . որ հատուցում
 պիտի ընէ քեզ յայտնապէս:” Մատթ. 2. 5, 6:
 Այլ կա՞յ ոք հմուտ պահանջման Ս. Գրոց, որ
 աստի հետեցունէ, թէ ուրեմն աղօթից միակ
 եղանակն է “ի ծածուկ” և առանձինն աղօթել,
 հրապարակաւ կեղծաւորութիւն է: Հետեւու-
 թիւն, սակայն, որ առաւել բանաւոր կրնայ երևիլ
 քան մասնաւոր պատուիրանէ ջրոյ դործածու-
 թեան՝ հետեցնել, թէ ուրիշ կերպ չըլլար,
 պէտք է թաղել մկրտելին կամ անոր վրայ
 ջուր սրսկել: Նոյնպէս և մասնաւոր հրահանգ
 կամ պատուիրան է վասն հազորդութեան ի կո-
 ընթիս, թէ, “Եղբարք իմ, երբ ի մի վայր
 կը ժողովիք ուտել, իրարու սպասեցէք: Իսկ

եթէ ոք անօթի է, թող ուտէ ի տան, որպէս
 զի դատապարտութեան համար չժողովիք:”
 Ա. կոր. ԺԱ. 33: Ուր ամբողջ գլխոյ բացատ-
 րութենէն, որպէս և նախընթացէն, որոշակի
 կը տեսնուի, թէ կորնթացիք պէտք էր ուտե-
 լիք հաց և խմելիք գինի բերէին, կազմէին
 հասարակաց սեղան մը և կատարէին հազոր-
 դութիւն: Այլ աստի միթէ կը հետեւի՞, թէ
 ամէն քրիստոնեայք ալ այս մասնաւոր պա-
 րագայից մէջ տրուած հրամանին պէս ընելու
 են: Եւ միթէ քան զայստիկ պայծառ և ընդ-
 հանուր հրահանգ մը կամ հրաման կա՞յ ի վե-
 րայ եղանակի ջրոյ մկրտութեան:

ՅԱ. (Գ) Մինչև իսկ Յիսուս “Այսպէս մկր-
 տեցէք . . .” եթէ ըսած լինէր և օրինակն ալ
 տար, մկրտութեան մեկ եղանակ չպիտի համարուէր,
 մեկ որ Ս. Գրոց այլ վարդապետութեանց և սկզբանց
 չըլլար հասնայ: Քանզի պիտի կասկածէինք, թէ
 գուցէ մենք ճիշդ չենք հասկնար նորա ըսածն
 ու միտքը, այնու զի իր խօսքերն իրերաց ան-
 համաձայն չեն կրնար ըլլալ: Որպէս երբ ինք
 կ’աղօթէր, “Ով Հայր . . .” կ’ըսէր, և համա-
 ուտիւ կը վերջացունէր շատ անգամ: Եւ ըսաւ
 “Երբ աղօթք կ’ընէք, հեթանոսներու պէս շա-
 տախօս մի ըլլաք . . . ուստի աղօթք ըրէք դուք
 ա՛յսպէս: Ով Հայր մեր որ յերկինս . . .:” Մատթ.
 2. 7, 8: Այլ աստի կրնա՞յ միթէ հետեւիլ, թէ

միայն “այսպէս” և այս բանիւք և այսքան աղօթել պէտք է : Եւ Յիսուսի , մկրտութեան ատեն ըսած խօսքէն , “Սյսպէս կը վայելէ մեզ որ բոլոր արդարութիւնը կատարենք ,” միթէ կրնայ հետևիլ , պէտք է “այսպէս” ամենայն հաւատացեալք ջուրը մտնեն երբ կը մկրտուին : Եւ “այսպէս” ապա ինչո՞ւ չերթան յանապաս կամ առանձնանան և 40 օր պահեն . . . : Միթէ Գրիստոսի աղօթքն առաւել նմանելի օրինակ չէ՞ մեզ , քանի որ իբրև զմեզ աղօթեց , մինչ չմկրտուեցաւ երբէք իբրև զմեզ , այլ բոլորովին տարբեր պատճառներով (12—14) : Ո՞ր “Սյսպէս”ը մանաւանդ բանաւորապէս գործադրելի է մեզ , աղօթից թէ մկրտութեան . և եթէ նմանի միոյն մէջ “այսպէս” չենք ըներ , ինչո՞ւ պարտաւորիմք աննմանին մէջ միայն “այսպէս . . . մկրտիլ :”

Յ2. Հապա որպէս զի հաստատուի , թէ մկրտութեան ջրոյ գործածութեան միակ եղանակը այս է կամ այն , դեռ է պարտաւոր ընել ընդհանուր և Ս. Գրոց սկզբանց համաձայն : Օրինակներ , խօսքի ձևեր , հրահանգներ կամ մասնաւոր պատուէրներ չեն հաստատուեր միակ եղանակն : Բայց տես որ ո՛չ որոշ օրինակ մը կայ , ո՛չ հրահանգ և ո՛չ պատուէր , այլ միայն մէկ երկու խօսքերու անորոշ ձևեր : Ինչպիսի են Տիտ. Գ. 5 , “Ըստ իւր ողորմութեան փրկեց զմեզ

վերստին ծնանել առաջին թողաւ և նորոգմամբ . . .” Որպէս ըսեր ենք (47) թուի թէ ջուր մկրտութեան կը գործածուէր մերթսրակմամբ , մերթ հեղմամբ և մերթ թաղմամբ , ուստի և կը գործածուէր թերևս աւազան մը կրտութեան : Ուստի առաքեալն աստ մինչ կը խօսի վերստին ծննդեան վրայ , պատշաճ ձև մը կ'ըլլայ աւազանէն ծնանելու փոխարեութեամբ խօսել : Սյլ որպէս զի աստի հաստատուի միակ եղանակ մկրտութեան , պարտիմք մակարեբել , թէ 1. Սյս մկրտութեան աւազան էր * . 2. Սյս աւազան խոր էր և մեծ մինչև լինել բաւական չափահաս անձի մը ընկղմիլ նորա մէջ կամ թաղուիլ . 3. Ուրեմն աստ ի ջուր կ'ընկղմէր և կը թաղուէր մկրտելին . 4. Ուրեմն

* “Աւազան” թարգմանեալ վերջին բառը , որ է Յոյն բնագրի գործածուած է միայն Եփես. Ե , 26 և Տիտ. Գ. 5 համարներուն մէջ , չէ +օրոգիւմ , որ “աւազան” նշանակութեամբ գործածուած է Յովհ. Ե. 2 , 4 , 7 և Թ. 7 , 11 համարներուն մէջ , և որ անուն է և կը նշանակէ տեղի լուսցման (մկրտութեան , մաքրութեան) : Բայց վերջին բայտնուն է և կը նշանակէ լուսցումն (մաքրութիւն) , երեսը հետո լուսլ բայեն , որ կայ Յովհ. Ժ. Գ. 10 : Գործ. Թ. 37 համարներուն մէջ և փոխաբերաբար կը նշանակէ մաքրիլ ի մեզաց ի ձեռն Գրիստոսի , որ “իւր արեամբ լուսց զմեզ մեր մեղքերէն” : Յայտ. Ա. 5 : Ինչպէս թարգմանեալ է և ի Տաճկերէնի “սու իլէ հոյդա-մազ” , վէ “վէլատէթի սանիլ” (թէքրար տողուլ) ետյգամասը” (Եփես. Ե. 26 և Տիտ. Գ. 5) որպիսի է և Անգլիարէն թարգմանութիւնն , որ և ամբողջ իմաստին յոյժ յարմար կուգայ : Ուստի Հայերէն “աւազան” բառէն հաստատուելը Մկրտականաց պահանջն , թէ միայն ընկղմամբ կամ թաղմամբ կրնայ կամ պարտի լինել մկրտութիւն :

միշտ աւաղանի մէջ և այն թաղուելով կամ ընկղմամբ կ'ըլլայ եղեր այն ատեն մկրտութիւն, և ուրեմն... ընկղմելն է միակ եղանակ մկրտութեան: Եւ ուրեմն, պէտք է վրայ բերել, այսպէս հետեւութենէ հետեւութիւն և ենթադրութենէ մակաբերութիւն ընել՝ միթէ չըցուցներ, թէ որոշ խօսք չկայ եղեր մկրտութեան եղանակի վրայ:

ՅՅ. Կան և «նարկ+ եղանակ մկրտութեան»: Հռով. 2. 3, 4: «Չէ՞ք գիտեր թէ մենք որ Յիսուս Գրիստոսով մկրտուեցանք... անոր հետ թաղուեցանք մկրտութեամբ»: Եւ Կող. Բ. 12, «Թաղուելով անոր հետ մկրտութեամբ, որով նաև անոր հետ յարեաք հաւատով ներգործութեանն Աստուծոյ»: Այս և նման բանից ձևերէ, որպէս զի ցուցուի, թէ մկրտութեան միակ եղանակ ընկղմել՝ թաղել է, պէտք է նախապէս հաստատուի, թէ 1. Ասոնք կը վերաբերին արտաքին՝ ջրով մկրտութեան, ոչ թէ ներքնոյն՝ հոգևով կատարելի, մկրտութեան եղանակին, ոչ թէ իմաստին, ըստ որում գիտեմք թէ մկրտութիւն կրկին նշանակութիւն ունի (23, 24): 2. Թէ չկար յայնժամ մկրտութեան ջրոյ գործածութեան ուրիշ եղանակ, բայց միայն ընկղմել: Զի կրնան լինել ուրիշ եղանակներ ևս, այլ առաքելոյն բացատրելի նիւթոյն յարմարութիւնն՝ աստ թաղման

յարմար դարով այնու օրինակաւ կը խօսի, ինչպէս ուրիշ տեղ ալ սրսկման և հեղման ձևերով խօսքեր կան (ՅՅ, 57): Ինչպէս երբ կ'ըսուի, քան զայս ձև պարզագոյն, թէ «մկրտուած էին միայն Տէր Յիսուսի անուամբ» (Գործ. Բ. 16), Հետեւի թէ նոցա վերայ չէր կոչուէր նաև Հօր և Ս. Հոգւոյն անուն (17): Երբ կ'ըսուի որոշակի «հաց բեկանել» (Գործ. Բ. 42, 46. Ի. 7), որ կը նշանակէ տէրուական ընթրիք կատարել, Հետեւի թէ յայնժամ մի միայն հացով կը հաղորդուէին՝ առանց գինւոյ: Երբ առաքելալը կ'ըսէ «Կ'ուզեմ որ արք... աղօթք ընեն՝ սուրբ ձեռուրներ վերցունելով» (Ս. Տիմ. Բ. 8), աստի Հետեւի թէ միայն արք աղօթելու են, և ոչ երբէք կանայք, և թէ աղօթելոյ միակ կերպն է սուրբ ձեռքեր վերցնելով, առանց լուացուելու, և առանց ձեռքերը վեր բռնելու աղօթք չըլլար: Հետեւութիւնք, որ ոչինչ նուազ բանաւոր են, քան մի քանի թաղման խօսքերէ և ձևերէ հետեւցունել միակ եղանակ մկրտութեան:

ՅԿ. Այլ որպէս զի այն բանից ձևերէն հաստատուի միակ եղանակ, 3. պէտք է հաստատուի թէ կարևոր անփոփոխելի կամ եկան հանգամանք է, որ մկրտութիւնն ըլլայ միշտ այն եղանակաւ որպէս կ'ընէին յաւուրս Պօղոսի: Որովհետև կային բաներ, որք իբր սովորութիւնք և պատ-

շածութիւնք յաւուրս առաքելոց կը գործածուէին, այլ իբր անկարեւոր, փոփոխելի բաներ, զանց եղեր են: Զոր օրինակ, ոչ ոք կը հաւատայ թէ որպէս զի ընդունելի լինի ծումապահութիւն պէտք է «օծել զգլուխն», ինչպէս պատուիրեց Յիսուս: Ոչ ոք կը հաւատայ թէ երբ յանուն Տեառն աղօթք կ'ըլլայ հիւանդի վերայ պէտք է «օծել դնա» (Մատ. 9: 34): Ոչ ոք կը հաւատայ թէ պաշտաման կամ աղօթքի ատեն պէտք է կանանց գլուխը գոց ըլլայ ըստ նախկին տարազու, և արանց գլուխը բաց, եթէ ոչ չըլլար աղօթքն ընդունելի, որպէս կը հրահանգէ Պօղոս: Ա. կոր. ԺԱ: Որ և կը խօսի սիրոյ ընթրեաց, Ագաթի, վրայ, և զոր սովոր էին յայնժամ առնել ֆրիստանեայք, այլ այսօր կարծեմ ոչ մի եկեղեցի կ'ընէ: Ապա առանց վերի երեք կէտերն հաստատելոյ, չկրնար պնդուիլ թէ միակ եղանակ գործածութեան ջրոյ է ընկղմել կամ թաղել: Մինչև որ ուրիշ պարզագոյն տեղերով չհաստատուին այս կէտեր, հետևութիւնն լոկ ենթադրութենէ անդը չանցնիր, և չէ՛ երբէք հաւանելի և ոչ պարտաւորիչ:

ՅՅ. Հետևեալ դիտողութիւնք, ընդհակառակն հաւանական կ'երեւցունեն, թէ մկրտութեան միակ և անփոփոխելի եղանակ չէր ընկղմել զմկրտելին գլխովին ի ջուր, այլ հայն և՛

հեղման և՛ սրահման կերպեր: Քանզի (Ս) Մկրտութիւն՝ իբր ցոյց դաւանութեան պէտք է լինի հրապարակաւ՝ առաջի ժողովրդեան և ոչ յանկեան ուրեք: Այլ ընկղմել կամ թաղել, չափահասից համար և կանանց, կարի անվայել է մանաւանդ երբ լինի մերկութեամբ, անծածկոյթ, (զի չիք օրինակ հանդերձով թաղելոյ՝ ընկղմելոյ, և ոչ ակնարկ ինչ ի նոր կտակարանի): Նոյն իսկ ջատագովք ընկղմամբ մկրտելոյ կը զգան այս անպատկանութիւն, զոր բառնալոյ համար պէսպէս մարդահնար հնարից կը դիմեն: Նաև կ'ըլլան մկրտողին կամ մկրտելի անձին պարագայք որք չեն ներեր ընկղմիլ ի ջուր: Զոր օրինակ եթէ յանապատի չըլլար (և չկար իսկ) ընկղմելու չափ խոր ջուր, միթէ փելիպպոս պիտի չմկրտէ՞ր գնեքըինին, որ ուրախութեամբ ճամբան երթար, և զոր այլ ևս պիտի չտեսնէր, որոյ հետ ալ չէր կրնար երթալ, և որ զուցէ ուրիշ մկրտողի մը պիտի չհանդիպէր: Կրնայ լինել որ ցուրտ եղանակի, ցուրտ կլիմայի, հիւանդի և վիրաւորեալի հանդիպի մկրտել, որ եթէ ընկղմամբ կատարի, պիտի լինի փրասարեր: Այլ այս ամենայն դժուարութիւնք առ ի՞նչ պէտք են լոկ ձևի մը համար, և այն իբր սահմանեալ Անկէ, որ ըսաւ «Իմ լուծաքաղցր է, և իմ բեռս՝ թեթեւ է» կամ սահմանել այսպիսի բաներ յառաքելոց,

որք ժողովով գրեցին հաւատացելոց, թէ
 «Բարևոք թուեցաւ Հողւոյն Սրբոյ և մեզ ևս,
 աւելի բեռ չդնել ձեր վրայ» (Գործ. ԺԵ. 28),
 և որք նոյն իսկ մկրտութեան վրայ բան չեն
 դրեր, թող թէ ձևերու բեռ դնել մտաբե-
 րած ըլլան:

Յ6. (Բ) Զանազան կերպ օրինակն մտրո-լիւնէ կայն
 պահանջեալ յօրէնս կամ «պէսպէս մկրտու-
 թիւնք» ըստ Եբր. Թ. 10: Որպէս, «Սրբեցէք
 անձերնիդ ու սուրբ եղէք», կ'ըսէ Եհովան,
 «քանզի ես սուրբ եմ, ու բնաւ երկրի վրայ մէկ
 սողացող սողունով մը անձերնիդ մի պղծէք:»
 «Պղնձէ աւազան մը շինես լուացման համար,
 ու անոր մէջ ջուր լեցունես: Եւ Ահարոն ու
 անոր որդիքն իրենց ձեռքերը ու ոտքերը պի-
 տի լուան անկէ» (Ղևտ. ԺԱ: Ելից 1: Տես և
 Բ Մնաց. Գ. 16: Գ. Թագ. Է. 27—39):
 «Մովսէս օժման եղէն և սեղանին վրայ եղած
 արիւնէն առնելով Ահարոնի վրայ ու անոր
 հանդերձներուն վրայ՝ և անոր հետ անոր որ-
 դւոցը վրայ և անոր որդւոցը հանդերձներուն
 վրայ սրակեց», և զանոնք ու անոնց հանդերձ-
 ները «սրբեց»: «Բորտութենէն մաքրուելու
 մարդուն վրայ եօթը անգամ սրակէ», «զա-
 նոնք մտրթուած թռչունին արեանը այն կեն-
 դանի ջուրին մէջ պիտի թաթխէ, ու եօթն
 անգամ տանը վրայ պիտի սրակէ:» «Ղևտա-

ցիները առ... և զանոնք մաքրելու համար...
 մաքրութեան ջուր սրակես անոնց վրայ:» Ղևտ.
 Է. 30: ԺԳ. 7, 51: Թու. Բ. 6, 7: Տես և թիւ
 3—5: Եւ այս մաքրութեան ամէն ձևերն ալ
 գործածուեր են: Նոր կտակարանի մէջ ի ցոյց
 հոգևոր մաքրութեան և սրբութեան, ըսուած
 է, «Լուացելոյն ուրիշ բան պէտք չէ, բայց
 միայն լուանալ ոտուրները», «Մօտենանք ճըշ-
 մարիտ սրտով... և մեր մարմինները մաքուր
 ջրով լուացուած:» «Եթէ ցուլերու և նոխազ-
 ներու արիւնը և երինջին միսիւրը սրակուելով՝
 պղծեալները կը սրբէր... ո՛րչափ ևս առաւել
 Գրիստոսի արիւնը... պիտի սրբէ ձեր խիղճը
 մեռած գործերէ:» Քանզի Մովսէս «ցուլե-
 րուն և նոխազներուն արիւնն առնելով՝ սրակեց
 ջրով և կարմիր բրդով... և ըսաւ, Այս է
 արիւն ուխտին...: Եւ գրեթէ ամէն բան
 արեամբ կը մաքրուի ըստ օրինաց, և առանց
 արեան հեղման (ի վերայ իրիք) չըլլար թողու-
 թիւն:» Եբր. Թ. Ժ: Այս սովորութիւնք և
 բանից կիրառութիւնք միթէ հաւանական չէ՞ն
 ցուցներ, զէթ վերի (Յ2, Յ3) բանից ձևերուն
 չափ, թէ մկրտութիւն կ'ըլլար և՛ սրակմամբ
 և՛ հեղմամբ ջրոյ: Զոր օրինակ ի Պէնտե-
 կոստէի երեք հաղարաց մկրտութեան ատեն,
 ժողովրդոց մէջ և մկրտելոց, որոց սի-
 րելի էր՝ իմանալի և ընտանի նուիրական գոր-

ժածութեան այսպիսի կերպեր մաքրութեան ջրոյ, և պարագայից կարի յարմար և դիւրին (4—9):

57. (Գ) Մկրտութիւնն է մաքրութեան նշան՝ ի մեղաց և ի պղծութենէ, և նշան նուիրման առ Աստուած: Մկրտութիւնն սկսաւ գործածուիլ յազգի, որ արդէն ունէր մաքրութեան՝ սրբելոյ, նուիրելոյ, սովորական և օրինական եղանակս «պէսպէս մկրտութեան»: Եբր. Թ: Ուրեմն յուսալի է թէ գործածուեցան և յաւուրս առաքելոց՝ պէսպէս եղանակք կիրառութեան ջրոյ (48): (Գ) Ի նոր անտեսութեան ցուցուած է, թէ մաքրութիւն և ազատութիւն ի մեղաց՝ կ'ըլլայ արեամբ ֆրիստոսի, Գառլին Աստուծոյ, որ աշխարհի մեղքը կը վերցունէ: Եւ ի հին անտեսութեան այս մաքրութիւն եղաւ «սկիւմբ արեան զոհի ուխտին», «զոր Մովսէս առաւ և ժողովրդեան վրայ սրսկեց և ըսաւ, Ահա . . . Տէրոջը ձեզի հեա ըրած ուխտին արեանը»: Ելից ԻԳ: Ուստի և ի թղթին առ Եբրայեցիս (Գլ. ԺԲ.) կը ցուցուի, թէ ֆրիստոսի արեան սրսկմամբ կը մաքրուին հաւատացեալք: «Դուք մօտեցած էք . . . Յիսուսի՝ որ նոր ուխտի միջնորդն է, և սրսկուելու արեան՝ որ քան զարիւնն Աբելի աւելի լաւ կը խօսի»: «Ի սրսկումն արեան Յիսուսի ֆրիստոսի, շնորհք ձեզ և խաղաղութիւն բազմա-

նայ»: Ա. Պետ. Ա. 2: Ըստ այսմ օրինակի կարի հաւանական է թէ ջուր մկրտութեան գործածուեցաւ և սրսկմամբ:

58. (Ե) Մկրտութիւն կը նշանակէ սրբել զսիրտ և մաքրութիւն ի մեղաց շնորհիւ Հոգւոյն Սրբոյ (21), որ ցուցուած է, թէ Աստուած պիտի հեղուր է վերայ հաւատացելոց, որք իբր քահանայք և թագաւորք պիտի օծուէին: Ըստ այսմ թէ «Դուք օծութիւն ունիք սուրբէն», «Մինչև որ վերէն մեր վրայ Հոգի թափուի», «Իմ Հոգիս ամէն մարմնոյ վրայ պիտի թափեմ»: Ա. Յովհ. Բ. 20: Ես. ԼԲ. 13: Յովհ. Բ. 28: Եւ թիւ 7: Նաև ի մկրտութեան անդ ֆրիստոսի այսպէս հեղմամբ իջաւ Հոգին, որպէս և յառաքեալս, որոց վրայ բաժնուած լեզուներ նստան, և «ամէնքը լցան Հոգւով Սրբով»: Մատ. Գ: Գործ. Բ: Նոյն իսկ Հոգւով Սրբով լեցուիլ խօսքի ձևն յարմար է հեղման կերպի: Հաւանական է թէ և ֆրիստոս մկրտեցաւ հեղմամբ, ապա կարի հաւանական է թէ մկրտութեան ջուրը կը հեղուին, և հաւատացեալք ըստ օրինակին ֆրիստոսի կը մկրտուէին: (2) Նաև Ա. Պետ. Գ. 21, 22 մկրտութիւնը կը բաղդատուի ջրհեղեղի, որոյ մէջ «ընկղմեալք» կ'որեան, և վրան մնացողներն, «ուժ հոգիք, ապրեցան ընդ ջուր»: Եւ այս ձևք ասացուածոց և բացատրութիւնք են թաղբել կուտան

Թէ մկրտութիւն չէր լիներ միայն ընկղմամբ :
 (Է) Ի Գործս Առաքելոց յիշատակեալ մկրտու-
 թեանց օրինակներէն ոմանք, ինչպիսի են
 3,000 ին, 2,000 ին և ներքինւոյն յանապատի,
 որպէս ցուցաւ (ի թիւ 4), ոչ միայն մեծ դը-
 ժուարութիւն կը յարուցանեն ի ջուր ընկղմե-
 լոյ կերպին, այլ և կոռնելեայ՝ Պօղոսի և Բան-
 տապետի մկրտութիւնք, որք ի տան կատա-
 լեցան, իսկոյն և առանձինն, ընկղմամբ կա-
 տարելոյ պատրաստութեանց վրայ ակնարկ մը
 իսկ չկայ, որպէս և այլոցն : Իսկ եթէ միայն
 ընկղմել լինէր օրինաւոր եղանակն մկրտու-
 թեան, ոչ միայն յուսալի էր որ պատրաստու-
 թեանց յիշատակութիւնք ըլլային, այլ և այն-
 պիսի դժուարութեանց իսկ պատահէին, որք
 պատմութեանց մաս և յիշատակելի դէպքեր
 ըլլային : Նա՛, այնքան մկրտութեանց առթիւ
 կերպի վրայ որոշ բան չըսելն առաքելոց, դիւ-
 րաւ կատարելն և կատարեալ լուծիւնն պատ-
 ուիրանաց ցոյցեր են, թէ մկրտութեան որոշ
 եղանակ մը, մանաւանդ ընկղմել, չկար. այլ
 ըստ պատշաճի՝ «պէսպէս մկրտութեան» կեր-
 պերէն ոմանք կը գործածուէին : Տես զայս-
 մանէ և ի Յայտարար Ճշմարտութեան, երես
 45—53 :

Թ. Ննխակայ գրքոսկան

59. Արքայութիւն և պարագայութիւն ունին մեր-
 քոսկաննք, որ կ'ուզեն տեսանելապէս մրտ-
 նել Աստուծոյ ուխտին մէջ, և համարիլ ան-
 դամ սեպհական ժողովրդեան (22) : Ուստի
 անոնք որ ունին բաւական հմտութիւն քրիս-
 տոնէական վարդապետութեան, աշակերտեալ
 են, հրապարակաւ կը դաւանին զԱւետարանն
 և կ'առաջադրեն կամ կ'ուխտեն ապրիլ քրիս-
 տոնէաբար, եկեղեցին պարտի մկրտել զնոսա
 և ընդունել յանդամակցութեան : Այլ թէ ո՛ր-
 քան հմտութիւն և ֆրիստոնէական կենաց ո՛ր-
 քան վորձառութիւն կամ յառաջդիմութիւն
 ունենալ պէտք է մկրտելոյն, թէ ո՛րքան վըս-
 տահելի լինելու է թէ ապաշխարեր՝ նորոգ-
 ուեր է և հաստատուն է յուխտապահութեան,
 կը մնայ դատողութեան մկրտելոյն և եկե-
 ղեցւոյ, որոյ կ'անդամակցի, կամ պաշտօնէին,
 որ կը մկրտէ զնա : Այս մանրամասնութեանց
 օրինակ չկայ ի Գիրս : Գործ. Ը. 38 համարը,
 որ է դաւանութիւն մը պահանջել, թէ «կը հա-
 ւատաս որ Յիսուս ֆրիստոս Որդի Աստուծոյ
 է,» տարակուսական համար մը է, զի ձեռա-
 գրաց ոմանց մէջ չկայ : Եւ եթէ ըլլայ ալ,
 միակ օրինակ և այն ֆիլիպպոսի, ոչ թէ առա-
 քելոց, չկրնար լինել օրէնք եկեղեցեաց : Նոյն

իսկ Պետրոսի հեթանոսաց հետ կերակուր չուտելու օրինակը, որոյ հետևեցաւ Բառնաբաս իսկ, եթէ չէր հետևելի օրինակ հաւատացելոց (Գաղ. Բ.), ինչո՞ւ լինի օրինակ ամենայն եկեղեցեաց տարակուսական օրինակ ինչ փիլիպպոսի մը :

60. Ամենայն ծնողք որ կ'անդամակցին եկեղեցւոյ, կամ կը մկրտուին, ֆրիստոնէութեան կրօնն կընդունին, արածնութիւն և պարտաւորութիւն ունին մկրտելոյ նաև շքերէի և շքաբեկի կամ զորս ունին ընդ ինամովք իւրեանց, որ է երեւոյ յինչ արեւ զն : Այսպիսի է սահմանադրութիւն եկեղեցւոյ կամ ուխտի, որ սկսաւ յԱբրահամէ : Ծնողք թէ Եւ անկէ հետէ նոյն է եկեղեցին և պիտի մնայ նոյն ցլխածան աշխարհի, թէ և ստանայ զարգացումն նման մանկան, որ կը զարգանայ կ'ըլլայ պատանի՝ երիտասարդ՝ չափահաս և այր կատարեալ, իսկ ինք նոյն անձն է : Այս սահմանադրութիւն չէր ծիսական՝ Մովսիսական կամ Հրէական, որ իբր հինգ դար յետոյ յաւելաւ իբր ստուեր դալու բարեաց, և պիտի փոխուէր և անոր յաջորդէր իսկականն ու կատարեալը : Այս ուխտ և արածնութիւն պիտի ըլլար յաւիտենական, եթէ երբէք լինէր փոփոխութիւն արտաքին պարագայից, որպէս և եղև ի նոր անտեսութեան, ուր փոխան թլփատութեան, մուծաւ

մկրտութիւն : Այլ փրկութեան ուխտ և նորին օրհնութիւնք և արածնութիւնք են և պիտի մընան նոյն. սոսկ նշանի մը փոփոխութիւնն երբէք չէ առիթ փոփոխութեան արածնութեան կամ պարտաւորութեան : Որպէս փոփոխութիւն աւուր հանգստեան շաբաթէ ի միաշաբաթ, կ'իւրակէ, չլիտխեր երբէք շաբաթու կամ կ'իւրակէի պահպանութեան պարտիս և զարտօնութիւն : Տես զայսմանէ և ի ճառ Մկրտութեան և վերստին ծննդեան Գլ. 9 :

61. Հաւատացեալ ծնողաց ընդ որդիս՝ Աստուծոյ հետ ուխտի մտնել, կամ անչափահաս զաւակաց՝ իրենց հաւատացեալ ծնողաց հետ եկեղեցւոյ մէջ մտնելու արածնութիւն և պարտաւորութիւն՝ հաստատեալ է ժառանգականութեան մէջ և կարող չի ըլլալ, զոր Ս. Գրոց շատ մը իրողութեանց՝ խոստմանց և սպառնալեաց մէջ բացայայտ կ'երևի : (Ս.) Ամբողջ ֆանան պէտք էր նուաճել, նախկին բնակիչք պէտք էր, եթէ հարկը պահանջէր, կոտորել, որ իսրայէլ ժառանգէր զնա, զի իրենց հարց խոստացեալ ժառանգութիւն մը էր : Մէն մի ցեղ և տոհմ ու գերդաստան ունեցաւ հոն անդաստան ի ժառանգութիւն, զոր ոչ ոք կրնար առնուլ, և դէթ յիսուներորդ տարին, ի Յոբելինի, իրենց սեպհականութեան պիտի դառնար : (Բ) Ժառանգութիւն կար պաշտաման թէ՛ ի կրօնաւոր

կանս և թէ ի քաղաքականս : Ղևտացւոց ցեղը պիտի լինէր խորանի և ապա տաճարի պաշտօնեայ, յորոց միայն Ահարոնի որդիք և սերունդը կրնային լինել քահանայ, և ի սոցանէ մին՝ ֆահանայապետ, որ ժառանգութեամբ կ'ըլլար : Դաւթի սերունդը պիտի լինէր թագաւոր, որ էր ժառանգութիւն յԱստուծուստ սահմանեալ : (Գ) Բարեպաշտն «մինչև հազար ազգ» օրհնութիւն պիտի ժառանգէր, և ամբարշտին «մինչև չորրորդ ազգ» հատուցում պիտի լինէր, ըստ օրինաց զոր Աստուած իւր մատամբն գրեց : Ելից ի : Ըստ այսմ շատ մը օրհնութիւնք կան խոստացեալ «վասն Աբրահամու, իսահակայ և Յակոբայ», «վասն Դաւթի» և «վասն սիրելոյ . . .» Ինչպէս և սպառնալիքներ, թէ ամբարշտաց սերունդը բնաջինջ պիտի ըլլայ : (Դ) Բարոյական և հոգևոր վիճակ, ինչպէս և մարմնաւոր ու մտաւորն ալ, ժառանգութիւն կը մնան ի ծնողաց : Աղամ մեղանչեց և անոր սերունդն, մարդկային սեռը, անկաւ իրեն հետ : Հռով. Ե : Ինչպէս և երկրորդ Աղամ, Գրիստոս, իւր արդարութեամբ կու տայ ժառանգութիւն հաւատացելոյ, որպէս իւր սերնդեան, հետևողաց՝ արդարութիւն և յաւիտենական թագաւորութիւն : Աղամ իր պատկերին պէս մարդ ծնաւ, Դաւթ ալ «ի մեղս ծնաւ զիս մայր իմ»

կ'ըսէ : (Ե) Կրօնն ալ, ոչ թէ ներքինն՝ բարեպաշտութիւն և փրկութիւն, այլ իբր սոսկ արտաքին կրօն, վարդապետութիւն և պարտաւորութիւն, իբրև ժառանգութիւն պիտի մնար որդւոց, որք եթէ յանչափահասութեան իւրեանց անտի խոտորէին, ծնողք և մերձակայք իրաւունք ունէին մինչև իսկ քարկոծել տալ զնոսա : (Զ) Այսպէս ամէն փոխադրելի բան կ'անցնէր և դեռ կը տեսնենք թէ իրօք և օրինօք կ'անցնին ի ծնողաց՝ որդւոց, ի նախնեաց՝ առ յապա եկելոց : Նոյն խի Աստուած, և այն ի Նոր Կտակարանի, նկատուած է իբր Հայր, որ պատրաստեր է զամենայն վայելք և միջոցս երանութեան՝ վասն որդւոց մարդկան, որոց ուրիշ բան չմնար բայց միայն ընդունել զանոնք և ժառանգել : Բ կոր. Ե : Այնքան կարևոր և ճօն նիւթ, որոյ վերայ երկու պատրաստեալ քարոզ ունի հեղինակն, և զորս ի լոյս հանել կը փափաքի եթէ արժան գատեն բարեկամք և բարերարք :

62. Եւ ահա ժառանգականութեան մեծ և նկատելի այս սկզբան մասնաւորութիւնքն համարելի են հետևեալք, որք վերաբերութիւն ունին մանկանց ընդ ծնողս եկեղեցւոյ ծոյն ընդունելոյ խնդրոյն : Այն է թէ հասարակեալ պարտին ուրիշել ընէ «Ես և իմ որոնս Եհովան պիտի պաշտենք» որպէս արար Յետու : Յետ . ԻԴ :

Եւ որպէս վկայէ Աստուած վասն Աբրահամու , թէ “Գիտեմ զանիկա , որ իր որդւոց ու իրմէ ետքը իր տանը պիտի պատուիրէ , և անոնք արդարութիւն և իրաւունք ընելու համար Տէրոջը ճամբան պիտի պահեն . որպէս զի Տէրը Աբրահամին վրայ բերէ ինչ որ խօսեցաւ :” Այսինքն , թէ “Երկրի բոլոր ազգերը Անով պիտի օրհնուին :” Ծննդ . ԺԲ . 18, 19 : Ծնողաց այս պարտաւորութիւն և կատարելի ուխտ յընթացս ժամանակաց , նման ծրագրի Յայտնութեանն Աստուծոյ , կը պարզուի և կը բացատրուի : “Քու հոգւոյդ շատ զգուշութիւն ըրէ ,” կըսէ Մովսէս ուխտելոյն , “որ չըլլայ թէ աչքերուդ տեսած բաները մոռնաս . . . զանոնք քու որդիներուդ և որդւոցդ որդիներուն սորվեցընես . . . : Տէրը ինձի ըսաւ , Ժողովուրդը ինձի ժողովէ , և իմ խօսքերս ըսել պիտի տամ անոնց . . . և իրենց որդիներուն ալ սորվեցընեն :” “Այս խօսքերը , զոր ես այսօր քեզի պատուիրեցի ,” կ’ըսէ Տէր Եհովան , “քու սրտիդ մէջ ըլլան . և զանոնք քու որդւոցդ կրկին և կրկին անգամ սորվեցընես :” “Այսօր դուք ամէնքդ . . . բոլոր իսրայէլի մարդիկը ձեր տղաքը , ձեր կիները , քու փայտ կարողէդ մինչև քու ջրկիրդ , որ քու Տէր Աստուծոյդ ուխտին և անոր երդման մէջ մտնես . . . : Եւ ես այս ուխտը մինակ ձեզի հետ չեմ ը-

ներ . . . այսօր մեզի հետ հոս չեղողներուն հետ ալ :” Բ 0ր . Գ . 9, 10 : Զ . 7 : ԻԹ 10 : Նկատելի է թէ Աստուծոյ նախնի ժողովուրդը , Եկեղեցին , պատրաստեալ և արտօնացեալ կամ պարտաւորեալ չէր որ աստուածաշտութեան կրօնն տարածել աշխատի առ դուրս հեթանոսաց , ուրիշ ազգաց : Իսկ մեծ խնամք տարուած է , ինչպէս կ’երևի վերի կոչումներէն , կրօնն իրենց մէջ , ի Հրեայս , ի տան պահել և զարգացունելոյ , ծանր պարտքեր՝ որք կը մնան և նոր ժողովուրդեան , Քրիստոնէից վրայ , որք մասնաւոր հոգ և փոյթ ընել պարտին կրթել զորդիս “Տէրոջը խրատովն և վարժութեամբ :” Գրսիներուն ալ պարտին քարոզել զԱւետարանն , այլ մանաւանդ իրենց զաւակաց , որք իրենց հետ կրօնի և նորա հրահանգութեանց մէջ են : Չեն անոնք օտար , այլ “սուրբերուն քաղաքակից և Աստուծոյ ընտանիքը ,” Եկեղեցւոյ մկրտեալ անդամները , իբրև Քրիստոնէական կրօնի ներքին “չնորհաց ժառանգներ ,” այլ դեռ խնամակալներու տակ :

63. Բ 0րինաց ԻԹ . զԼխոյ բանք , զոր ի վեր անդ (ի թիւ 62) համառօտեցինք , կը ցուցնէ թէ քնոյ՞ ուխտ և երդում կ’ընեն շատ ի դեմաց իրենց որդւոց և սպառնայ սերնդեան : Եւ է օրինակ մը շատ ուխտերու , զոր ըրաւ Աստուած ընդ Աբրահամու՝ Իսահակայ , և Յակոբայ . ցոյց կապակ-

ցութեան տան գլխոյն և ընտանեաց հետ, որպէս եցոյց Նոյի և Ղովտայ, Գաղանայ և Աբելրոնի պարագայից մէջ: Ուխտ, վերջապէս, զոր ըրաւ Աստուած Քրիստոսի, մեղաւորաց փոխանորդին, հետ: Ապա և հաւատացեալն որ ունի իր սերնդեան, գէթ ներկայ և անչափահաս զաւակաց հետ այսպիսի սերտ և սեռն կապակցութիւն, պարտի ուխտել Տէրոջը վարժութեամբ և խրատով սնուցանել զանոնք (Եփես. 2. 4), և կը պարտաւորի, ինչպէս իր անձին նոյնպէս և նոցա խնամ տանել ի զարգացումն յաստուածպաշտութեան: Աստուած ևս փոխադարձաբար կը խոստանայ և նոցա լինել Աստուած, այն է մասնաւոր խնամօք պահել զնոսա և շնորհօք օրհնել: «Իմ ուխտս պիտի հաստատեմ», կ'ըսէ Աստուած առ Աբրահամ, «յաւիտենական ուխտ մը, որ քեզի ու քեզմէ ետքը քու սերունդիդ Աստուած ըլլամ»: «Գիտցիր որ քու Տէր Աստուածդ... հաւատարիմ Աստուած (է)... մինչև հազար ազդ ուխտ ու ողորմութիւն կը պահէ:» Ծննդ. Ժէ. 7: Բ. Օր. Է. 9: Տես և Եսայ. ԽԱ. ԽԳ. 3: Երեմ. ԼԱ. Սաղմ. ՃԺԲ: Ղուկ. Ա. 54, 55, 68—73: Մարդոց իրենց ուխտին հաւատարիմ գտնուելուն չափով՝ առ հասարակ բարեպաշտութեան մէջ կը զարգանան ապաքէն որդիք հաւատացելոց: Մանաւանդ

հաւատարիմ Աստուծոյ նախախնամական և մասնական տնօրինութեամբ է, որ կը տեսնենք թէ բարեպաշտ անձինք՝ փրկեալ հողիք խիստ մեծ թուով Քրիստոսնէից տուներէն, սերունդէն, են, քան թէ հեթանոսութենէ դարձողներ: Եկեղեցին իր որդւովք մանաւանդ կ'աճի և կը զարգանայ, քան թէ նորադարձներով:

64. Սերնդական կամ ընտանեկան այս ազդեցութիւնը և կապակցութիւնը նկատելով էր, որ երբ Քրիստոս տեսաւ թէ ապաշխարեց Զաքէոս, միայն Զաքէոս, ըսաւ, «Մյուս փրկութիւն եղաւ այս տան:» Պօղոս ալ այս սկզբամբ է, որ Ռնեսիփորոսի տան վրայ Աստուծոյ ողորմութիւնը կը մտղթէ, թէ և միայն Ռնեսիփորոս էր ծառայութիւն ընողն: Ղուկ. ԺԲ. 9: Բ. Տիմ. Ա. 13: Տես և Մատթ. Ժ. 13: Երբ Յայրոս հաւատաց, կը կարգանք թէ իր տունն ալ հաւատաց. ընդ հակառակն եթէ որդիք անհաւատ լինէին կամ չար, չար կը համարուէին և ծնողք նոցա: Այնպէս զի երկցունք և սարկաւազունք պէտք է իրենց զաւակները կրթած ըլլան. եթէ անզոքանք են որդիք, անարժան են և ծնողք երկցութեան և սարկաւազութեան: Յովհ. Գ. 53: Ա. Տիմ. Գ:

65. Արդ առաւելու ալ գիտէին սերնդական կապակցութիւնը, և դուցէ քիչ մը չափն անցնելով երթային իրենց ազգային նախապաշարմանց,

զոր ունէին գուցէ (Յովհ. Թ. 2), թէ մինչև իսկ Աբրահամու օրհնութիւնն իրենց և իրենց սերնդեան ալ կ'ազդէ : Գիտէին ևս թէ ծնողք իրենց և իրենց որդւոց համար ընտրելու են թէ զո՞վ պիտի պաշտեն . ի՞նչ կրօն պիտի ընդունին՝ իրենց և իրենց տանն համար , (Յես . ԻԳ) զոր հրապարակաւ դաւանելու են և ուխտել պարտին հանդերձ զաւակօք : Գիտէին թէ հեթանոսութենէ եկողներն ի Հրէութիւն, կամ յաստուածպաշտութիւն, իրենց զաւակօք հանդերձ կ'ընդունուին յեկեղեցին (Յ, 6) : Գիտէին թէ կայ Եկեղեցի մը յԱբրահամէ անտի հաստատեալ, երկնից թաղաւորութիւն մը, ուր պիտի դային և հեթանոսք և ընդունուէին՝ ինչպէս ընդունուեցաւ իրենց հայրն Աբրահամ հանդերձ զաւակօք և տամբ : Գիտէին թէ ֆրիստոսի շնորհաց պէտք ունին և կրնան ընդունել անկէ օրհնութիւն, և մանկունք յորոց բերնէն իսկ կը հաճի նա ընդունել օրհնութիւն : Մատթ. ԻԱ. 16 : Մանաւանդ թէ մանուկները արդեւ ընուն համար, զիտեն թէ ֆրիստոսէ յանդիմանութիւն մը լսեցին : Հապա, քանի որ ֆրիստոս մանուկները իրենց ծնողաց հետ չընդունելու յատուկ պատուէր մը չտուաւ, անչափահասները կրօնէ՞ ֆրիստոնէութենէ, յեկեղեցւոյ մերժելու բացառութիւն մը կամ բացատրութիւն, դէթ ախարկ մը որ չըրաւ,

կրնային արդեօք առաքեալք միայն չափահասները ընդունել և մկրտել . իսկ անոնց զաւակները իբրև պիղծ և հեթանոս մերժել և չմկրտել : Կա՞յ միթէ և նոցա վարդապետութեանց մէջ այսպիսի խարուժեանց ցոյց մը . կա՞յ իրենց գործոց պատմութեան մէջ անչափահասներն մերժելու դէպք մը :

66. Մանաւանդ թէ իրենց խօսքերով՝ իբր այն թէ կը կրկնեն և որոշակի կը հաստատեն նախնական սկզբունքներն ու խոստումներն : Բանդի ի Նոր Կտակարանի ունիմք միայն տասն դէպք մկրտութեան, որոց երկուքն էին Պողոսինն ու ներքինւոյն, ոյք չունէին որդիս, զոր յեջել պէտք ըլլար : Երկուտասան արք, որք մկրտեցան յեփեսոս (Գործ. ԺԹ), չըսուիր թէ զաւակաց տէր էին կամ ոչ, և եթէ ունէին երբէք, հետերնին յեփեսոս էին թէ այլ ուրեք : Կ'ըսուի թէ Մամարացիներէն «կը մկրտուէին (հաւատացեալ) արք և կանայք,» առանց մասնաւոր ակնարկութեան ինչ ի վերայ զաւակաց նոցա : Այլ յաւուր Պէնտէկոստէի մկրտեալ 3,000 անձինք չերևիր թէ ամենեքին չափահաս անձինք էին : Բստ որում Պետրոսի քարոզութեան բնաբանն էր «վերջին օրերը . . . իմ Հոգիէս պիտի թափեմ ամէն մարմնոյ վրայ,» որոց մէջ կան բաց յուստերաց և ի դասերաց, յերիտասարդաց և ի ծերոց, թերևս մանուկ-

ներ ու տղայք = ֆանդի և վերջաբանն է «խոստմունքը ձեզ է և ձեր որդւոց» անխտիր, և որ մասնաւորապէս շեշտեալ է և յաւելեալ: Ուստի և «անոնք որ ի սրտէ ընկալան անոր խօսքերը՝ մկրտուեցան»: Այլ դիտելի է որ չըսեր թէ այսպիսի հաւատալով մկրտեալք քանի էին, այլ թէ «նոյն օրը իբր երեք հազար անձինք աւելցան.» և այն ո՞ւր, ի՞նչ բանի վրայ, եթէ ոչ «յեկեղեցին», որոյ վերայ «Տէրն օր ըստ օրէ կը յաւելուր փրկուածները»: Գործ. Բ: Եւ ըստ որում Հրէից սովորական էր ընտանեօք մտնել յախտ, լինել անդամ Եկեղեցւոյ և երբէք չէր եղեր բարեփոխում մը յայսմ, բնականապէս պիտի հասկցուի, թէ մկրտեալք էին հանդերձ ընտանեօք և զաւակօք իբր 3,000 անձինք, որ այն «խոստրեալ ազգէն» ազատեցան՝ զատուեցան ի հոգևորս միայն (Համար 40), զի թէ և «ամէն օր կը յաճախէին տաճարը», այլ «առ անին կը բեկանէին հացը»: Թէ այս երեք հազարք չէին միայն չափահասք, այլ կային և անչափահասք, անդամք նոցա ընտանեաց, կարի հաւանական է նաև այնու, որ մի քանի ամիս ետքը, երբ այս անդամոց թիւ հասեր էր ցհինգ հազար, Ստեփաննոսի մահուան վրայ ցրուեցան, և եթէ 3,000 անձանց ամէնն ալ չափահասք էին, երևնց ընտանեօք և զաւակօք կ'ըլլային 15,000-

20,000 հոգիք = Այլ այս մեծ բազմութիւն ո՞ւր գնացին, ի՞նչ գործ տեսին. պատմութիւնը կը լռէ. յորմէ կրնայ հետևիլ թէ, ասոնք մանր ու խոշոր 5,000 ի չափ անձինք էին, յորոց իբր 1,000 չափահասք աշխատեցան խօսքը տարածելով:

67. Այլ մեք ի Գործս Առաքելոց պատմեալ մկրտութեան դիպաց մէջ ունիմք այս հաւանականներէ շատ պարզ հինգ օրինակներ, ի հաստատութիւն թէ դաստիարակութիւնը և զաւակօք հանդերձ կ'ըլլար անդամ Եկեղեցւոյ, ուստի և կը մկրտուէր ըստ սովորութեան Հրէից = (Ա) Տէրը թէ և միայն «Լիդիայի սիրտը բացաւ», այլ «մկրտուեցաւ ինք և իւր տունը, աղաչեց և ըսաւ... մտէք իմ տունս, բնակեցէք»: Գործ. Ժ. 9: Եւ ըստ որում վերի դիտողութիւնք (62—64) կը հաւաստեն, թէ տուն, աստ պէտք է իմացուի զաւակունք = Աւելորդ կ'ըլլայ և անտեղի առարկել, թէ դուցէ անոր մէջ մանուկներ չկային: (Բ) Միայն բանտապետն էր որ ըսաւ, «Տեա՛րք, ի՞նչ ընել պարտ է ինձ՝ որ փրկուիմ», իսկ պատասխանն կ'ընդարձակէ ըսելով «Հաւատա և պիտի փրկուիս դու և տունդ», որ ըսել է ֆրիստանէական Եկեղեցւոյ մէջ պիտի մտնէք թէ՛ դու և թէ՛ տունդ, զաւակունքք: «Ապա խօսեցան անոր և ամենուն որ անոր տան մէջ էին», տան սպասաւորաց

և հիւրերու, թերևս : Վերջը բանտապետը
 «մկրտուեցաւ ինք և բոլոր իրենները,» թէ՛
 տունը՝ ընտանեօք և զաւակօք, և թէ՛ տան
 մէջ եղող սպասաւորները, և «բոլոր տամբ
 ուրախ եղաւ՝ հաւատարով յԱստուած :» Գործ.
 Ժ. 2 : Եւ աստ զխտելի է թէ՛ տուն, տան մէջ
 եղողներ, իրեններ ու բոլոր տուն, տարբեր
 բառեր են և տարբեր ընդարձակութիւն պէտք
 է ունենան, այն է ընտանիք կամ զաւակունք,
 սպասաւորք և հիւրք, և ասոնց բոլորը միան-
 դամայն : Որպէս կ'երևի և (Գ) ի դէպս կոռ-
 նելեայ, որոյ հրեշտակն ըսեր էր, «պիտի փըր-
 կուիս դու և բոլոր տունդ,» որոց հետ ապա
 ժողովեց կոռնելիոս նաև «իւր աղգականները
 և մտերիմ բարեկամները :» Եւ ասոնց ամե-
 նուն, այն է թէ՛ կոռնելիոսի, թէ՛ անեցւոց
 և թէ՛ հիւրոց վրայ իջաւ Հոգին և Պետրոսէ
 մկրտուեցան : Գործ. Ժ. ԺԱ, 14, 15 : Որպէս
 և (Գ) «Կրիսպոս ժողովրդապետ իւր բոլոր տնով
 հաւատաց,» ոչ թէ անեցիք ևս կը հաւատան,
 այլ միայն ինք, որոյ հետ կը մկրտուին բոլոր
 անեցիք ևս : Եւ թերևս նման կրիսպոսի ու-
 ըրչներ ալ իրենց «բոլոր տամբ հաւատացին,
 և մկրտուեցան,» ու կաղմեցին կորնթոսի մեծ
 եկեղեցին (Գործ. ԺԲ), յորոց մին էր (Ե) «Ստե-
 փանէսի տունը,» որպէս և Գայիոս, որ նման
 կրիսպոսի թերևս հանդերձ ընտանեօք մկրտե-
 ցաւ ի Պողոսէ : Ա. կոր. Ա. :

68. Այս բացայայտ օրինակք մկրտութեանց՝
 կը հաւաստեն թէ տանուտեարք «հանդերձ
 տամբ» իւրեանց կ'ընդունէին ֆրիստոնէական
 կրօնն և կ'ըլլային անդամ տեսանելի եկե-
 ղեցւոյ : Եւ այս գէթ կորնթացւոց համար,
 որք թէև մկրտութեան վրայ շատ խտիր ու-
 նէին և պարծանք, լմնցած խնդիր էր, թէ
 երբ երկու ծնողք, հայր և մայր, հաւատան,
 ա՛լ զաւակաց մկրտութեան չիք տարակոյս :
 Սակայն ծնողաց ֆն ֆայն ելէ լնէր հասարակեալ
 և միւսն անհաւատ, այնպիսեաց որդիք մկրտ-
 տելի՞ և ընդունելի՞ են յեկեղեցին, թէ՛ ոչ,
 մաքուր են թէ՛ պիղծ : Ասոր ի պատասխան
 կը գրէ առաքեալը, թէ մի ծնողի հաւատքով
 «ձեր որդիք... հիմա սուրբ են,» ըսել է նուի-
 րական և ընդունելի են : Եւ զխտելի է թէ
 ի բնագորին ևս մաքուր տարբեր բառ է, քան
 սուրբ, որով այր կամ կին ևս սրբեալ կը հա-
 մարուին : Ուստի այս «սուրբ» բառը կը նշա-
 նակէ օրինական ամուսնութիւն՝ պարկեշտու-
 թիւն, և մաքուր՝ կրօնական ընդունելութիւն՝
 անդամակցութիւն : Ա. կոր. Է : Տիմոթէոսի
 համար կը կարգանք (Գործ. Ժ. 2) թէ Պօղոս
 առաւ զնա և ի չափահասութեան թրիատեց,
 զի հայրը Յոյն ըլլալով՝ զնա չէր թրիատած
 ի մանկութեան նորա : Իսկ չիք երբեք յիշա-
 տակութիւն ինչ թէ այս ինչ ոք մկրտեցաւ

ի չափահասութեան զի չէր մկրտեալ ի մանկութեան : Մանաւանդ թէ եկեղեցւոյ ուղղեալ նամակաց մէջ խրատներ և յորդորներ կան նաև որդւոց ուղղեալ, առանց նշանի իրիք, թէ նորա կը տարբերին իւրք չափահասներէ, կամ նոր մկրտեալ են՝ երբ հասեր են ի չափահասութիւն : Եփես. Ս. 1 բաղդատէ 2 : 1-3 ի հետ : Կող. Ս. 1, 2 բաղդատէ Գ. 20 ի հետ :

69. Եւ զի պարճաւ որ անչափահաս մանկուսի դո՛ւրս ման ի տեսանելի եկեղեցւոյ, մինչ իբր անմեղք, անդամ են անտեսանելոյն և «երկինքը դըրուած անդրանկաց»՝ Ուստի «թող տուէք այդ մանր տղայոց», ըսաւ Յիսուս, «քանզի երկնից թագաւորութիւնն այդպիսեաց է :» Ս. յս թագաւորութիւն եթէ յերկրի տեսանելի եկեղեցին է որոյ դուռը ինքն Տէրը կը բանայ նոցա առջև, այլ ո՞վ է որ գոցել իշխէ : Յայտ. Գ. 7 : Երկնից թագաւորութեամբ՝ Յիսուս եթէ իմացունել կ'ուղէ երկինքը, փրկելոց կամ արդարոց խումբը, անտեսանելի եկեղեցին, հապա մանկունք որ յարմար են երկնից, ինչո՞ւ չըլլան յարմար և եկեղեցւոյ : Մատթ. ԺԹ. 14 : Ղուկ. ԺԲ. 16 : Եթէ Քրիստոսի այս վկայութիւն չէ ընդունելի կամ բաւական ընդունել զքոյ յեկեղեցի, հետևապէս մկրտուելու, ալ ո՞վ և որո՞ւ վկայութեամբ կրնամք գտնել յարմարն ու արժանին : Եթէ վտանդ կայ որ սոքա

ի չափահասութեան մոյլն և մոլորն, միթէ նոյնը չկայ և վասն չափահասից երբ փորձութեանց պատահին : Եթէ քրիստոնեայ ծնողաց զաւակունք ոմանք որք ի չափահասութեան մկրտեալ են, չեն ըլլար բարեպաշտ, միթէ և ի չափահասութեան մկրտելոց ոմանք ևս չե՞ն ըլլար ամբարիշտ, որք կան մասն յեկեղեցւոյ իբրև որով ի ցորենի : Նոյն խակ Անանիա և Սափիրա, նա՛ Սիմոն Մոգ, որք մկրտեալ էին «իրենց հաւատքին» վրայ, ի չափահասութեան, չմոլորեցա՞ն միթէ : Յիսուս յանդիմանեց զփարիսեցիս և զքալիբոս, որք չէին ճանչնար արժանիքն աղոց՝ անչափահասից, յորոց ուխանաններն ինք ընդունեց հաճութեամբ, ըստ այնմ թէ «Մանկանց և կաթնկեր տղայոց բերնէն գովութիւն կատարեցիր :» Մատթ. ԻՍ : Որպէս և Յովհաննէս յարգանդէ մօր սկսաւ խաղալ և օրհնել զՍատուած : Ղուկ. Ս. 41, 44 : Եւ չէ անհիմն հաւատալ, թէ Յիսուս մինչ կը յանձնէր առաքելոց, յատկապէս Պետրոսի, խնամել զեկեղեցին, հովուել զչափահասս իբրև խաչն և «ոչխար», յիշեց նաև «գառնուկներն» ի ցոյց անչափահաս մանկանց նորա : Յովհ. ԻՍ :

70. Չունիմք տեղի և նպատակ ի մէջ բերել այլալեզու մատենադրաց վկայութիւնները ցուցնելու համար թէ առատելոց ժամանակն ի վեր փրե՞ս

որոնեայ շնորհաց զառակոսնս կամ անչափահասներն ևս մերթել սովորութեան և դաժն էր ։ Բաւական ըլլայ բովանդակել, թէ յերկրորդ դարէ ի վեր, «մանր աղոց մկրտութիւնը՝ կը համարուէր առաքելական պատուէր կամ սովորութիւն . բայց անոր դործադրութիւնը զանց կ'ըլլար, մանաւանդ Արևելեան եկեղեցւոյ մէջ» ։ Ուր կանուխ սկսած էր տիրել գաղափար մը, թէ «Մկրտութիւն մեզքը կը լուայ,» կամ մկրտութեամբ կը ջընջուին ամէն մեզք որ մինչև այն օր դործեր է մկրտելին կամ երախտն ։ Եւ եբբ . 9. 4—6 ի «լուսաւորուելէ ետքը» մեզք դործողներուն թողութիւն չըլլալու խօսքը թիւր իմացողութեամբ, կը համարէին թէ մկրտուելէ ետքը դործուած մեղաց չիք երբէք թողութիւն ։ Հետեւապէս ոմանք իրենց մկրտութիւնը կը յապաղէին մինչև ցօր մահու, երբ մաքրուած սրբուած և առանց մեղաց մտնեն յերկինս ։ Որպէս ըրաւ Մեծն Կոստանդիանոս իսկ, որ 320 է ի վեր կը պաշտպանէր զԲրիտաննութիւն և հրապարակաւ ընդունած էր զայն, սակայն մկրտուեցաւ 337 ին, կենաց վերջին տարին և յանկողնի հիւանդութեան ։ (Տես, Թէվարիխ ի Տին ի Մէսիհիյէ, 77, 129, 179) ։ Հետեւապէս ոմանք յանկարծ առանց մկրտութեան կը մեռնէին, որով կասկածելի կ'ըլլար նոցին փրկութիւն, վասն որոյ սկսուեցաւ կարևորութիւն

տալ առաքելական, զանց արարեալ սովորութեան, և ի մանկութեան մկրտել քրիստոնէից զաւկներն ։ Այս պարտուց կարևորութիւնը ցուցընելոյ համար կ'ըսուէր թէ մանկունք ևս մեղք ունին, յորմէ հետեւեցաւ սկզբնական մեղաց վարդապետութիւնը ։ Իսկ թէ՛ այս, և թէ՛ մկրտութեամբ մեղաց թողութեան և յետ մկրտութեան անթողի լինելոյ վարդապետութիւնը՝ Հարց կարծիք են և չեն երբէք նկատելի իբրև մեղ պարտաւորիչ ։ Այլ Հայրապետաց վկայութիւն, թէ կ'ըլլար մկրտութիւն նաև մանկանց, է իրողութիւն և մեր նկատելի կէտն ։

71. Արդ Յուստինոս, որ Յովհաննէս առաքելոյ մահուանէ քառասուն տարի ետքը գրեց, «Մենք չընդունեցինք այն մարմնաւոր թրիատութիւնը,» կ'ըսէ, «այլ հոգևոր թրիատութիւնը, և ընդունեցինք զայն՝ մկրտութեամբ,» որ ըստ հարց թրիատութեան էր յաջորդած, ուստի և նորա պէս մկրտուելով՝ թրիատուելու էին և մանկունք ։ Երանոս, որ Յուստինոսէ մի քանի տարի ետքը գրեց, «Բրիտանոս եկաւ,» կ'ըսէ, «փրկել բոլոր մարդիկ որ իրմով մը կըրտեալ են յԱստուած . մանկունք, փոքրիկք և աղայք, երիտասարդք և երիցադոյն անձինք ։» Այս հատուածը ճշգիւ քննող Մկրտտիչեանք իսկ կ'ընդունին, թէ այս բացայայտ յիշատակութիւն մը է մկրտեալ մանկանց ։

Տերտուղիանոս, որ առաքելոց ժամանակէն իբր 100 տարի ետքը գրեց, իր մկրտութեան ճառին մէջ կը խրատէ յապաղել մանկանց մը կըրտութիւնն, որոյ յառաքելոց անտի սովորական լինելուն վրայ կասկած չցուցներ: Որոգինէս, ծնեալ 184, իր գրութեանց մէջ որոշակի կը ցուցնէ թէ մանկանց մկրտութեան սովորութիւն կար, և թէ ինք ևս ի մանկութեան էր մկրտուած: Եւ «Եկեղեցին պատուէր մը ընդունած է յառաքելոց», կ'ըսէ, «մկրտութիւն մատակարարել մինչև իսկ մանկանց: Կիպրիանոս, կարքեդոնի եպիսկոպոսը, ժողով մը կազմեց յամին 253, ուր որոշուեցաւ թէ կրնայ մէկ, երկու . . . աւուր երախան ալ մը կըրտուիլ: Եւ ի սկզբան չորրորդ դարուն երբ Գրիգոր լուսաւորիչ աւետարանեց զՀայաստան, չափահասներն մկրտեց հանդերձ զուսկօք, և տեղ մը կ'ըսէ, «Որք մկրտեցան յարքունական բանակէ անտի՝ ընդ այր, ընդ կին և ընդ մանուկ, էին աւելի քան զչորեքհարիւր բիւր:» Ագաթան. տիպ Պօլսոյ երես 308: (Տես զայս մանէ նաև Յայտադար ճշմարտութեան, երես 14—30 = Համ. Գրիս. Աստուածաբանութիւն, երես 476):

Ժ. Հարկաորո-նիւն Ռրո-նեան Ժանկանց

72. Թէ պարո է հասարակեալ ճնուայ Ռրու և զսասիոնս իւրեանց, աստի կը հեաւի որ, (Ս) Աբրահամէ ի վեր մի և նոյն է Աստուծոյ եկեղեցին, որոյ ծոցը մանելու էին ծնողք հանդերձ իրենց զաւակօք նշանաւ թլփատութեան, որոյ յաջորդած է կամ տեղն անցած է մկրտութիւնը: Եւ ըստ որում հաւատացեալք պարտ էին թլփատել զորդիս, իբրև որդիք ուխտի և նուիրական Աստուծոյ ծառայութեան, սրբեալ, պէտք է և այժմ նշանուին, սրբուին մկրտութեամբ: Այս պարտուց փոփոխութեան ոչ պատճառ կայ և ոչ ցոյց ինչ. հաւատացեալք իրենց զաւակները կամ թլփատելու են կամ մկրտելու, և այսպէս կը ցուցնեն թէ կը վերաբերին նոքա սեպհական ժողովրդեանն Աստուծոյ, և են նմա նուիրական: Ինչպէս որ Սուրբ աւուր՝ շաբաթէ ի միաշաբաթ փոփոխեն ազատ չկացուցաներ զքրիստոնեայս՝ պահել զկիրակէն ըստ նախկին սկզբանց. նոյնպէս և փոփոխութիւն նշանին ուխտի՝ թլփատութենէ ի մկրտութիւն, ազատ չկացուցաներ զծնողս որ չնշանեն զորդիս: (Տես զայսմանէ «Մկրտութեան վրայ Ս. Գրոց . . . վարդապետութիւնը: Գլ. 2:

73. (Բ) Ծնողք պարտին Աստուծոյ ծառա

յութեան նախքէն «Գ» Բն զոր ունին, մանաւանդ զորդիս, զորս պարտին սնուցանել «Տէրոջը վարժութեամբ և խրատով:» Թլիխատութիւն նշան էր այսպիսի ուխտի մը, զոր կ'ընէին ծնողք, ապա պարտին և ֆրիստոնեայք ընել զայս հանդիսական ուխտ՝ արարողութեամբ մկրտութեան: (Գ) Այսպիսի հանդիսական ուխտիւ, մկրտութեամբ՝ ծնողք առաւել Գրեթէ կ'ըլլան Կորուսել զպարտիս, կրթել իրենց որդիքը աստուածպաշտութեամբ, քան թէ երբ չընեն այսպիսի ուխտ: Ինչպէս կ'երևի յուխտի չափահասից, որք առաւել պատրաստ և պարտաւոր կ'երևին կատարել պարտք մը երբ ուխտած են, քան թէ առանց ուխտելու: (Գ) Ֆրիստոնէից պարտքն է քարողել նաև հեռաւորաց ու հեթանոսաց, որոցմէ կարի Գրեթէ էն էրենց զատկոնէ: Եւ պէտք է տարբերին ի նոցանէ իբրև «յստաման որդիք.» նշանաւ մը, որ է մկրտութիւն, զոր եթէ զանց կ'ընեն՝ պիտի համարին և ասոնք օտար «իսրայէլի քաղաքակցութենէ:»

74. Մանկանց մկրտութենէ յառաջ կու գան նաև մի քանի օգոններ, զորս գիտելով զանց առնելն մեղանչել է, ըստ այնմ թէ «Այն ծառան որ Տէրոջը կամբը գիտէ և չպատրաստուիր . . . շատ ծեծ պիտի ուտէ.» և թէ «Ուր որ բարին ընել գիտնայ և չընէ, այն մեղք է

անոր:» Եւ այս մանկամկրտութեան բարեաց մի քանին են. (Ս) Մանկունք կ'ըլլան անչափահաս անդամ, որդիք Սիօնի, որ կը պարտաւորի մասնաւոր խնամ տանել և կրթել զանոնք աստուածպաշտութեամբ՝ եթէ երբէք ծնողք զանց ընեն, չկրնան կամ մեռնին: Ապաքէն Եկեղեցին պարտի և հեթանոսաց ու օտարաց զաւակներուն ևս խնամ տանել. այլ, ս'չ ապաքէն «մանաւանդ հաւատոյ ընտանիներուն,» իր որդւոց, զորս կը կրէ ի ծոցի: Այսպէս և ամէն բարեսէր ծնողք կ'ուզեն խնամել այլոց որբերն ու զաւակներ, այլ քանի՛ աւելի իրենցները, որք մասնաւոր խնամք կը զարգանան: Այսպէս կ'ըլլան և խնամեալ որդիք եկեղեցւոյ, որ պարտք կը զգայ մասնաւոր հոգ տանել նոցա: (Բ) Մկրտութիւն շնորհաց միջոց մը է, նման աղօթից որ կ'ըլլայ վրան մանկանց, որք այսու միջոցաւ նա՛ այս առթիւ մատուցեալ արժանաւոր հայցուածովք, թերևս հաճի Աստուած տալ և ներքին օրհնութիւնս Հոգւոյն, և նորոգէ ու մկրտէ Հոգւով: Ինչպէս որ կը հաճի Աստուած աղօթիւք հաւատացելոց՝ առնել մեծամեծ բարիս և այլոց, որք չեն գիտեր կամ չեն կրնար իրենց համար խնդրել: Յակ. Ե. 16, 17:

75. (Գ) Մանաւանդ թէ ինչպէս թլիխատութեամբ նոյնպէս և առաւել ևս մկրտութեամբ՝

Երախայտ կ'ըլան որդիք ուխտի, և այն նոր ուխտի՝
 Ի ձեռն Յիսուսի ֆրիատոսի, որ կը հաճի մաս-
 նաւոր օրհնութիւն տալ մանկանց որ իրեն
 կը բերուին : Եւ Աստուած կը խոստանայ մաս-
 նաւոր խնամք տանել և բարեօք ու շնորհիւ
 զարդարել զորդիս հաւատացելոց՝ իրեն նուիր-
 եալ : Ըստ այնմ թէ «Խոստմունքը ձեզ է և
 ձեր որդւոց», «Ֆեզի ու քու սերունդիդ Աս-
 տուած (պիտի) ըլլամ», «Ուղիղներուն ցեղը
 պիտի օրհնուի, . . . արդարոյ յիշատակը յա-
 ւիտեան պիտի մնայ :» «Քու սերնդեանդ վրայ
 Հոգիս պիտի թափեմ, և որդւոցդ վրայ՝ օրհ-
 նութիւնս :» Գործ. Բ. 39 : Ծննդ. Ժ. : Սաղմ.
 ՃԺԲ : Ես. ԽԳ : Եւ ապաքէն կը տեսնեմք թէ
 Աստուած «հաւատարիմ է իր ուխտին», իրաց
 պարագայքը այնպէս կը տնօրինէ, որ այս-
 պէս իրեն նուիրեալք, ուխտի որդիք, կ'ըլլան
 մանաւանդ ի չափահասութեան բարեպաշտ
 ֆրիատոսեայք, քան թէ որդիք հեթանոսաց :
 Ամէն դարու մէջ եկեղեցին մեծ աճումն կ'ըն-
 դունի ի ներքուստ քան թէ արտաքուստ,
 յանչափահասութեան մկրտեալք՝ կ'ըլլան ի չա-
 փահասութեան ճշմարիտ անդամք քան թէ
 հեթանոսութենէ դարձողք : Առաքելական
 դարուն մէջ իսկ Հրեաներէն առ ֆրիատոս
 դարձողներն աւելի էին, քան որ դարձան
 յայլ ազգաց : (63, 64) :

ԺԱ. Լ «Ճոհանք առարկութեանց ընդդէմ՝ մանկավարդութեան

76. «Ո՛վ որ հաւատայ և մկրտուի», ըսաւ
 Յիսուս, ուրեմն ա՛ն միշտ պարտէ՛ մկրտել որ կրնայ
 հասարակ, զոր չեն կարող առնել մանկունք,
 ապա և չեն մկրտելի :

Այս առարկութեան հետևութիւնը սխալ է :
 Յիսուս չըսեր թէ միշտ հաւատացողն է որ
 կարէ մկրտիլ, ուրիշը երբէք չէ մկրտելի. մինչև
 իսկ եթէ այսպէս ըսեր, իր միտքը լաւ հաս-
 կընալու համար պարտ էինք իր ուրիշ խօս-
 քերն ու դործերն միանգամայն նկատել : Զոր
 օրինակ, Մատթ. ԺԵ. կը կարդանք թէ՛ երբ
 Յիսուս Տիւրոսի և Սիդոնի կողմերը դնաց,
 Քանանացի կին մը կ'աղաղակէր «Ողորմէ ինձ,
 Տէր, Որդի Դաւթի, դուստրս դուքն սաստիկ
 կը չարչարուի :» Այլ ինքն Յիսուս բնաւ պա-
 տասխան մը չտուաւ անոր, մինչև որ աշակերտք
 զարմացան նորա այս տարօրինակ անտարբե-
 րութեան վրայ, և սկսան աղաչել, թէ և մինչև
 այն ատեն երբէք աղաչանք մը չէին ըրեր,
 որպէս զի դժայ և բուժէ նորա աղջիկն : Իսկ
 նա պատասխան տուաւ և ըսաւ, «Ես ուրիշի
 չգրկուեցայ բայց միայն իսրայելի տան կո-
 բուսեալ ոչխարներուն :» Եւ մինչ կինը կը թա-
 խանձէր անոր ալ պատասխանեց, «Աղէկ չէ
 արցց հացն առնուլ և շուներուն նետել :» Արդ-

աստի առաւել պարզ խօսք և գործք կ'ըլլա՞ր հասկնալու, թէ Յիսուս միայն խարայելի համար եկեր է, գէթ միայն նոցա հիւանդներն բուժել կ'ուզէ : Եթէ մանկանց մկրտութեան համար այսպիսի դէպք մը լինէր և բան, քանի՛ վճռական պիտի համարուէր, մանաւանդ եթէ նայուէր բանին պարագայից և ֆրիտոստի այլ բանից և գործոց : Իսկ եթէ յառաջ երթանք կը տեսնեմք թէ « Ով կին, » կ'ըսէ Յիսուս, « քու հաւատքդ մեծ է, ի՛նչպէս կամիս այնպէս ըլլայ քեզ. » և նոյն ժամայն կը բժշկուի անոր դուստրը :

77. « Ով որ հաւատայ և մկրտուի » խօսքէն չհետեւիր թէ միայն հաւատալու կարող չափահասք մկրտուելու են, անչափահասից մկրտուութիւն չըլլար : Ինչպէս որ Մատթ. ԻԲ. 19, « Գացէք այսուհետև, » կ'ըսէ, « աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա . . . » (ըստ գրաբարի և ըստ բնագրի) : Յորմէ պիտի հետեցունէինք, թէ Հրեայք արդէն աստուածապաշտ են, գէթ թրիատուած, հեթանոսներն միայն պարտին մկրտիլ. այլ երբ առաքելոց արարից կը նայինք, կը տեսնենք թէ նոքա մկրտեցին և զՀրեայս : Այսպէս ալ եթէ Մարկ. ԺԶ. 16 ի նայինք միայն, գուցէ փորձուինք հետեցունել թէ միայն հաւատալու կարողներն կարեն մկրտիլ, ոչ անչափահասք :

այլ երբ նայինք ի Գործս Առաքելոց կը գտնենք որ հաւատացեալներն կը մկրտէին « հանդերձ տամբ » (67, 68) : Գարձեալ եթէ միայն Մարկ. ԺԶ. 16 և 17 ի նայինք, ուր կ'ըսէ « Ով որ հաւատայ և մկրտուի՛ պիտի փրկուի, . . . » Եւ անոնք որ կը հաւատան, սա նշաններն անոնց հետ պիտի երթան. իմ անուամբս դուք պիտի հանեն, նոր լեզուներ պիտի խօսին . . . » պիտի հետեցունեմք, թէ ըստ որում հաւատք սրտի գործ է, զոր մկրտողը չկրնար տեսնել, ճշմարիտ հաւատացեալք հրաշագործութեան և լեզուներ խօսելու, և ինչ, նշաններ պիտի ունենան, ինչպէս եղաւ Կոռնելիոսի, զոր մկրտել համոզուեցաւ Պետրոս : Ուստի միայն անոնք կրնան մկրտուիլ, որք հրաշալի նշանաւ իւրք կը ցուցնեն թէ ճշմարիտ հաւատացեալ են, ուրիշներ չեն մկրտելի : Իսկ երբ կը նայինք ուրիշ բանից և արարից, կը գտնեմք թէ այս մեր հետեւութիւն սխալ է, որպէս « Կառնիս », թէ միայն չափահասք կրնան մկրտուիլ, և անչափահասք՝ ոչ :

78. « Ով որ հաւատայ և մկրտուի » խօսքէն չհետեւիր, թէ միայն հաւատալու կարողներն մկրտելի են, և անչափահասք ոչ : Քանզի արտօնութիւն մը, պարզև մը, վերագիր կամ ստորագելի մը բանի մը տալէն չհետեւի թէ նոյն բանն որքան ալ չունի : Որպէս Մատթ. ԺԶ. 15

—17 համարներուն մէջ կը կարդամք, թէ Յիսուս կը հարցունէ աշակերտաց թէ զինք ո՛վ կը համարին, «Սիմոն Պետրոս պատասխան տուաւ և ըսաւ, Դու ես Քրիստոս, կենդանի Աստուծոյ Որդին ։ Եւ Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոր, Երանի քեզ, Սիմոն, որդի Յովնանու . քանզի մարմին և արևն չյայանեց քեզ զայս, այլ իմ Հայրս որ յերկինս է ։» Եւ այս մասնաւոր շնորհաց հետևութեամբ «Երկնից թագաւորութեան բանալիները քեզ պիտի տամ,» կ'ըսէ, «ինչ որ երկրի վրայ կապես կապուած պիտի ըլլայ յերկինս, և ինչ որ արձակես արձակուած պիտի ըլլայ յերկինս ։» Համար 19 ։ Եւ ըստ որում մէկ երկինք, մէկ եկեղեցի կայ և մէկ բանալի կամ իշխանութիւն, ուրեմն մի միայն Պետրոս ունի զայս իշխանութիւն, այլք չունին ։ Հետևապէս, կ'ըսէ, Հռովմէական եկեղեցին, Պետրոս է մի միայն գլուխ, և Պապեր՝ նորին յաջորդներ ։ Սակայն գիտելի է թէ նոյն իշխանութիւնն կապելոյ և արձակելոյ, կամ մեղաց թողութիւն տալու, չտալու, Մատթ. ԺԶ. և Յովհ. Ի. գլխոց մէջ տրուած է բոլոր աշակերտաց ևս ։ Նոյնպէս և Մարկ. ԺԶ. ի մէջ ինչպէս որ արտօնութիւն կայ հաւատացելոյ, նոյնը կայ և նոցին «որդւոց» ի Գործս Առաքելոց ։

79. «Ով որ հաւատայ և մկրտուի պիտի փրկուի»

կուի» բնաբանին մէջ կայ երեք բան, հասարակ, Գործուի և փրկուի, որք ուրիշ տեղի նայելով երբէք չեն կարուի երբեք հետ ։ Քանզի մանկունք չեն հաւատար, բայց կը փրկուին, գէթ ի հին անտեսութեան հաւատացողք ևս փրկուեցան առանց մկրտութեան, որպիսի էր Աբրահամ ։ Կային որ մկրտուեցան բայց չփրկուեցան, որպիսի էր Սիմոն մոգ, Անանիա և Սափիրա ։ Կրնայ պատահիլ որ ոմանք անհաւատաբար և կեղծեօք մկրտուին, և շատ ժամանակ ետքը դարձի գան՝ ապաշխարեն, զղջան և հաւատան ու փրկուին ։ Ուրեմն, քանի որ այս երեք բան, հաւատալ, մկրտուիլ և փրկուիլ, ոչ կարգունին և ո՛չ կապ, ինչպէս կրնայ մանուկ մը առանց մկրտութեան փրկուիլ՝ կրնայ և առանց հաւատոյ մկրտուիլ և յե՛տոյ հաւատալ ։ Ուրեմն այս Մարկ. ԺԶ. 16 ի իմաստն է քարոզել թէ՛ Հրէից և թէ՛ հեթանոս չափահասից, որք կրնան հասկնալ և ըմբռնել. և ի նոցանէ ովոր հաւատոյ՝ մկրտել զնա, և եթէ ունի տուն, «հանդերձ տամբ ։» Ըստ այնմ, «Հաւատա . . . և պիտի փրկուիս դու և տունդ ։» Գործ. ԺԶ. 31 ։

80. «Ով որ հաւատայ և մկրտուի» ըսաւ Քրիստոս, ուրիշ փաստ և խօսք չեմ գիտեր, մատս ասոր վրայ կը դնեմ, կրնայ ըսել մէկը ։ Այլ այսպիսին թող խորհի թէ այսպէս մատերնին մէկ բնաբանի վրայ կը դնեն ամէն մա-

լրութեան ուսուցիչք ևս, և կը խաբուին ու կը խաբեն: «Ս.յս է մարմին իմ», կ'ըսուի, մատա ասոր վրայ կը դնեմ, կ'ըսէր Լուսեր, որ գոյափոխութիւնն կ'ուղէր պաշտպանել: «Որոյ թողուք զմեզ» թողուած ըլլայ անոնց» գրուած է, մատերնիս ասոր վրայ կը դնեմք կ'ըսեն ոյք կ'ուզեն հաստատել թէ քահանայք իշխանութիւն ունին տալ մեղաց թողութիւն՝ որոյ որ խոստովանութիւնն կը լսեն: Սատանան ալ երբ կը փորձէր զԲրիստոս հոսել զանձն աշտարակէ ի վայր, «գրուած է թէ», կ'ըսէր, «իր հրեշտակներուն պիտի պատուիրէ քեզի համար, և իրենց ձեռաց վրայ պիտի վերցունեն զքեզ, որպէս զի քարի չղարնես ոտքը»: Որոյ պատրանքը խայտառակեց Յիսուս ըսելով, թէ աս ալ գրուած է, թէ «ԳուՏէր Աստուածդ չփորձես»: Եւ այն օրինակով կ'ուսուցանէ մեզ թէ, եթէ կ'ուզենք չմոլորիլ և պատրիլ, պէտք է Աստուծոյ խօսքին մի մասը միւսին բաղդատել, «գրուած» ին ըսով ուրիշ «գրուած» դնելով:

81. «Մանկանց Վերստիւնն ոչ հրաման մը կայ և ոչ օրինակ, գէթ ի Նոր կտակարանի»: Բայց մանկանց մկրտութեան շատ մը ակնարկներ և ցոյցեր կան մինչև իսկ ի Նոր կտակարանի, (Տես 67, 68), նաև որոշ օրինակ և պատուէր ի Հին կտակարանի, որոյ սկզբունքներն կան և պիտի մնան

մինչև աշխարհի վերջը (60-62): Գարձեալ, բան մը չյիշուելէն չհետևիր թէ չկար. շատ բաներ ըսաւ Յիսուս և ըրաւ ոյք չգրուեցան. նոյնպէս առաքեալք շատ մը գործեր կատարեցին և շատ բաներ աւանդեցին, որոյ վրայ չիք գրութիւն: Ու է արարողութիւն եթէ Ս. Գրոյ սկզբան համաձայն է, կ'ընդունուի որոշ հրաման և օրինակ ըլլայ թէ ոչ. որպիսի է կանանց հաղորդուելու սովորութիւնն: Սոյնպէս և մանկանց մկրտութիւնն, եթէ Ս. Գրոյ ոգւոյն համաձայն է և ու իցէ փաստիւ հաւանական, է ընդունելի որպէս ցուցաւ (72-75): Ս.յսպէս ի Նոր կտակարանի չիք հրաման պահել զի իրակի, մինչև իսկ որոշ և բացայայտ օրինակ, թէ փոխան շաբաթու պահել պէտք է միաշաբաթին: Ս.յլ այնու զի այս փոփոխութիւն և պահպանութիւն համաձայն է Ս. Գրոյ և հաւանելի, ամենայն եկեղեցիք կը պահեն զի իրակին, և այն փոխան շաբաթու: Բան զայս փոփոխութիւն նուազ բանաւոր և անհիմն չէ ընդունել, թէ Հրէական թրիատութեան յաջորդեց Բրիստոնէական մկրտութիւնն, կամ թրիատութիւնն փոխեցաւ ի մկրտութիւն (65, 66): Որովհետև ոյք Հեթանոսութենէ կը դառնային ի Հրէութիւն, կուռքերէն յԱստուած, կ'ըլլային նորահաւատք (Գործ. Ժ. 9. 43: Բ. 11), կը մկրտուէին հանդերձ զաւակօք, և որովհետև

Հրեայք իրենց զաւակօք հանդերձ կը մտնէին յուխտ, հանդերձ զաւակօք կ'ըլլային անդամ տեսանելի եկեղեցւոյն, այսպէս «հանդերձ տամբ» պիտի մտնէին և՛ Հրեայք և՛ Հեթա- նոսք ի ֆրիստոնէութիւն, յեկեղեցի: Եթէ այս պարտք, արտօնութիւն և սովորութիւն մեր- ժուեցաւ, պէտք էր ունենայինք բացորոշ հրա- ման մը, դոնէ բացայայտ օրինակներ: Չգրա- նուելն, ուրեմն, կը ցուցնէ թէ արտօնութիւնք և պարտք մնացին այնպէս ինչպիսի էր սովո- րութիւն և օրէն ի Հին Կտակարանի:

82. «Մկրտութիւնը փրկութեան համար է, զոր մէկը ուրիշին չկրնար տալ, մկրտութիւնը մեղաց թողութեան համար է, զոր չունին ման- կունք. ֆրիստոնէութիւնը ժառանգութեամբ չստացուիր:»

Անհին էն այս ստորհո-ւնէնք. մկրտութիւն ո՛չ փրկութիւն կը բերէ, ոչ մեղաց թողութեան համար է (36-38), այլ է կնիք ուխտին զոր կ'ընէ Սատուած հաւատացեալին հետ, ըսե- լով, «Քեզի և քու սերունդիդ Սատուած (պիտի) ըլլամ», քու սիրտդ և քու որդւոցդ սիրտը «պիտի թլփատեմ», «քու սերնդեանդ վրայ Հոգիս պիտի թափեմ, և որդւոցդ վրայ՝ օրհ- նութիւնս:» Ծննդ. Ժէ: Բ. Օր. 1: Ես. ԽԳ: Մկրտութիւնն է նշան թէ պէտք է ներքին մաքրութիւն՝ սրբութիւն և նորոգութիւն, և

ևս նշան ընդունելոյ և դաւանելոյ ֆրիստո- նէական կրօնն, որոյ մէջ կը մանեն «հանդերձ տամբ» կամ զաւակօք (19-22, 67): Մարդ ուրիշի չկրնար տալ հաւատք, այլ կրնայ հրա- հանգել հաւատալեաց մէջ, ուսուցանել Սա- տուծոյ խօսքը, որ հաւատք յառաջ կը բերէ: Ներքին կրօն չըլլար ժառանգութեամբ, այլ արտաքինն է և պարտի ըլլալ ժառանգու- թեամբ, որ է հրահանգութիւն քրիստոնէա- կան վարդապետութեանց և արարողութեանց, որպիսիք են աղօթք, պաշտամունք և ընթեր- ցումն Ս. Գրոց: Հրեայք իրենց և իրենց սե- րընդեան համար ընտրեցին պաշտել ղԵհօլայ, աստուածպաշտութեան կրօնն, ֆրիստոնէայք առաւել ևս պարտին ընտրել պաշտել զամե- նասուրբ Երրորդութիւնն, զֆրիստոնէութիւն, իբրև կրօն իրենց և իրենց զաւակաց (61, 62): Սյս որդիք, սակայն, երբ լինին խելահաս և չուզեն քալել կենաց ճամբուն մէջ, ազատ են և կարեն մերժել, ինչպէս կրնան ընել ամէն ժառանգեալ ստացուած և զարտօնութիւն:

83. «Եթէ մանուկ մկրտութեամբ կ'ըլլան եկեղեցւոյ անդամք, հապա Բնձ - Էն հաղորդու- եր:»

Անոնք անդամ են այլ անչափահաս, որպէս թէ ժառանգ են այլ դեռ տղայ (Գաղ. Գ. 1, 2), երբ ըլլան խելահաս քրիստոնէական վարդա- պետութեանց և չմերժեն զնոսա, բերեն պտուղ

ապաշխարութեան կամ ունեւնան նշան շնորհաց Հոգւոյն, յայնժամ «իրենց հաւատքը» կը գաւանդին և կ'ըլլան հաղորդական անդամ: Այսպէս պատեհութիւն կ'ունենան ընել ինչ որ կ'ընեն չափահասը, իրենց հաւատոյն վրայ մկրտեալք: Եւ կը նմանին այնոցիկ որ կը զգան և կը ճանչնան թէ ի չափահասութեան մկրտութեան թէև, այլ յայնժամ էին կեղծաւոր, անհաւատ և անապաշխար, զոր ի վերջոյ կը կատարեն ըստ արժանւոյն, այլ չեն մկրտուիր վերստին. անոնց հաւատալէ առաջ եղած մկրտութիւնը՝ մկրտութիւն կը համարուի (62, 69):

84. «Բանի որ անխելահասն հաւատք չունի, գուցէ և ի խելահասութեան ալ պիտի չունենայ, ուստի «եւրդ է և անօգուտ» այսպիսեաց մկրտութիւն:»

Մանկանց թրիատութիւն չէր աւելորդ, չէ և աւելորդ մկրտութիւն մանկանց: (Տես նորա օգտին կամ հարկաւորութեան վրայ, 72-75): Շատ չափահասներ ալ կը մկրտուին, որոց ճշմարիտ հաւատացեալ ըլլալը չեմք գիտեր, և չեմք կարող գիտել զի չեմք սրտագետ, այսպիսիք գուցէ երբէք պիտի չունենան կենդանի հաւատք, ուստի և զայսպիսիս մկրտել պէտք չէ և անօգուտ է: Նոյն իսկ շատ մը հաւատացեալք, որոց հաւատքը տկար է, և իրենք մանուկ ի շնորհս, չեն կրնար ստուգիւ գիտ-

նալ թէ ունին կենդանարար հաւատք և ճշմարիտ ապաշխարութիւն. ուստի ոչ ոք կարէ վստահիլ թէ մկրտութիւն օգտակար պիտի լինի իրեն և պարտք:

85. «Եթէ մանուկները կը նուիրուին մկրտութեամբ՝ ԲՆՆ օգուտ պիտի չեն երեսն, որք ոչ բան մը կը զգան և ոչ բան մը գիտեն:»

Բաւ է որ նուիրողն գիտնայ և զնա իբր նուիրական գործածէ, որպիսի էին ամենայն անկենդան և կենդանի նուէրք յօրէնս, յատկապէս անդրանիկը, Ղևտացիք և ամենայն ութօրեայ թրիատեալք: Մանաւանդ թէ մանկանց նուիրումէն օգուտ կայ, որպէս կ'երևի 74, 75 խորհրդածութիւններէն: Եւ քիչ ետքը իրենք ալ պիտի ըլլան չափահաս և վայելեն օգուտներն քրիստոնէական այս նախապատրաստութեան, նման ուսմանց և արհեստից հետևող աշակերտաց:

86. «Արդէն մանկունք Աստուծոյ են, ԲՆՆ պիտի է ուրիշ և կամ նորիշ:»

Ամէն բան զոր ունի ոք Աստուծմէ է, որոյ սոսկ անտեսն է ինք. զայս պարտի միշտ ի մտի ունել որ հաւատարմաբար գործածէ ըստ կամաց նորա: Եւ ահա մանկամկրտութիւնն, ինչպէս և անձնականն, զայս կարևոր ճշմարտութիւն հանդիսապէս կը ցուցնէ, և յիշելոյ առիթ կ'ըլլայ (45):

87. «Ի պատճառս ծնողաց երբէք օրհնութիւնն խոստացուած չէ որդւոց»:

Ասիկա Ս. Գիրք, գէթ Հին կտակարանն չընդունող կամ չգիտցողի խօսք է: Զի ի պատճառս ծնողաց թէ օրհնութիւնք խոստացեալ են ի Գիրս, և թէ անէծք սպառնացեալ (63, 64): Ի չափահասութեան կամ «իր հաւատքին վրայ մկրտելոց ալ չիք այնքան որոշ վրկայութիւն, թէ ի պատճառս մկրտութեան իրենց օրհնութիւն պիտի տրուի: Մկրտութեան կապեալ «մեղաց թողութիւն», «վերջստին ծնունդ» և «փրկութիւն», տեսանք թէ անհիմն վարդապետութիւնք են. օրհնութիւններ, զորս եթէ ոք արդէն չունի, թէ՛ չափահաս լինի երախան կամ մկրտելին, թէ՛ անչափահաս, չստանար ի ձեռն մկրտութեան միայն (30-36):

88. «Եթովր միջոցներ կան, ֆրիստոս, իր անունը, արիւնը, գիտութիւն, շնորհք, հաւատք և գործք... որ է գործակից միջոց... և ասոնց ամբողջութեամբն է որ Աստուած կ'արդարացունէ զմեզ և կը փրկէ»: Մկրտութիւնն ալ կարևոր գործ է հնազանդութեան, առանց որոյ չիք փրկութիւն. և ըստ որում մի միայն ընկղմամբ և ի չափահասութեան կատարուածն է ճշմարիտ մկրտութիւն, անոնք որ «յայէ» մը կը ըրտեալ չեն, չունին փրկութիւն: Այսու

վարդապետութեամբ, ուրեմն, կը պատասխանեմք, (Ս) Հնազանդութիւն կամ գործերն ալ, յորս առաջին է մկրտութիւն, «փրկագործութեան մէջ հաւասար կարևորութիւն ունին», մեր գործերն էական են փրկութեան, ինչպիսի է Աստուծոյ շնորհքը և ֆրիստոսի արիւնը: Այս իսկ է հեթանոսական և պապական վարդապետութիւն գործով արդարանալոյ, զոր բացէ ի բաց կը մերժէ Պօղոս իր թղթոց մէջ՝ ընդդէմ Հրէից, որք օրինօք, հնազանդութեան գործով արդարանալ կը վարդապետէին: (Բ) Եթէ Աստուծոյ ողորմութեան և ֆրիստոսի քառութեան «հաւասար կարևորութիւն ունին» հնազանդութեան գործերն, ո՛րքան գործ բաւական պիտի լինի և պէտք է, որ փրկութիւնն ամբողջանայ: Միայն հաւատք և ապաշխարութիւն բա՞ւ է, թէ (ճշմարիտ ըլլայ կամ չըլլայ) կը հաւատամ և կ'ապաշխարեմ ըսելով մկրտուիլ ալ պէտք է. երբ մկրտուի հնազանդութեան գործը ալ ըմբսած՝ ամբողջացած կ'ըլլա՞յ, ալ քաւեալ՝ թողեալ՝ արդարացեալ՝ Աստուծոյ որդի կ'ըլլա՞յ, թէ դեռ պէտք է «ներել» եթէ մարդու դէմ բան մը ունի»: Երես. 55, 56: Պէտք է հաղորդուիլ, Աւետարան քարոզել մինչև աշխարհի ծայրերը, և պահել «ամէն ինչ որ պատուիրեց» Յիսուս, և ըսաւ «Եթէ զիս կը

սիրէք, պահեցէք իմ պատուիրաններս:” Այս պատուիրանաց ո՛րքանը պահելով՝ գործը կատարեալ կ’ըլլայ և փրկութիւնը կ’ամբողջանայ: Հեռեապէս (Գ) եթէ ոք ճշմարտապէս հաւատարմով ու ապաշխարելով հանդերձ չկըրնար ունենալ յոյս “թողութեան մեղաց, որդեգրութեան . . .” Ե՞րբ կրնայ վստահել, մըկըրտուելէ անմիջապէս ետքը: Եթէ այո՛ ըսես, ուրեմն գործ ըսելով մի միայն մկրտութիւն ըսել կ’ուզես եղեր. . . զոր կատարել տալու եռանդով մեծ մոլորութեան մը, գործով արդարանալու, ջատագով կ’ելլես: Եթէ լոկ մկըրտութեամբ դեռ գործը կատարեալ և փրկութիւնն ամբողջացեալ չէ, ե՞րբ պիտի ամբողջանայ, հաղորդուելէ՞ ետքը, բոլոր պատուիրանքը կատարելէ՞ ետքը, թէ նման ֆրիստոսի իր կեանքը եղբարց համար դնելէ ետքը, . . . մեռնելէ՞ ետքը: Եւ յայնժամ երբ տեսնէ թէ “օրինաց միոյն դէմ” մեղանչելով բոլոր օրինաց պարտական է, և ինքզինք խաբած է եղեր՝ երբ օր մը խորհեր է թէ մեղք չունի: Արդ այս մեղաց թողութիւն ի՞նչ պայմանաւ պիտի կրնայ ընդունել մեղաւորն և ե՞րբ. Ե՞րբ բոլոր պայմաններն կ’ամբողջանան: Վերջապէս, (Գ) մէկը որ ճշմարիտ մկրտութիւն համարեր է իր 2, 3, 4 . . . տարեկան հասակի մկրտութիւնը, ուրիշ մը ի չափահասութեան մկրտուեր է այլ

ոչ ընկղմամբ, ասոնք չպիտի՞ կրնան վստահել փրկութեան մինչև որ նորէն չմկրտուին ի ձեռն Մկրտականաց կամ Սչակերտաց, որով փրկութեան գործն ամբողջացեալ ըլլայ, և յերկինս մտնելու արտօնութիւն արուած (մկրտող պաշտօնեաներէ): Իսկ եթէ վերջը այս խեղճերը գիտնան թէ զիրենք մկրտողը, կամ մկրտողին մկրտողը՝ . . . նախորդներէն մին, մըկըրտեալ չէ եղեր, կամ ի չափահասութեան ընկղմեալ չէ եղեր նա, վերստին մկրտուելու են այս տարուբերեալները՝ որ գործերնին լման ըլլայ և փրկութիւնն ամբողջ: Ուրիշներ ևս մկրտութեան այլ և այլ մեծ ու պղտիկ պարագայից վրայ եթէ շփոթութիւն ունենան, ըսենք մկրտուած ատեն պէտք եղածին չափ հաւատք, գիտութիւն, ճանաչումն կամ ապաշխարութիւն չեն ունեցեր, կրկին և կրկին մկրտուելու և՛ մկրտուելու են, որ գործը շնորհաց խառնուի և ամբողջանայ փրկութիւնը: Հարցումներ՝ որոց պատասխանել դժուարին է, այլ առանց հաստատելու Ս. Գրոց վկայութեամբ՝ չէ երբէք ընդունելի թէ գործեր միանալու են շնորհաց՝ որ փրկութիւնն ամբողջանայ:

89. “Մկրտութիւն պարտք մի է, զոր զանց ընողին մեղաց թողութիւն չըլլար, և որովհետև յանչափահասութեան և առանց ընկղմ-

ման մկրտութիւնը չէ ճշմարիտ մկրտութիւն, վերստին մկրտուել պէտք է անոնց ոյք վերակուել կ'ուզեն:" Այս խաբէական ձեռնարկութիւն (Ս) չէ վասն այնոցիկ որք մկրտեալ են մի անգամ, զի Ս. Գրոց մէջ կա՞յ օրինակ մը թէ այս ինչ ոք վերստին թրխատուեցաւ, զի թրխատութեան այս ինչ պարագայն չէր ըստ օրինի: Թրխատութիւն կ'ըսենք, որ մկրտութեան նախորդն էր, նա՞ թէ վասն Հրէից աւելի կարևոր էր այն՝ քան որչափ է Քրիստոնէից մկրտութիւնն: Եւ կա՞յ օրինակ կամ ակնարկ մը թէ այս ոք վերստին մկրտեցաւ, զի կամ այս կամ այն պարագայն չէր ըստ օրինի քրիստոնէական մկրտութեան: Քանզի շատ հաւանական է թէ ոմանք ի մանկութեան մկրտեալ էին, ոմանք՝ սրսկմամբ, և այլք՝ ուրիշ պարագայիւք տարբեր: Այս լուծութիւն կը ցուցնէ, թէ կամ մկրտութեան չէր տրուէր այնքան կարևորութիւն՝ որքան տալ կ'ուզեն ծիսականք: Պօղոս կորնթոսի եկեղեցին կազմելու հանդերձ կ'ըսէր թէ «Քրիստոս չըրկեց զիս մկրտել», և փառք կու տար որ շատեր չէ մկրտեր մինչև իսկ անդ: Այլ եթէ կարևորութիւն կը տրուէր, պարագայից տարբերութիւն էական չէր համարուէր, քանզի «Ո՛վ որ մեզի հակառակ չէ», ըսաւ Քրիստոս, «մեր կողմն է», հոգ չէ որ ձեր հետ չպտըտի:

Մանաւանդ զի ոյք մկրտեալ են Աւետարանական եկեղեցեաց մէջ, նոցա մեծադոյն մասը (գէթ ի Հայ Բողոքականս, զոր գիտեմք), 2, 3, 4... 10, 12 տարեկան հասակի մէջ մկրտեալ են, յորոց շատերն բաւական հմտութիւն ունեցեր են Քրիստոսի և նորա վարդապետութեանց վրայ, և ոմանք հաւատացեալ, ապաշխարեալ և նորոգեալ իսկ եղեր են: Ուրիշ եկեղեցիք ալ առ հասարակ ընկղմամբ կը մկրտեն: Արդ կրնա՞յ ցուցուիլ օրինակ մը կամ ակնարկ մը իսկ, թէ մինչև որ երկու պարագայն, ընկղմել և 10-20 տարեկան լինել, ճիշդ մի և նոյն ատեն չկատարուին չկրնար մկրտութիւն համարուիլ:՝* (Բ) Եթէ մկրտութեան հասակին և կերպին մէջ մէկը որ սխա-

* Ի Մտրդ-Աւան կին մը, որ ի մանկութեան մկրտեալ էր թաղմամբ յաւազանին լուս. Եկեղեցւոյ, երբ անգամ կ'ըլլայ Աւետ. Եկեղեցւոյ, վերստին կը մկրտուի, որ ի չափահասութեան լինի: Սմա կ'այցելէ Քրիստոսի աշակերտաց ՄԷ. սիոնաբը և այնքան կը թախանձէ որ «Շուարեցայ», կ'ըսէ Խեղճը, «Եւ այ մտայ կարասը», ուր մտնել սովոր է շաբաթն մի երկու հեղ վասն հիւանդութեան: Այլ Պատուելին, մինչ զայլս մկրտելոյ ատեն մեծ անձուբացութեամբ՝ երախային հետ ջուրը մտնել սովոր էր, այս տեղ կարասէն դուրս կը մնայ: Թող աս ալ այսպէս ըլլայ, գուցէ կը խորհի, չըլլայ թէ մտրդ վրայ հասնի միտքը շփոթէ և փրկելի մը պակսի: Երանի՛ թէ ուրիշ քան զայս ջերմեռանդ Մկրտական մը ևս չպատահի, որ ըսէ թէ «Երկուքն ալ ջուրը իջան» գրուած է, ուստի պէտք է նորէն մկրտուիս, եթէ ոչ չես կրնար մկրտուած համարուիլ:

լած լինի, սխալ կամ տարբեր համոզում ունենայ, (զի ի Ս. Գիրս, չիք, ըսինք, որոշ ինչ, կրկին մկրտուելու է որ պարտքը կատարած լինի.) վերստին մկրտութեան շատագույք կը համոզե՞ն վերստին մկրտուիլ այն անձը, որ կը խոստովանի թէ առանց գիտութեան՝ հաւատոյ և ճանաչման ու առանց ճշմարիտ ապաշխարութեան մկրտեալ է եղեր առաջին երկրորդ... և տասներորդ անգամուն: Ամէն ով որ կը կտրեն իրենց եկեղեցիէն իբրև Յուդա, երբ վերստին ընդունին ի ծոց եկեղեցւոյ, վերստին կը մկրտե՞ն, որ պարտքը կատարած լինի, որոյ զանցառութիւն կը կորուսանէ զհաւատացեալն անգամ: (Գ) Միայն մկրտութեան պարտուց զանցառութիւնն է, որ կորստեան կը տանի, թէ ու է պարտուց զանցառութիւնն ալ: Սակայն «երբ ընէք բոլոր հրամայումները ձեզ», կ'ըսէ Գրիստոս, «ըսէք թէ անպիտան ծառաներ ենք, քանզի ինչ որ պարտական էինք ընել՝ ըրինք.» ուրեմն չընել՝ պարտք մը զանց ընել է: Ապաքէն, կ'ըսէ Յակոբոս, «Ով որ բարին ընել գիտնայ և չընէ, այն մեղք է անոր,» այնպէս որ կ'ըսէ Յովհաննէս, «Եթէ ըսենք թէ չունինք մեղք (պարտուց զանցառութիւն չունիւք) կը խաբենք զմեզ:» Հասկա եթէ մեծամեծ մեղաց կամ պարտուց զանցառութեան կ'ըլլայ թողութիւն Գրիստոսնէին որ «կը հա-

ւատայ Անոր որ կ'արդարացունէ ամբարիշտը,» ինչո՞ւ չներուի նաև սխալը, կամ թիւր համոզումը, որով իր մկրտութիւն ճշմարիտ կը համարի և վերստին մկրտութեան պէտք չտեսներ: Մանաւանդ (Գ) կրկին մկրտուելէ ետքը՝ եթէ գործուած մեղաց կամ պարտուց զանցառութեան համար «Ունինք Հօրը քով բարեխօս,» կ'ըսէ Յովհաննէս (Ս. Յովհ. Բ. 1.) «զՅիսուս Գրիստոս զարդարն, և նա քառութիւն է մեր մեղաց, և ոչ միայն մերիններուն, այլ և բոլոր աշխարհին:» Միթէ նորա քառութիւն՝ արիւն և բարեխօսութիւն բաւական չէ՞, ի թողութիւն մեղաց անոր, որ կրկին մկրտուել չուզելով իբր թէ կը մեղանչէ, զի մի ծէսերու մեծ արժէք տան ծիսասէրք, և զՍ. Գիրս ծաղրեն անհաւատք, իբր այն թէ կրկնութեան կարևոր պայմաններն իսկ այնքան մութ են, որ մէկը տասն, քսան տարի ուսումնասիրելով իսկ չկրնար հասկնալ: Եւ միթէ կրկին մկրտութեան շատագույք, կեղծ անկեղծ, գիտութեամբ կամ անգիտութեամբ, այս ըրածներնուն համար պատասխան չը պիտի տան Անոր որ երկկամունքները կը քննէ: Վարդապետութիւններ ու ջանքեր, որ մէկ կողմանէ ծիսականութիւն կը հաստատեն, միւս կողմանէ զՍ. Գիրս կասկածելի կը կոչուցանեն՝ յերկրի ուր երկուդասի անձինք ալ քիչոր չեն: Եւ որոց խըր-

կուած են «խօսքը քարոզել», որ «հոգի ու կեանք են», և որոյ մեծ քարոզիչը կ'ըսէր, «Քրիստոս Յիսուսով ոչ թլիխատութիւնն է բան մը, և ոչ անթլիխատութիւնը, այլ նոր ստեղծուած է» Գաղ. 2. 15:

ՅԱՆԿ ԽՆԴՐՈՑ ԵՒ ՆԻԹՈՑ

Ի ՎԵՐԱՅ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ

Խնդ. Ա. Նշանակութիւն բառի մկրտութեան: 1 (թիւ): Ի՞նչպէս որոշելու է ի Ս. Գիրս գործածուած բառից նշանակութիւնը: 2. Ի՞նչ կը նշանակէ Յունարէն $\chi\rho\iota\sigma\mu$: բառը Ս. Գրոց մէջ այլ եւ այլ տեղեր: 3. Ի՞նչ նշանակութեամբ գործածուած է $\chi\rho\iota\sigma\mu$ բառը: 4. Նշանակութիւնը անանցմանց յիշեալ բառից: Երես 1—6:

Բ. Մկրտութիւն նորահաւատից: 5. Անդամակցիլ թլիխատութեամբ եւ մկրտութեամբ: 6. Ըստ սովորութեան Հրէից: Երես 7—9:

Գ. Մկրտութիւն Յովն. Մկրտչի: 7. Աբարդութիւնը մաքրութեան ի Հրեայս: 8. Յովնանու մը կըրտութեան կերպը: 9. Ընկղման դժուարութիւնն: 10. Տարբեր էր քրիստոնէականէն: Երես 9—14:

Դ. Մկրտութիւն Քրիստոսի: 11. Յիսուս մկրտեցաւ ի Յովնանէ: 12. Որպէս զի ցուցնէր թէ Յովնանէն մարդարէ էր: 13. Յայտնէր զանձն Իսրայելի: 14. Եւ օծուէր Հոգևով: 15. Յիսուս ինքն եւս մկրտել կուտար, այլ այն չէր քրիստոնէական մը կըրտութիւն: 16. Առաքեալը, սակայն, չէին թերեւս մկրտեալը: Երես 14—20:

Ե. Քրիստոնէական մկրտութիւն: 17. Ի՞նչ է, որ պիտի լինի անուամբ Ս. Երրորդութեան: 18. Ի ձևն

պաշտօնէի : 19. Իբր կնիք ուխտի : 20. Որ կ'ըլլայ Ս. Երրորդութեան եւ հաւատացելոյն մէջտեղ : 21. Իբր նշան սրբարար ներդործութեան : 22. Եւ արարողութիւն նուիրման : 23. Ուստի կայ ներքին եւ արտաքին մկրտութիւն : 24. Նշանն կը դրուի փոխան նշանակելոյն : Երես 20—30 :

2. Ազդեցութիւն մկրտութեան : 25. Կրնայ նշանն լինել առանց նշանակեալ իրի : 26. Ձիք կապակցութիւն ներքին եւ արտաքին մկրտութեանց մէջտեղ : 27. Մկրտութեան ազդեցութիւն չէ կախեալ արտաքին արարողութենէ : 28. Այլ կ'ազդէ իրբեւ միջոց չորհաց : 29. Ոչք կ'ըլլան արդիւնաբեր ներդործութեամբն Աստուծոյ : 30. Չէ ճշմարիտ թէ Ս. Հոգի չառնուիր առանց մկրտութեան : 31. Ձի նորա հրաշալի պարզեւններն տրուեցան առանց մկրտութեան : 32. Փրկարարներն ալ պէտք են նախ քան զմկրտութիւն, որ առաքեալք զրկուին, եւ լսողք Հոգին խնդրեն : 33. Որ ընդունել կուտայ զԱւետարան, ճանաչումն մեղաց, ապաշխարութիւն եւ բերէ առ Քրիստոս, զոր եւ դաւանել պէտք է : 34. Յետ մկրտութեան եւս միշտ Հոգին պէտք է : 35. Մկրտութիւն չէ՛ վերստին ծնունդ : 36. Եւ ոչ պայման մեղաց թողութեան : 37, 38. Որոյ համար՝ սխալ է ըսել թէ հաւատք եւ ապաշխարութիւն չեն բաւական : 39. Եթէ ոչ մեր գործերն ալ կարեւոր կ'ըլլան ի փրկութիւն : 40. Նման Հրէից պահանջման, թէ պէտք է թլփատուիլ : 41. Մեկնութիւն Գործ. Բ. 38 ի : 42. եւ Ի. Բ. 16 ի : Երես 31—56 : Է. Հարկաւորութիւն մկրտութեան : 43. Մկր-

տութիւնն ի՛նչ բանի չէ հարկաւոր : 44. Եւ ի՛նչ բանի՛ է : 45. Եւ ի՛նչպէս օգտակար : Երես 56—60 :

Ը. Եղանակ կիրառութեան ջրոյ ի մկրտութեան : 46. Պէտք է մկրտութիւնն լինի ջրով : 47. Եւ ի՛նչպէս : 48. Չէ ի Քրիստոնէութենէ ակնկալելի միակեղանակ : 49. Եւ չիք երբէք, զի օրինակէ չհետեւիր : 50. Եւ ոչ մասնաւոր պատուիրանէ : 51. Մինչեւ իսկ Քրիստոսէ տուեալ : 52. Եթէ չէ պատուիրանն ընդհանրական, որպէս չէ Տիտ. Գ. 5. 53. Եւ ոչ ակնարկներն Հոով. 2. եւ Կող. Բ. զլսոց : 54. Քանի որ չցուցուիր կարեւորութիւն եղանակին որ անդ : 55. Կային եւ հեղման ու սրկման եղանակներ : 56. Որպէս էին օրինական «պէսպէս մկրտութիւնք» : 57. Սրսկումն արեան : 58. Հեղումն Հոգւոյ, եւ այլ զիտողութիւնք : Երես 60—76 :

Թ. Ենթակայք մկրտութեան : 59. Հաւատացեալք պարտին մկրտիլ : 60. Եւ մկրտել զորդիս ու զորդեղիրս : 61. Ըստ սկզբան ժառանգականութեան : 62. Ըստ ընտանեկան ուխտի : 63, 64. Չոր պարտի ընել ի զիմաց սերնդոց, եւ որ ընդունելի է Աստուծոյ : 65. Առաքեալք քաջ զիտէին սերնդական զայս կապակցութիւն : 66. Ուստի կը հաստատէին նախնական սկզբունքներն ու խոստումներն : 67. Եւ տանուաէրն ընտանեօք կ'ընդունէին : 68. Մինչեւ իսկ եթէ ծնողաց մի՛ն լինէր հաւատացեալ : 69. Եւ չիք պատճառ որ մանկունք զուրս մնան յեկեղեցւոյ : 70, 71. Որպէս հաստատէ եւ պատմութիւն : Երես 77—96 :

Ժ. Հարկաւորութիւն մկրտութեան մանկանց :

72. Հարկ է մկրտել զորդիս ըստ ուխտին որ ընդ Աբրահամու : 73. Ըստ պարտուց նուիրել զամենայն ինչ ի ծառայութիւն Աստուծոյ . որով եւ կ'ըլլան տրամադիր կատարել զպարտիս, եւ զորդիս չհամարել օտար : 74. Մանկամկրտութիւնն ունի եւ օգուտներ : 75. Զի մկրտութեամբ կ'ըլլան որդիք ուխտի : Երես 97—100 :

ԺԱ. Լուծմունք ատարկութեանց ընդդէմ մանկամկրտութեան : 76. Այն միայն մկրտուելու է որ կըրնայ հաւատալ : Ոչ, Գրիստոս "միայն" չըսեր : 77. Նոյն խօսքին նայելով միայն հրաշագործք մկրտելի են : 78. Եւ արածնութիւն մը մէկուն տալէն չհետեւիր թէ ուրիշը չունի զայն : 79. Հաւատալ, մկրտուել եւ փրկուել չեն անբաժան իրարմէ : 80. Մոլորութեան կը տանի ըսել, թէ ուրիշ խօսք չեմ խառներ : 81. Մանկանց մկրտութեան հրաման եւ օրինակ չկայ : Երկուքն ալ կայ, չարդեւել բաւ է : 82. Մկրտութիւն մեղաց թողութեան եւ փրկութեան համար է : Անհիմն են ասոնք : 83. Հապա մանկունք ինչո՞ւ չեն հաղորդուիր : Զի անչափահաս են : 84. Աւելորդ է եւ անօգուտ մանկամկրտութիւնն : Զէ : 85. Օգուտ չունի մանկանց մկրտութիւնն, զոր չեն գիտեր : Ունի : 86. Մանկունք Աստուծոյ են, պէտք չէ նուիրել : Պէտք է : 87. Ի պատճառս ծնողաց չիք որդուոց օրհնութիւն : Կայ : 88. Անտեղութիւն բանից, թէ Աստուած կ'արգարացունէ զմեզ եւ կը փրկէ եօթն միջոցներով որոց մէջ է նաեւ մկրտութիւնը : 89. Թէ մկրտութիւնը զանց ընողին կամ յանչափահասութեան եւ առանց ընկղման մկրտուողին մեղաց թողութիւն չըլլար, եւ այլն : Երես 101—120 :

Ծանոթութիւն : Որպէս զի միևնոյն բանը կրկինէ պէտք չըլլայ զանազան առթիւ, իրարու վերաբերեալ կամ զիրար լուսաբանող հաստատման թիւերով նշանակեալ են ի փակագծի :



3026

0



«Ազգային գրադարան»



NL0030077

A small blue logo or mark located at the bottom left of the library label.

Q-6664a

7933